



# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐ



**GLOBAL SPC**  
BUSINESS & LEGAL CONSULTING

WORLD TRADE  
ORGANIZATION



ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

The book covers main provisions of the WTO General Agreement on Trade in Services, current state of play of services negotiations, as well as interprets the set of certain questions with the view of promoting services export.

This book was prepared by Global SPC's local and foreign experts:

**Team leader**

Armine Hakobyan, Global SPC General Director,

**Team members**

Kristapor Giragosian, American University, Washington, USA  
Gena Rose Dirani, Michigan University, Michigan, USA  
Marine Manucharyan, Yerevan State University, RA  
Marianna Nikoghosyan, Slavic University, RA

**Design & Layout**

Arshavir Aghajanyan

Գրքում լուսաբանվում են ԱԶԿ Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագրի հիմնահարցեր, պարզաբանվում են մի շարք կոնկրետ հարցեր՝ ծառայությունների արտահանման խթանման նպատակով:

Այս գիրքը պատրաստվել է Գլոբալ Էս-Փի-Սի տեղական և արտասահմանյան փորձագետների մասնակցությամբ.

**Խմբի ղեկավար**

Արմինե Հակոբյան, Գլոբալ Էս-Փի-Սի Գլխավոր Տնօրեն,

**Խմբի անդամներ**

Ջրիստափոր Կիրակոսյան, Ամերիկյան Համալսարան, Վաշինգտոն, ԱՄՆ  
Զենա Ռոզ Դիրանի, Միչիգանի Համալսարան, Միչիգան, ԱՄՆ  
Մարինե Մանուչարյան, Երևանի Պետական Համալսարան, ՀՀ  
Մարիաննա Նիկողոսյան, Սլավոնական Համալսարան, ՀՀ

**Համակարգչային ձևավորում և շարում**

Արշավիր Աղաջանյան

---

Ծառայությունների առևտուր - Ծ-310 Եր.:  
Global SPC, 2008 – 119 էջ:  
ՀՏԴ 339  
ՊՄԴ 65.9(2)8  
Ծ-310  
ISBN 978 – 99941 – 2 – 190 – 8

Բոլոր իրավունքները պաշտպանված են:  
Հարցերով և առաջարկություններով դիմել.  
Գլոբալ Էս-Փի-Սի, Մոսկովյան 24, #1, Երևան, ՀՀ 0002,  
հեռ. (374 10) 52 08 51, էլ-փոստ: info@globalspc.am,  
էլ. կայք: www.globalspc.am

# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐ

Պատրաստել է՝



**GLOBAL SPC**  
BUSINESS & LEGAL CONSULTING

Երևան - 2008

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԱԽԱԲԱՆ</b> .....	<b>i</b>
<b>ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ</b> .....	<b>ii</b>
<b>ԱՅԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>1</b>
<b>ՄԱՍ 1. ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐ</b> .....	<b>1</b>
1.1. Պատմական ակնարկ .....	1
1.2. Հիմնական նպատակներ .....	2
1.3. Ծառայությունների առևտրի սահմանում և մատուցման տեսակներ .....	3
1.4. Գործողության շրջանակներ և կիրառություն .....	5
1.5. Թափանցիկության և «բարեխիղճ կառավարման» պարտավորություններ .....	6
1.6. Ազգերի առավել բարենպաստության մոտեցում .....	7
1.7. Շուկայի մատչելիության և Ազգային մոտեցման պայմանական շտրիում .....	7
<b>ՄԱՍ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԱՍԵՐ</b> .....	<b>9</b>
2.1. Համաձայնագրի կառուցածք .....	9
2.2. Անվերապահ ընդհանուր պարտավորություններ .....	9
2.3. Պայմանական ընդհանուր պարտավորություններ .....	11
2.4. Այլ ընդհանուր դրույթներ .....	12
2.5. Հատուկ պարտավորություններ .....	13
2.6. Հավելվածներ .....	15
<b>ՄԱՍ 3. ՀԱՏՈՒԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑԱՆԿԵՐ</b> .....	<b>17</b>
3.1. Հատուկ պարտավորությունների ժամանակացանկեր .....	17
3.2. Հոդված II-ից (ԱԱԲ) ազատումների ցանկ .....	24
<b>ՄԱՍ 4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	<b>26</b>
4.1. Բանակցությունների ընթացք .....	26
4.2. Հատուկ պարտականությունների շուրջ բանակցություններ .....	26
4.3. Բանակցությունների համար ներկայացված առաջարկություններ .....	28
4.4. Բանակցային լիազորություններ .....	29
4.5. Բանակցությունների հիմնական փուլերը .....	30
4.6. Ընթացիկ իրավիճակ .....	33
<b>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ (ՀԱՐՅԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ)</b> .....	<b>35</b>
<b>ԱՅԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ</b> .....	<b>53</b>
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑԱՆԿ</b> .....	<b>85</b>

## ՆԱԽԱԲԱՆ

Ծառայությունների առևտուրը հանդիսանում է համաշխարհային առևտրի ամենադինամիկ զարգացող ճյուղերից մեկը: Այն տարածվում է բավականին մեծ թվով ոլորտների վրա՝ ընդգրկելով բոլոր միջազգային ծառայությունները, ինչպիսիք են ֆինանսական (բանկեր, ապահովագրություն և այլն), բիզնես (իրավաբանական, առևտրորակական, հաշվապահական, բժշկական, ճարտարապետական, գովազդային, խորհրդատվական, թարգմանչական, հրատարակչային, համակարգչային, գիտահետազոտական, անշարժ գույքի և այլն), կապի, հեռահաղորդակցության, բաշխման, կրթությանն առնչվող, շրջակա միջավայրին առնչվող, առողջապահական և սոցիալական, տրանսպորտային, զբոսաշրջային, մշակութային, սպորտային և այլ ծառայությունները:

ԱՅԿ Ծառայությունների առևտրի մասին գլխավոր համաձայնագիրը ծառայությունների առևտուրը կարգավորող միակ միջազգային իրավական փաստաթուղթն է:

Այս գիրքը նվիրված է ԾԱԳՅ-ի հիմնադրույթների, պահանջների, կիրարկման խնդիրների վերլուծությանը, և մատչելի ու հասկանալի տեսքով ներկայացմանը: Այն հնարավորություն կտա առավել խորացնել գիտելիքները և պատկերացումները ինչպես ԾԱԳՅ-ի խնդիրների և գործնական կիրառման, այնպես էլ ծառայությունների ընթացիկ բանակցությունների մասին:

Գրքի առաջին մասում վերլուծված են ԾԱԳՅ կառուցվածքը, սահմանումները, հիմնական նպատակները, գործողության շրջանակներն ու կիրառությունը, ծառայությունների մատուցման տեսակները, սկզբունքները, թափանցիկության պահանջները, ինչպես նաև ընդհանուր և հատուկ պարտավորությունները: Վերլուծված և լուսաբանված են հատուկ պարտավորություններ ժամանակացանկերը, շուկայի մատչելիության և ազգային մոտեցման ապահովման հարցերը, տրված է այդ ժամանակացանկերը կարդալու և հասկանալու ուղեցույցը, ինչպես նաև ներկայացված է ԱՅԿ շրջանակներում ընթացող ծառայությունների առևտրի բանակցությունների ընթացիկ իրավիճակն ու զարգացումները:

Երկրորդ մասում ներկայացված են ծառայությունների առևտրի խթանմանը աջակցելու նպատակող գործարարների համար հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցերի պատասխանները: Մասնավորապես, անդրադարձ է կատարվում արտահանում իրականացնելու որոշման կայացման, արտահանման նախապատրաստման, շուկաների ընտրության, ծառայությունների արտահանման ռազմավարության, շուկաների մշակութային տարբերությունների և այլ հարցերին, ինչպես նաև արտահանման խթանման նյութերին և ձևերին:

Երրորդ մասը պարունակում է ԾԱԳՅ ներքո Հայաստանի Հանրապետություն հատուկ պարտավորությունների ժամանակացանկը, ինչպես նաև ԱԱԲ մոտեցումից ազատումների ցանկը:

Չորրորդ մասում ներկայացված է ԱՅԿ Ծառայությունների առևտրի մասին գլխավոր համաձայնագիրը:

Գիրքը նախատեսված է ՀՀ նախարարությունների և պետական կառավարման այլ մարմինների աշխատակիցների, ՀՀ-ում ԱՅԿ հարցման կետերի, գործարարների, ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ինչպես նաև հետաքրքրվող այլ խավերի համար:

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

<b>ԱՅԿ</b>	Առևտրի համաշխարհային կազմակերպություն
<b>ԾԱԳՅ</b>	Ծառայությունների առևտրի մասին գլխավոր համաձայնագիր
<b>Համաձայնագիր</b>	Ծառայությունների առևտրի մասին գլխավոր համաձայնագիր
<b>ՄԱԳՅ</b>	Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագիր (1947թ.)
<b>Անդամ</b>	Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ երկիր
<b>Ժամանակացանկ</b>	ԱՅԿ անդամ երկրի հատուկ պարտավորությունների ժամանակացանկ
<b>ԾԱԽ</b>	Ծառայությունների առևտրի խորհուրդ
<b>ԱԱԲ</b>	Ազգերի առավել բարենպաստության
<b>ԱՄՅ</b>	Արժույթի միջազգային հիմնադրամ
<b>ԴՁՕ</b>	Դոհայի զարգացման օրակարգ
<b>Ուղեցույց</b>	«Ուղեցույցներ ու ընթացակարգեր ծառայությունների առևտրի բանակցությունների համար» փաստաթուղթ
<b>ԱԲՅ</b>	Առևտրային բանակցությունների հանձնախումբ
<b>CPC</b>	Միավորված ազգերի կազմակերպության Ապրանքների կենտրոնական դասակարգման համակարգ

# ԱՅԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

◆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐ

◆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԱՍԵՐ

◆ ՀԱՏՈՒԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑԱՆԿԵՐ

◆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՄԱՍ 1. ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## 1.1. Պատմական ակնարկ

Ծառայությունների առևտրի մասին գլխավոր համաձայնագիրը ծառայությունների առևտրին առնչվող առաջին բազմակողմ առևտրային համաձայնագիրն է և ծառայությունների առևտուրը կարգավորող կանոնների միակ միջազգային փաստաթուղթը: Այն ուժի մեջ է մտել 1995թ-ի հունվարին՝ առևտրային բանակցությունների Ուրուգվայի փուլի (1986-1993թթ.) արդյունքում՝ բազմակողմ առևտրային համակարգը ծառայությունների ոլորտի վրա տարածելու նպատակով: ԾԱԳՀ-ն ընդունվեց 1947թ. Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրի ուժի մեջ մտնելուց գրեթե կես դար հետո:

Առևտրի համաշխարհային կազմակերպության բոլոր անդամները հանդիսանում են ԾԱԳՀ-ի ստորագրող կողմ և ստանձնել են դրանից բխող պարտավորություններ: Միևնույն ժամանակ, համաձայն ԾԱԳՀ-ի Հոդված XIX-ի՝ նպատակ ունենալով հասնելու ազատականացման ավելի ու ավելի բարձր մակարդակի, ԱՀԿ անդամ երկրները պարտավորվել են իրականացնել ծառայությունների վերաբերյալ բանակցությունների հետագա փուլեր: Նման առաջին փուլը սկիզբ է առել 2000թ-ի հունվարին:

Ծառայությունների ոլորտում առևտրային համաձայնագրի անհրաժեշտության հարցը վաղուց էր ծագել: Ծառայությունների լայն հատվածները՝ հյուրանոցներից ու ռեստորաններից մինչև անհատական ծառայություններ, երկրների համար ավանդաբար համարվել են ներքին ծառայություններ, որոնք չէին ներառվում առևտրային քաղաքականության հայեցակարգերի և գործիքների իրականացման մեջ: Ծառայությունների այլ ոլորտները, սկսած երկաթուղային տրանսպորտից մինչև հեռահաղորդակցությունը, դիտվել են որպես պետական սեփականության և հսկողության դասական ոլորտներ՝ իրենց ենթակառուցվածքային կարևորությամբ և առկայության ընկալմամբ որոշ դեպքերում վերածվելով բնական մենաշնորհի: Ոլորտների երրորդ կարևոր խումբը՝ ներառյալ առողջապահությունը, կրթությունը և հիմնական ապահովագրական ծառայությունները, շատ երկրներում գտնվում էին պետությունների պատասխանատվության ներքո և, հաշվի առնելով նրանց կարևորությունը սոցիալական ինտեգրման և տարածաշրջանային միասնության համար, պետք է կարգավորվեին և չթողնվեին շուկայի դժվարություններին:

Այնուամենայնիվ, ծառայությունների որոշ ոլորտներ, մասնավորապես միջազգային ֆինանսները և ծովային տրանսպորտը, դարձել էին վեր բաց են եղել՝ հանդիսանալով ապրանքների առևտրի բնական լրացում: Մյուս խոշոր ոլորտները վերջին տասնամյակներին կրել են եական տեխնիկական և կանոնակարգային փոփոխություններ՝ բացելով դրանք մասնավոր առևտրային մասնակցության համար և նվազեցնելով, կամ շատ հաճախ վերացնելով շուկայի մատչելիության առկա խոչընդոտները: Ինտերնետի ի հայտ գալը օգնել է ձևավորել միջազգային վաճառքի ենթակա ապրանքատեսակների շրջանակ՝ էլեկտրոնային բանկային ծառայություններից մինչև հեռա-առողջապահություն և հեռակա ուսուցում, որոնք ընդամենը երկու տասնամյակ առաջ անհայտ էին: Դրանց շնորհիվ վերացրել են հեռավորության հետ կապված առևտրային խոչընդոտները, որոնցից տուժում էին հեռավոր վայրերում գտնվող մատակարարները և սպառողները (համապատասխան ոլորտները ներառում են մասնագիտացված ծառայություններ, ինչպիսիք են ծրագրավորումն ու խորհրդատվական ծառայությունները): Մեծ թվով պետություններ աստիճանաբար իրենց նախկին մենաշնորհային ոլորտները տեղափոխում են մրցակցային դաշտ:

Եվ երբ 1980-ական թթ.-ի կեսերին ծագեց ծառայությունների ոլորտը կարգավորող կանոնները բազմակողմ առևտրային շրջանակներն ընդգրկելու մտահղացումը, մի շարք երկրներ բավականին հոռետես և անգամ ընդհամադիր դիրք զբաղեցրին: Նրանց կարծիքով, նման համաձայնագիրը կարող էր թուլացնել երկրների՝ ազգային քաղաքականության նպատակներին հետապնդելու կարողությունը և սահմանափակել իրենց իրավական լիազորությունները: Մշակված Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագիրը, սակայն, ապահովում է ճկունության բարձր աստիճան՝ ինչպես կանոնների ձևակերպման, այնպես էլ շուկաների մատչելիության հետ կապված պարտավորությունների տեսանկյունից:

Այժմ ծառայությունները դարձել են համաշխարհային առևտրի ամենադինամիկ հատվածներից մեկը: 1980թ.-ից ի վեր ծառայությունների համաշխարհային առևտուրն ավելի արագ է աճում, քան ապրանքներիը: Անտեսելով լայն տարածում գտած սխալ պատկերացումները՝ կարելի է փաստել, որ զարգացող երկրները մեծապես մասնակցել են այդ աճին:

## 1.2. Հիմնական նպատակներ

Ինչպես նշված է Համաձայնագրի նախաբանում, ԾԱԳՀ-ն նպատակ ունի նպաստել առևտրի ընդլայնմանը «թափանցիկության և աստիճանական ազատականացման պայմաններում և որպես միջոց խթանելու բոլոր առևտրային գործընկերների տնտեսական աճն ու զարգացող երկրների զարգացումը»: Առևտրի ընդլայնումը ինքնանպատակ չէ, ինչպես պնդում են որոշ քննադատներ, այլ գործիք է տնտեսական աճին և զարգացմանը խթանելու համար: Չարգացման հետ կապը այնուհետև նախաբանում ամրագրված է հստակ հղումներով՝ նպաստել ծառայությունների առևտրում զարգացող երկրների աճող մասնակցությանն ու դրանց ծառայությունների արտահանման ընդլայնմանը, հատուկ ուշադրություն դարձնել առավել թույլ զարգացած երկրների լուրջ դժվարություններին՝ դրանց տնտեսական առանձնահատուկ իրավիճակի և զարգացման, առևտրի ու ֆինանսական կարիքների տեսակետից:

ԾԱԳՀ-ի ներդրումը ծառայությունների համաշխարհային առևտրի ոլորտում հիմնվում է երկու հենասյունների վրա.

1. համապատասխան կանոնների, ընթացակարգերի և կանոնակարգերի աճող թափանցիկության և կանխատեսելիության ապահովում,
2. բազմակողմ բանակցությունների հաջորդական փուլերի միջոցով առևտրի աստիճանական ազատականացման խթանում:

Համաձայնագրի դրույթները նպատակաուղղված են ծառայությունների առևտրի շուկայի մատչելիությանը նպաստելուն և օտարերկրյա ծառայությունների և ծառայություններ մատուցողների նկատմամբ ազգային մոտեցումը տարածելուն: Համաձայնագիրը հստակորեն ճանաչում է ազգային քաղաքականության նպատակներին հասնելու համար իրենց տարածքներում ծառայությունների մատուցումը կարգավորելու և դրա վերաբերյալ նոր կանոնակարգեր ընդունելու ԱՀԿ անդամ երկրների իրավունքները և, մասնավորապես, զարգացող երկրների՝ այդ իրավունքից օգտվելու առանձնահատուկ պահանջները:

### 1.3. Ծառայությունների առևտրի սահմանում և մատուցման տեսակներ

Ծառայությունների առևտրի սահմանումը, համաձայն ԾԱԳՅ-ի, կախված է գործարքի կատարման ժամանակ ծառայություն մատուցողի և սպառողի գտնվելու վայրից: Համաձայնագիրը սահմանում է ծառայությունների չորս տեսակ: Համաձայն Յոթերորդ 1:2՝ ԾԱԳՅ-ն տարածվում է այն ծառայությունների վրա, որոնք մատուցվում են.

- ◆ մի Անդամի տարածքից որևէ այլ Անդամի տարածք («1-ին տեսակ» - «անդրսահմանային մատուցում»)
- ◆ մի Անդամի տարածքում որևէ այլ Անդամի ծառայություն սպառողին («2-րդ տեսակ» - «սպառում արտասահմանում»)
- ◆ մի Անդամի ծառայություն մատուցողի կողմից՝ որևէ այլ Անդամի տարածքում առևտրային ներկայության միջոցով («3-րդ տեսակ» - «առևտրային ներկայություն»)
- ◆ մի Անդամի ծառայություն մատուցողի կողմից՝ որևէ այլ Անդամի տարածքում Անդամի ֆիզիկական անձանց ներկայության միջոցով («4-րդ տեսակ - «ֆիզիկական անձանց ներկայություն»):

Աղյուսակ Ա-ում տրված են մատուցման չորս տեսակների օրինակներ:

Մատուցման այս չորս ձևերի միջև կարող են ձևավորվել առևտրային կապեր: Օրինակ, օտարերկրյա կազմակերպությունը, որը հիմնադրվել է Ա երկրում 3-րդ տեսակի ներքո, կարող է աշխատանքի ընդունել Բ երկրի քաղաքացիներին (4-րդ տեսակ)՝ Բ և Գ երկրներ ծառայությունների անդրսահմանային մատուցում իրականացնելու համար և այլն: Նմանապես, աշխատանքային այցերը Ա երկիր (4-րդ տեսակ) կարող են առաջացնել դեպի մյուս երկիր անդրսահմանային մատուցումների անհրաժեշտություն (1-ին տեսակ) կամ ընդարձակել տեղում հիմնված գրասենյակի հնարավորությունները (3-րդ տեսակ):

## **Աղյուսակ Ա. Մատուցման չորս տեսակների օրինակներ**

### **1-ին տեսակ. Աղբսահմանային մատուցում**

Ա երկրում գտնվող սպառողը ստանում է ծառայություններ արտասահմանից՝ իր հեռահաղորդակցային կամ փոստային ենթակառուցվածքի միջոցով: Ծառայությունների նման մատուցումները կարող են ներառել խորհրդատվություն, մարկեթինգային հետազոտությունների զեկույցներ, հեռա-բժշկական խորհրդատվություն, հեռակա ուսուցում կամ ճարտարագիտական նախագծեր:

### **2-րդ տեսակ. Սպառում արտասահմանում**

Ա երկրի քաղաքացիները ուղևորվում են արտասահման որպես զբոսաշրջիկներ, ուսանողներ կամ հիվանդներ՝ համապատասխան ծառայություններից օգտվելու նպատակով:

### **3-րդ տեսակ. Առևտրային ներկայություն**

Ծառայությունը մատուցվում է Ա երկրի տարածքում հիմնված օտարերկրյա ընկերության սեփականություն հանդիսացող և նրա հսկողության տակ գտնվող մասնաճյուղի, դուստր ընկերության կամ ներկայացուցչության միջոցով (բանկ, հյուրանոցային համալիր, շինարարական կազմակերպություն և այլն):

### **4-րդ տեսակ. Ֆիզիկական անձանց ներկայություն**

Օտարերկրյա քաղաքացին Ա երկրի տարածքում մատուցում է ծառայություն որպես ինքնուրույն մատուցող (օրինակ՝ խորհրդատու, առողջապահության բնագավառի աշխատակից) կամ որպես ծառայություններ մատուցող ընկերության աշխատակից (օրինակ՝ խորհրդատվական ընկերություն, հիվանդանոց, շինարարական ընկերություն):

## 1.4 Գործողության շրջանակներ և կիրառություն

Հոդված 1:1-ը սահմանում է, որ ԾԱԳՀ-ն տարածվում է Անդամների կիրառած այն միջոցների նկատմամբ, որոնք ազդում են ծառայությունների առևտրի վրա: Տվյալ համատեքստում նշանակություն չունի՝ արդյոք միջոցները ձեռնարկել են կենտրոնական, տարածաշրջանային կամ տեղական կառավարություններն ու իրավասու մարմինները, թե ոչ պետական մարմինները՝ իրենց տրված լիազորությունները իրականացնելիս:

Համապատասխան սահմանումը տարածվում է ցանկացած միջոցի վրա՝ լինի դա օրենքի, կանոնի, կանոնակարգման, ընթացակարգի, որոշման, վարչական գործողության կամ ցանկացած այլ տեսքով, որոնք՝

- ◆ վերաբերում են ծառայության գնմանը, վճարմանը կամ օգտագործմանը
- ◆ ծառայության մատուցման կապակցությամբ վերաբերում են այն ծառայությունների մատչելիությանը և օգտագործմանը, որոնք այդ Անդամները պահանջում են առաջարկել հասարակությանը
- ◆ վերաբերում են անդամ երկրի տարածքում ծառայություն մատուցելու նպատակով մեկ այլ Անդամների անձանց ներկայությանը՝ ներառյալ առևտրային ներկայությունը:

Այս սահմանումն էականորեն ավելի ընդարձակ է, քան կարող էին ենթադրել առևտրի ոլորտի հետ առնչություն ունեցող պետական պաշտոնյաները: Այդ առումով կարևոր է ողջ անձնակազմին ծանոթացնել ԾԱԳՀ-ի հիմնական դրույթներին՝ կանխարգելելու նրանց կողմից չկանխամտածված կերպով Համաձայնագրի պարտավորություններին հակառակ գործելուց և օժտելու նրանց առևտրային գործընկերների հետ արդյունավետ բանակցելու հնարավորությամբ:

Իրենց պարտավորությունները ձևավորելու նպատակով ԱՀԿ անդամ երկրները օգտագործում են դասակարգման համակարգ, որը բաղկացած է 12 հիմնական ծառայություններից.

- ◆ Բիզնես ծառայություններ (ներառյալ մասնագիտական ծառայություններն ու համակարգչային ծառայությունները)
- ◆ Կապի ծառայություններ
- ◆ Շինարարական և առնչվող ճարտարագիտական ծառայություններ
- ◆ Բաշխման ծառայություններ
- ◆ Կրթության առնչվող ծառայություններ
- ◆ Շրջակա միջավայրին առնչվող ծառայություններ
- ◆ Ֆինանսական ծառայություններ (ներառյալ ապահովագրությունն ու բանկերը)
- ◆ Առողջապահական և սոցիալական ծառայություններ
- ◆ Չքուսաշրջային և առնչվող ծառայություններ
- ◆ Ժամանցային, մշակութային և սպորտային ծառայություններ
- ◆ Տրանսպորտային ծառայություններ
- ◆ Որևէ տեղ չընդգրկված այլ ծառայություններ

Այս ոլորտները հետագայում բաժանվում են 160 ենթաոլորտների: Այս դասակարգման համակարգի ներքո ցանկացած ոլորտ կարող է ընդգրկվել Անդամի հատուկ պարտավորությունների ժամանակացանկի մեջ՝ ներառելով շուկայի մատչելիության և ազգային մոտեցման սահմանափակումները: ԾԱԳՅ-ի ներքո յուրաքանչյուր Անդամ ձևավորում է այդպիսի ժամանակացանկ:

Գոյություն ունի միայն մեկ ոլորտին հատուկ բացառություն, որը դուրս է մտնում Համաձայնագրի սպառիչ գործողությունից: ԾԱԳՅ-ի Օդային փոխադրման ծառայությունների մասին հավելվածի համաձայն, Համաձայնագիրը կիրառվում է այն միջոցների նկատմամբ, որոնք ազդում են օդանավերի վերանորոգման և սպասարկման ծառայությունների, օդային փոխադրման ծառայությունների վաճառքի և շուկայահանման կամ համակարգչային պատվիրման համակարգի ծառայությունների վրա: Համաձայնագիրը չի կիրառվում այն միջոցների նկատմամբ, որոնք ազդում են՝ թույլատրված երթևեկության իրավունքների վրա կամ այն ծառայությունների վրա, որոնք ուղղակիորեն վերաբերում են երթևեկության իրավունքից օգտվելուն:

Մյուս ամբողջական բացառությունը կիրառվում է այն ծառայությունների նկատմամբ, որոնք մատուցվում են կառավարական իրավասություններն իրականացնելիս (Հոդված I:3(բ)): Ըստ համապատասխան սահմանման, դրանք այդ ծառայություններն են, որոնք «մատուցվում են ոչ առևտրային հիմունքներով և ոչ էլ մեկ կամ մի քանի ծառայություններ մատուցողների հետ մրցակցությամբ» (Հոդված I:3(գ)): Մասնավորապես, դրանց մեջ ներառում են ոստիկանությունը, հրշեջ ծառայությունը, դրամավարկային գործունեությունը, պարտադիր սոցիալական ապահովագրությունը, հարկային և մաքսային կառավարումը:

## **1.5. Թափանցիկության և «բարեխիղճ կառավարման» պարտավորություններ**

Համաձայնագրին առնչություն ունեցող կանոնների և կանոնակարգերի վերաբերյալ բավարար և ամբողջական տեղեկատվության առկայությունը խիստ կարևոր է համաձայնագրի արդյունավետ կիրառման համար: Հոդված III-ը ապահովում է, որ Անդամները շտապ կարգով հրապարակեն ընդհանուր կիրառության բոլոր այն միջոցները, որոնք առնչվում են ԾԱԳՅ-ի գործողությանը կամ ազդում են դրա վրա: Բացի այդ, Անդամները պարտավոր են առնվազն տարին մեկ անգամ Ծառայությունների առևտրի խորհրդին տեղեկացնել բոլոր իրավական և կանոնակարգման փոփոխությունների մասին, որոնք զգալի ազդեցություն ունեն այն ոլորտների առևտրի վրա, որտեղ հատուկ պարտավորություններ են ստանձնվել: Անդամներից պահանջվում է նաև ստեղծել հարցման կետեր, որոնք համապատասխան պահանջի դեպքում այլ Անդամներին կտրամադրեն համապատասխան տեղեկատվություն: Ամեն դեպքում, գաղտնի տեղեկատվության բացահայտման պահանջ գոյություն չունի (Հոդված III<sup>bis</sup>):

Հաշվի առնելով պետության խիստ ներգրավվածությունը ծառայությունների մի շարք շուկաներում (տարբեր պատճառներով՝ ներառյալ սոցիալական քաղաքականության նպատակները կամ բնական մենաշնորհների առկայությունը), Համաձայնագիրը փորձում է երաշխավորել, որ համապատասխան միջոցները չեն վնասում ընդհանուր պարտավորություններին, ինչպիսիք են Ազգերի առավել բարենպաստության մոտեցումը կամ առանձին ոլորտներում հատուկ պարտավորությունները: Այսպիսով, յուրաքանչյուր Անդամ պետք է ապահովի, որ այն ոլորտներում, որտեղ հատուկ պարտավորություններ են ստանձնվել, ծառայությունների առևտրի վրա ազդող ընդհանուր կիրառման միջոցներն իրականացվեն պատշաճ, անաչառ և անկողմնակալ ձևով (Հոդված VI:1): Բոլոր ոլորտների ծառայություններ մատուցողները

պետք է հնարավորություն ունենան օգտագործել ազգային ատյանները կամ ընթացակարգերը՝ ծառայությունների առևտրի վրա ազդեցություն ունեցող վարչական որոշումների բողոքարկման կամ վերաքննության անցկացման համար:

## 1.6. Ազգերի առավել բարենպաստության մոտեցում

Ազգերի առավել բարենպաստության մոտեցումը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծված բազմակողմ առևտրային համակարգի անկյունաքարն է: Այն փորձում է ուժի վրա հիմնված քաղաքականությունների տարածայնություններն և աղճատումները փոխարինել օրենքի վրա հիմնված երաշխիքներով, որտեղ առևտրային իրավունքները կախված չեն անհատական մասնակիցների տնտեսական և քաղաքական ազդեցությունից: Մատչելիության լավագույն պայմանները, որոնք տրամադրվել են մի որևէ երկրի, ինքնաբերաբար պետք է տարածվեն համակարգի մյուս երկրների վրա: Դա հնարավորություն է տալիս յուրաքանչյուրին, առանց լրացուցիչ բանակցությունների, օգտվելու այն զիջումներից, որոնք համաձայնեցվել են խոշոր առևտրային գործընկերների միջև երկարատև բանակցությունների արդյունքում:

Այսպիսով, արտոնություններ մեկի համար՝ նշանակում է արտոնություններ բոլորի համար: ԱԱԲ մոտեցումը ենթադրում է հավասար և ոչ խտրական մոտեցում երկրի բոլոր առևտրային գործընկերների նկատմամբ: Յուրաքանչյուր անդամ երկիր որևէ այլ անդամ երկրի ծառայություններին կամ ծառայություն մատուցողներին անհապաղ և անվերապահորեն տրամադրում է ոչ պակաս բարենպաստ մոտեցում և պայմաններ, քան այն, որը նա տրամադրում է ցանկացած այլ երկրի ծառայություններին և ծառայություն մատուցողներին:

ԾԱԳՅ-ի համատեքստում ԱԱԲ պարտավորությունը կիրառելի է ցանկացած միջոցի հանդեպ, որն ազդում է Համաձայնագրի կիրառության ցանկացած ոլորտում ծառայությունների առևտրի վրա՝ անկախ նրանից, թե հատուկ պարտավորություններ ստանձնվել են, թե ոչ: Բացառությունները կարող են համաձայնեցվել Համաձայնագրին անդամակցության ժամանակ (անդամակցող երկրների համար՝ անդամակցության օրվա դրությամբ): Դրանք պարունակվում են երկրների ժամանակացանկերում, և նրանց տևողությունը չի կարող գերազանցել 10 տարին:

## 1.7. Շուկայի մատչելիության և Ազգային մոտեցման պայմանական շնորհում

ԾԱԳՅ-ն շատ ճկուն համաձայնագիր է, որը թույլ է տալիս յուրաքանչյուր Անդամի հարմարեցնել շուկայի մատչելիության պայմանները և ըստ ոլորտների նախանշված իր նպատակների և սահմանափակումների իրականացումը: Այս համատեքստում կարևոր են իրավական պարտավորությունների երկու խումբ՝ շուկայի մատչելիություն և ազգային մոտեցում: Ինչպես արդեն նշվել է, Անդամները ազատ են ընտրելու ոլորտները և ընդգրկելու դրանք իրենց հատուկ պարտավորությունների ժամանակացանկերում, որոնցով նրանք ստանձնում են պարտավորություններ ծառայությունների մատուցման չորս տեսակներով: Ավելին, սահմանափակումները կարող են կցվել պարտավորություններին՝ շուկայի լիարժեք մատչելիության և/կամ ազգային մոտեցման հետ անհամատեղելի միջոցներ կիրառելու իրավունք իրենց վերապահելու նպատակով:

ԾԱԳՅ-ի Յոդված XVI-ում սահմանված շուկայի մատչելիության դրույթները ընդգրկում են սահմանափակումների վեց տեսակ, որոնք չեն կարող պահպանվել Անդամի կողմից՝ շուկայի մատչելիության սահմանափակումների բացակայության դեպքում: Այդ սահմանափակումները վերաբերվում են՝

- (ա) ծառայություն մատուցողների քանակին,
- (բ) ծառայությանը վերաբերող գործարքների կամ ունեցվածքի արժեքին,
- (գ) ծառայությանը վերաբերող գործողությունների թվին կամ ծառայության արդյունքի քանակին,
- (դ) ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց քանակին,
- (ե) իրավաբանական անձի կամ համատեղ ձեռնարկության տեսակին,
- (զ) օտարերկրյա կապիտալի մասնակցությանը:

Այս միջոցները, բացառությամբ (ե) և (զ) կետերի, միշտ չէ որ խտրական են: Այսինքն, դրանք կարող են ազդել ինչպես հայրենական, այնպես էլ օտարերկրյա ծառայությունների կամ ծառայություն մատուցողների վրա:

**Ազգային մոտեցումը** (Յոդված XVII) ենթադրում է այն բոլոր խտրական միջոցների բացակայություն, որոնք կարող են փոփոխել մրցակցության պայմանները՝ ի վնաս օտարերկրյա ծառայությունների կամ ծառայություն մատուցողների: Կրկին, սահմանափակումները կարող են թվարկված լինել՝ ապահովելու համար այնպիսի անհամատեղելի միջոցների ընդգրկումը, ինչպիսիք են, օրինակ, խտրական լրավճարները, հարկային միջոցներն, ռեզիդենտության պահանջները և այլն: Կարևորն այն է, որ օտարերկրյա ծառայություններին և ծառայություններ մատուցողներին շնորհվում են մրցակցային հավասար հնարավորություններ:

ԾԱԳՅ-ի ներքո պարտավորությունների նպատակն է ապահովել առևտրի պայմանների կայունությունն ու կանխատեսելիությունը: Ինչևէ, պարտավորությունները զսպաշապիկ չեն: Դրանք կարող են վերաբանակցվել՝ տուժող առևտրային գործընկերներին հնարավորություն տալով հասնելու փոխհատուցողական կարգավորման (Յոդված XXI): Այստեղ կան նաև հատուկ դրույթներ, որոնք հնարավորություն են տալիս հատկանշված հանգամանքների պարագայում ճկուն արձագանքներ տալու: Օրինակ, Յոդվածի XIV-ի ներքո անդամ երկրները կարող են ձեռնարկել միջոցներ, որոնք անհրաժեշտ են որոշակի գերակա քաղաքականության շահերի համար, ներառյալ՝ հասարակական բարքերի կամ մարդկանց, կենդանիների, բույսերի կյանքի կամ առողջության պաշտպանությունը: Այնուամենայնիվ, այդպիսի միջոցները չպետք է բերեն կամայական կամ չարդարացված խտրականության կամ հանդիսանան առևտրի համար քողարկված սահմանափակում: Եթե առկա են երկրի անվտանգության էական շահեր, ապա Յոդված XIV<sup>bis</sup>-ը տալիս է դրանց կիրառման ծածկույթը: Յոդվածը XII-ը հնարավորություն է տալիս վճարային հաշվեկշիռը պաշտպանելու նպատակով ներմուծել ժամանակավոր սահմանափակումներ, իսկ ֆինանսական ծառայությունների ոլորտում այսպես կոչված շրջահայաց կարգավորման լուծումները թույլ են տալիս Անդամներին ձեռնարկել միջոցներ՝ իրենց ֆինանսական համակարգի ամբողջականությունն ու կայունությունը ապահովելու համար (ֆինանսական ծառայությունների մասին հավելված, կետ 2):

## ՄԱՍ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԱՍԵՐ

### 2.1. Համաձայնագրի կառուցածք

ԾԱԳՅ-ն բաղկացած է Համաձայնագրի տեքստից (ներածություն, 6 գլխից կազմված 29 հոդվածներ (տես աղյուսակ Բ) և ԱՅԿ յուրաքանչյուր անդամի հատուկ պարտավորությունների ժամանակացանկերից:

#### Աղյուսակ Բ. ԾԱԳՅ-ի դրույթները

##### **Գլուխ I** (Հոդված I)

Ուրվագծում է Համաձայնագրի շրջանակները, ոլորտների ընգրկումը և սահմանում է ծառայությունների առևտրի հասկացությունը:

##### **Գլուխ II** (Հոդվածներ II-XV)

Սահմանում է Անդամների ընդհանուր պարտավորությունները, որոնք կիրառվում են կամ պայմանականորեն (կախված հատուկ պարտավորությունների առկայությունից) կամ անվերապահ՝ բոլոր ոլորտների նկատմամբ:

##### **Գլուխ III** (Հոդվածներ XVI-XVIII)

Հատկորոշում է շուկայի մատչելիության ու ազգային մոտեցման հատուկ պարտավորությունների, ինչպես նաև ժամանակացանկում ընգրկված ոլորտներում Անդամի կողմից ստանձնած ցանկացած այլ պարտավորությունների շրջանակները:

##### **Գլուխ IV** (Հոդվածներ XIX-XXI)

Ապահովում է ծառայությունների շուրջ բանակցությունների հետագա փուլերի շրջանակը, հատկորոշում է ժամանակացանկի կառուցվածքը և պարտավորությունների փոփոխման կամ հանման համար անհրաժեշտ ընթացակարգերը:

##### **Գլուխ V** (Հոդվածներ XXII-XXVI)

Պարզաբանում է սահմանակարգային և ընթացակարգային խնդիրները՝ ներառյալ ԾԱԳՅ-ի Ծառայությունների առևտրի խորհրդի մանդատը, և վեճերի կարգավորման միջոցները:

##### **Գլուխ VI** (Հոդվածներ XXVII-XXIX)

Ներառում է եզրափակիչ դրույթները և սահմանումները:

### 2.2. Անվերապահ ընդհանուր պարտավորություններ

ԱՅԿ յուրաքանչյուր անդամ երկիր պարտավոր է հարգել որոշակի ընդհանուր պարտավորություններ՝ անկախ հատուկ պարտավորությունների առկայությունից: Դրանք են՝ ազգերի առավել բարենպաստության մոտեցումը (Հոդված II), թափանցիկությանը վերաբերող որոշ հիմնադրույթները (Հոդված III), իրավական պաշտպանության միջոցների հասանելիությունը (Հոդված VI:2), մենաշնորհների և ծառայությունների բացառիկ մատուցողների համապատասխանությունը ԱԱԲ պարտավորությանը (Հոդված VIII:1), գործարար գործելակերպերի վերաբերյալ խորհրդակցությունները (Հոդված IX) և առևտրին վնասող լրավճարների վերաբերյալ խորհրդակցությունները (Հոդված XV:2): Որոշ դեպքերում նույն հոդվածը ներառում է ինչպես անվերապահ, այնպես էլ պայմանական պարտավորություններ:

## **Ազգերի առավել բարենպաստության մոտեցում**

Ինչպես արդեն նշվել է, ԱԱԲ մոտեցումը կիրառվում է բոլոր ոլորտների և ԱՅԿ բոլոր անդամ երկրների նկատմամբ: Ինչևէ, ԾԱԳՅ Հոդված II-ից ազատումների մասին հավելվածի ներքո Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու պահից (կամ անդամակցության օրվանից) Անդամները հնարավորություն ունեն ստանալու ազատումներ տաս տարվանից ոչ ավել ժամկետով: Ավելի քան 80 Անդամներ ներկայումս պահպանում են այդպիսի ազատումներ, որոնց հիմնական մասը նախատեսված է պահպանելու առևտրային արտոնությունները տարածաշրջանային մակարդակով: Իսկ հիմնական ընդգրկված ոլորտներն են՝ ճանապարհային փոխադրումները, տեսալսողական ծառայությունները, ծովային փոխադրումները և բանկային ծառայությունները:

## **Թափանցիկություն**

ԾԱԳՅ Հոդվածի III ներքո յուրաքանչյուր Անդամ պետք է շտապ կարգով հրապարակի «ընդհանուր կիրառության բոլոր համապատասխան միջոցները», որոնք առնչվում են Համաձայնագրի գործողությանը կամ ազդում են նրա վրա: Անդամները պետք է նաև Ծառայությունների առևտրի խորհրդին ծանուցեն նոր կամ փոփոխված օրենքների, կանոնակարգերի կամ վարչական ուղեցույցերի մասին, որոնք զգալի ազդեցություն ունեն հատուկ պարտավորություններով ընդգրկված ոլորտների ծառայությունների առևտրի վրա:

Ընդհանուր պարտավորությունների ներքո Անդամները պարտավոր են նաև ստեղծել հարցման կետեր այլ Անդամների հարցումներին պատասխանելու նպատակով: Ավելին, համաձայն Հոդված IV:2-ի, զարգացած երկրները (հնարավոր չափով նաև այլ Անդամները) ստեղծում են հաղորդակցման կետեր, որոնց կարող են դիմել զարգացող երկրների ծառայություն մատուցողները՝ համապատասխան տեղեկություններ ստանալու համար:

## **Ներքին կանոնակարգում**

Հոդված VI: 2-ի ներքո, Անդամները պարտավոր են ունենալ ներքին մեխանիզմներ («դատական, միջնորդական կամ վարչական ատյաններ կամ ընթացակարգեր»), որոնք կարող են օգտագործել ծառայություններ մատուցողները՝ իրավական հատուցումներ ստանալու նպատակով: Ծառայություններ մատուցող տուժող պահանջով այս մեխանիզմները պետք է ապահովեն «վարչական որոշումների շտապ վերաքննության անցկացում և արդարացված լինելու դեպքում դրանց նկատմամբ համապատասխան պաշտպանական միջոցների կիրառում»:

## **Մենաշնորհներ**

Համաձայնագրի Հոդված VIII:1-ի համաձայն յուրաքանչյուր Անդամ պետք է ապահովի, որ իր տարածքում մենաշնորհները կամ բացառիկ ծառայություններ մատուցողները չգործեն այնպիսի ձևով, որը չի համապատասխանում ԱԱԲ պարտավորությանը և այլ հատուկ պարտավորություններին: Հոդված XXVIII-ի «ը» կետն իր հերթին սահմանում է, որ «մենաշնորհային մատուցողն» այն ձեռնարկությունն է, որը պաշտոնապես կամ գործնականորեն հաստատվել է համապատասխան Անդամի կողմից՝ որպես այդ երկրի տարածքի համապատասխան շուկայում ծառայության բացառիկ մատուցող:

## **Գործարար գործելակերպեր**

Չողված IX-ը վերաբերվում է ծառայություններ մատուցողների որոշ գործարար գործելակերպերին, որոնք այլ են, քան մենաշնորհին ամնչվող Չողված VIII-ի տակ ընկնողները, և կարող են կաշկանդել մրցակցությունը և դրանով իսկ սահմանափակել առևտուրը: Չողվածը յուրաքանչյուր Անդամից պահանջում է ցանկացած այլ Անդամի կողմից պահանջի դեպքում սկսել խորհրդակցություններ նրա հետ՝ նման գործելակերպերը վերացնելու նպատակով:

## **Լրավճարներ**

Անդամները, որոնք համարում են, որ վնասակար ազդեցության են ենթարկվել այլ Անդամների կողմից շնորհված լրավճարների հետևանքով, կարող են, համաձայն Չողված XV:2-ի, պահանջել խորհրդակցություն այդ երկրի հետ: Վերջինիս կողմից այդ պահանջների նկատմամբ պետք է բարյացակամ վերաբերմունք ցուցաբերվի:

## **2.3. Պայմանական ընդհանուր պարտավորություններ**

Ընդհանուր պարտավորությունների երկրորդ տեսակը վերաբերվում է միայն այն ոլորտներին, որոնք ընդգրկված են Անդամների պարտավորությունների ժամանակացանկերում:

## **Ներքին կանոնակարգում**

Համաձայն Չողված VI:1-ի՝ ծառայությունների առևտրի վրա ազդող ընդհանուր կիրառման միջոցները պետք է իրականացվեն պատշաճ, անաչառ և անկողմնակալ ձևով: Եթե պարտավորությունների ժամանակացանկում ներառված ծառայության մատուցման համար թույլտվություն է պահանջվում, Անդամները պետք է դրա իրականացման վերաբերյալ որոշում կայացնեն պատշաճ ժամանակահատվածի ընթացքում (Չողված VI:3):

Չողված VI: 5-ը սահմանում է, որ Անդամի կողմից ստանձնած հատուկ պարտավորությունները չեն վերացվում կամ նվազեցվում այնպիսի կանոնակարգային պահանջների միջոցով (լիցենզավորման և որակավորման պահանջներ, տեխնիկական համօրինակներ), որոնք չեն հիմնվում անաչառության և թափանցիկության չափանիշների վրա կամ շատ ավելի բարդ են, քան անհրաժեշտ է ծառայության որակի երաշխավորման համար:

Չողված VI: 4-ը լիազորում է ցանկացած անհրաժեշտ հարցի վերաբերյալ վարել բանակցություններ, որոնք, հաշվի առնելով վերը նշված նկատառումները, ներքին կանոնակարգումները կպաշտպանեն ծառայությունների առևտրի ավելորդ խոչընդոտների առաջացումից:

Համաձայն Չողված VI: 6-ի այն Անդամները, որոնք հատուկ պարտավորություններ են ստանձնել մասնագիտական ծառայությունների վերաբերյալ, պետք է նախատեսեն ընթացակարգեր՝ այլ Անդամների մասնագետների իրազեկությունը ստուգելու նպատակով:



Թեև տնտեսական միասնացման համաձայնագրերը կոչված են նպաստելու կողմերի միջև առևտրի խթանմանը, այնուամենայնիվ Յոթերորդի V-ը նաև պահանջում է, որ համապատասխան ոլորտներում ծառայությունների առևտրի արգելքների ընդհանուր մակարդակը չպետք է բարձրացվի համաձայնագրին չմիացած որևէ այլ Անդամի նկատմամբ:

Յոթերորդի V<sup>bis</sup>-ը նմանատիպ իրավական դաշտ է ապահովում աշխատանքի շուկաների միասնացման համաձայնագրերի համար: Հիմնական պայմանն այն է, որ նման համաձայնագրի կողմերի քաղաքացիները ազատվում են բնակությանը և աշխատանքի թույլտվությանը վերաբերող պահանջներից:

## **Ճանաչում**

ԾԱԳՀ-ի Յոթերորդի VII-ը Անդամներին հնարավորություն է տալիս համօրինակներ կիրառելիս կամ լիցենզիաներ, հավաստագրեր շնորհելիս ճանաչել ծառայություն մատուցողի արտասահմանում ձեռք բերված կրթությունը կամ այլ որակավորումները: Դա կարող է արվել ինքնուրույնաբար կամ առնչվող համապատասխան երկրի հետ համաձայնագրի հիման վրա: Ինչևէ, ճանաչումը չպետք է լինի բացառիկ, այսինքն, այլ շահագրգիռ անդամ երկրները պետք է հնարավորություն ունենան բնակացելու համաձայնագրին անդամակցության համար, կամ էլ, ինքնուրույնաբար ճանաչման դեպքում, ցույց տալու, որ իրենց պահանջները ևս պետք է ճանաչվեն:

ԾԱԳՀ Յոթերորդի VII:3-ը պահանջում է, որ ճանաչումը չպետք է շնորհվի այնպիսի եղանակով, որը առևտրային գործընկերների միջև խտրականություն դնելու միջոց կամ ծառայությունների առևտրի համար քողարկված սահմանափակում չհանդիսանա:

## **Բացառություններ**

ԾԱԳՀ-ի Գլուխ II-ը (Ընդհանուր պարտավորություններ և հիմնադրույթներ) ներառում է որոշակի հանգամանքների դեպքում բացառությունների դեպքեր: Անկախ ԾԱԳՀ համապատասխան պարտավորություններից՝ Անդամները կարող են հատուկ հանգամանքների դեպքում սահմանափակել առևտուրը՝ մասնավորապես, վճարային հաշվեկշռի հետ կապված լուրջ դժվարությունների դեպքերում (Յոթերորդի XII), կամ առողջության պաշտպանության կամ հասարակական քաղաքականության հարցերում (Յոթերորդի XIV) կամ անվտանգության էական շահերը ապահովելու նկատառումով (Յոթերորդի XIV<sup>bis</sup>):

## **2.5. Հատուկ պարտավորություններ**

Ի լրումն վերը նշված ընդհանուր պարտավորությունների, յուրաքանչյուր Անդամ պարտավոր է որոշակի ոլորտներում ստանձնել շուկայի մատչելիության (Յոթերորդի XVI) և ազգային մոտեցման (Յոթերորդի XVII) հատուկ պարտավորություններ: Համապատասխան ոլորտները, ինչպես նաև ցանկացած շեղում Յոթերորդի XVI-ի և XVII-ի համապատասխան պարտավորություններից, պետք է նշվեն երկրի հատուկ պարտավորությունների ժամանակացանկում:

Յոթերորդի XVI-ը և XVII-ը պարտավորում են Անդամներին օտարերկրյա ծառայություններին և ծառայություններ մատուցողներին տրամադրել ոչ պակաս բարենպաստ մոտեցում, քան այն, որ նշված է իրենց ժամանակացանկերի համապատասխան սյունակներում: Պարտավոր

րությունները երաշխավորում են մոտեցման նվազագույն մակարդակները, սակայն չեն արգելում Անդամներին գործնականում լինելու ավելի բաց (կամ պակաս խտրական):

### **Լրացուցիչ պարտավորություններ**

Անդամները կարող են ստանձնել լրացուցիչ պարտավորություններ այն միջոցների հետ կապված, որոնք չեն ընկնում Համաձայնագրի շուկայի մատչելիության և ազգային մոտեցման դրույթների տակ: Այդ պարտավորությունները կարող են վերաբերել համօրինակների, որակավորումների կամ լիցենզիաների օգտագործման հարցերին (Յոթերորդ Զեմբլի 17): Մասնավորապես, լրացուցիչ պարտավորությունները չափազանց հաճախ են հանդիպում հեռահաղորդակցության ոլորտում, որտեղ դրանք կիրառվել են շուրջ 60 անդամ երկրների կողմից՝ իրենց ժամանակացանկերում որոշակի մրցակցային և կարգավորման (ինքնակարգավորման) հիմնադրույթներ ներառելու համար: Այս հիմնադրույթները շարադրված են համապատասխան փաստաթղթում, որը մշակվել է անդամ երկրների ոչ պաշտոնական խմբի կողմից՝ այս ոլորտին վերաբերող երկար բանակցությունների ընթացքում:

### **Ժամանակացանկերի փոփոխում**

ԵԱԳՀ Յոթերորդ Զեմբլի 17-ը սահմանում է կանոնների շրջանակը՝ Անդամների պարտավորությունների ժամանակացանկում ներառված ցանկացած պարտավորության փոփոխման կամ հանման համար: Վերջինս կարող է իրականացվել պարտավորությունն ուժի մեջ մտնելու օրվանից երեք տարի անցնելուց հետո ցանկացած ժամանակ: Այսպիսով, Անդամները հնարավորություն ունեն հարմարեցնել իրենց պարտավորությունները նոր հանգամանքներին կամ համապատասխան քաղաքականությանը: Իսկ առաջարկվող փոփոխությունը պետք է ծանուցվի ոչ ուշ, քան երեք ամիս առաջ:

Պարտավորության փոփոխության կամ հանման պատճառով տուժած այլ Անդամի պահանջով սկսվում են բանակցություններ՝ նպատակ ունենալով փոխհատուցողական կարգավորման վերաբերյալ համաձայնության հասնելու: Այդ բանակցությունների ժամանակ պետք է ձգտել պահպանել առևտրի համար ոչ պակաս բարենպաստ փոխշահավետ պարտավորությունների ընդհանուր մակարդակ, քան այն, որը կար նախքան բանակցությունները:

Փոխհատուցման կարգավորումները պետք է կատարվեն ԱԱԲ հիմունքով: Եթե բանակցությունները ձախողվում են, ապա Յոթերորդ Զեմբլի 17-ը թույլ է տալիս դիմել միջնորդ դատարանին: Եթե դատարանը գտնի, որ փոխհատուցումը պարտադիր է, ապա պարտավորություններում առաջարկվող փոփոխությունները չեն կարող կիրառման մեջ դրվել՝ մինչև չկատարվեն փոխհատուցման կարգավորումները: Եթե պարտավորությունները փոփոխող երկիրը անտեսում է միջնորդ դատարանի եզրակացությունները, ապա տուժող երկրները իրավունք ունեն այդ փոփոխող Անդամի նկատմամբ պարտավորությունների հանման միջոցով կիրառել պատասխան համարժեք միջոցներ:

## 2.6. Հավելվածներ

### Հոդված II-ից ազատումների մասին հավելված

Հոդված II-ից ազատումների մասին հավելվածը հատկորոշում է այն պայմանները, որոնց համաձայն Անդամը կարող է ազատվել ԾԱԳՀ-ի Հոդված II-ով սահմանված իր պարտավորություններից (ԱԱԲ մոտեցում): Անդամները կարող են ազատվել ԱԱԲ մոտեցումից Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահին կամ ԱՀԿ-ին անդամակցելու ժամանակ: Բացի այս դեպքերից, ԱԱԲ մոտեցման նվազեցումը կարող է շնորհվել միայն ազատումների ձևով՝ ԱՀԿ ստեղծման Մարաբեշի համաձայնագրի ներքո: Ծառայությունների առևտրի խորհուրդը վերաքննում է ԱԱԲ բոլոր ազատումները հիևզ տարվանից հետո: Տաս տարի հետո դրանք պետք է սկզբունքորեն դադարեցվեն: Ավելին, ազատումները պետք է (վերա)բանակցվեն ծառայությունների բանակցությունների յուրաքանչյուր փուլում:

### Համաձայնագրի համաձայն ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց տեղաշարժի մասին հավելված

Համաձայնագրի համաձայն ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց տեղաշարժի մասին հավելվածը վերաբերում է այլ Անդամի տարածքում ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց ժամանակավոր տեղաշարժին (ի տարբերություն իրավաբանական անձանց): Պարզ է, որ Համաձայնագիրը չի տարածվում այն միջոցների վրա, որոնք վերաբերում են մշտական հիմունքով քաղաքացիությանը, բնակվելուն, աշխատանքին կամ արտասահմանում աշխատանք փնտրող մարդկանց: Որպես արդյունք, Համաձայնագիրը տարածվում է միայն արտասահմանում ծառայություններ մատուցող անձանց կացությանը: Հավելվածը նաև սահմանում է, որ Անդամները կարող են կանոնակարգել ֆիզիկական անձանց մուտքը իրենց տարածք և սահմանել սահմանային վերահսկողություն, եթե այդ միջոցները չեն կիրառվում այնպիսի ձևով, որ վերացնեն կամ նվազեցնեն հատուկ պարտավորության պայմանների համաձայն որևէ Անդամի հասնող օգուտները:

### Օդային փոխադրումներ ծառայությունների մասին հավելված

Օդային փոխադրման ծառայությունների մասին հավելվածը հատկորոշում է, որ Համաձայնագիրը չի կիրառվում ոչ երթևեկության իրավունքների նկատմամբ, ոչ էլ այն ծառայությունների նկատմամբ, որոնք ուղղակիորեն վերաբերում են այդ իրավունքից օգտվելուն: ԾԱԳՀ-ն տարածվում է այս ոլորտի միայն երեք գործունեությունների վրա՝

- օդանավերի վերանորոգման և սպասարկման ծառայություններ
- օդային փոխադրման ծառայությունների վաճառքի և շուկայահանում
- համակարգչային պատվիրման համակարգի ծառայություններ:

Հավելվածը նաև հատկորոշում է, որ այս դրույթները պետք է վերաքննվեն առնվազն յուրաքանչյուր հինգ տարին մեկ՝ նպատակ ունենալով քննարկել ԾԱԳՀ-ի ավելի լայն կիրառում օդային փոխադրման ոլորտում: Այս գործընթացը ընթացքի մեջ է:

## **Ֆինանսական ծառայությունների մասին հավելված**

Ֆինանսական ծառայությունների մասին հավելվածը ներառում է մի շարք սահմանումներ և ֆինանսական ծառայությունների մանրամասն ցանկ, որոնք Անդամները օգտագործել են այս ոլորտում իրենց հատուկ պարտավորությունների ժամանակացանկերում: Ի լրումն այս սահմանումների, կարևոր է, որ որևէ Անդամների չի արգելվում միջոցներ նախաձեռնել շրջահայաց կարգավորման դրդապատճառներով: Անդամները կարող են պահպանել ԾԱԳՅ-ի դրույթների հետ անհամապատասխան միջոցներ՝ ներդրողների, ավանդատուների, ապահովագրատերերի պաշտպանության կամ ֆինանսական համակարգի ամբողջականության ու կայունության ապահովման նպատակով: Ինչևէ, այդպիսի միջոցները չեն կարող օգտագործվել որպես Անդամի ԾԱԳՅ-ի ներքո ստանձնած պարտավորություններից կամ պարտականություններից խուսափելու միջոց: Հավելվածի ոլորտին հատուկ այլ դրույթներից են անհատ հաճախորդի մասին տեղեկատվության ու այլ գաղտնի կամ մասնավոր տեղեկատվության պաշտպանությունը և վեճերի կարգավորման մասին կետը, որը սահմանում է ֆինանսական ծառայությունների բնագավառում վեճերի քննախմբերին առնչվող փորձագիտության ապահովման անհրաժեշտությունը: Վեջապես, շրջահայաց կարգավորման միջոցները պետք է ճանաչվեն երկրների միջև:

## **Հեռահաղորդակցությունների մասին հավելված**

Հեռահաղորդակցությունների մասին հավելվածը գործ ունի այս ոլորտի հետ, որպես ծառայությունների այլ ոլորտներին աջակցող ոլորտ: Այլ ոլորտների առևտրային գործունեության համար հեռահաղորդակցության ծառայությունների մատչելիությունը գործնականում վճարական դեր է խաղում: Հավելվածը յուրաքանչյուր Անդամի պարտավորում է ցանկացած այլ Անդամի ծառայություններ մատուցողների համար ապահովել խելամիտ և ոչ խտրական մուտք դեպի հանրային հեռահաղորդակցությունների ցանցեր և ծառայություններ՝ իր ժամանակացանկում ընդգրկված ծառայությունները մատուցելու համար:

Այլոց թվում, Հավելվածը սահմանում է հեռահաղորդակցությունների օտարերկրյա սպառողների իրավունքները այն ոլորտում, որտեղ ստանձնված են պարտավորություններ: Դրանք ներառում են հանրային ցանցի հետ կապվելու համար անհրաժեշտ սարքավորումների գրնման կամ վարձակալման իրավունքները, մասնավոր շղթագծերը հանրային համակարգի կամ այլ շղթագծերի հետ կապ հաստատելը և տեղեկատվության փոխանցման համար հանրային ցանցի օգտագործման իրավունքը:

Չարգացող երկրները կարող են շեղվել Հավելվածի պարտավորություններից, եթե դա անհրաժեշտ է ներքին ենթակառուցվածքի և ծառայության կարողությունների հզորացման համար: Դա կարող է արվել ծառայությունների մուտքի և օգտագործման վրա խելամիտ պայմաններ դնելու միջոցով: Այդ պայմանները հատկանշվում են Անդամի ժամանակացանկում: Հավելվածը զարգացող երկրների համար ներառում է նաև թափանցիկության և տեխնիկական համագործակցության վերաբերյալ դրույթներ:

# ՄԱՍ 3. ՀԱՏՈՒԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑԱՆԿԵՐ ԵՎ ՀՈԴՎԱԾ II-ԻՑ (ԱԱԲ) ԱԶԱՏՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

## 3.1. Հատուկ պարտավորությունների ժամանակացանկեր

Հատուկ պարտավորությունների ժամանակացանկերը հանդիսանում են ծառայությունների ոլորտում շուկայի մատչելիության և ազգային մոտեցման տրամադրման պարտավորություններ ժամանակացանկերում նշված պայմանների համաձայն: Պարտավորություններ ստանձնելիս, պետությունը ամրագրում է շուկայի մատչելիության և ազգային մոտեցման որոշակի մակարդակներ և պարտավորվում է չձեռնարկել որևէ նոր միջոց, որը կարող է սահմանափակել շուկա մուտք գործելու հնարավորությունները կամ ծառայության գործողությունը: Հատուկ պարտավորությունները, որոնք ունեն նույն բովանդակությունը, ինչ և մաքսատուրքերի ամրագրումը, երաշխիք են հանդիսանում այլ երկրների տնտեսվարող սուբյեկտների համար, որ շուկա մուտք գործելու և գործունեություն ծավալելու պայմանները չեն փոփոխվի՝ ի վնաս իրենց: Պարտավորությունները կարելի է հանել կամ փոփոխել՝ տուժող երկրների հետ փոխհատուցման կարգավորումների համաձայնեցումից հետո: Արգելվում է հանել կամ փոփոխել պարտավորությունները՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից երեք տարվա ընթացքում: Պարտավորությունների այդպիսի փոփոխությունները չպետք է վնասեն Ազգերի առավել բարենպաստության մոտեցման կիրառմանը: Այնուամենայնիվ, պարտավորությունները կարող են լրացվել կամ բարելավվել ցանկացած ժամանակ:

Բոլոր ազգային ժամանակացանկերը համապատասխանեցված են օրինակելի ձևին, որի նպատակն է հեշտացնել համեմատական վերլուծությունը: Ժամանակացանկը համեմատաբար բարդ փաստաթուղթ է, որն ավելի դժվար է ընթերցել, քան ՄԱԳՀ-ի մաքսատուրքերի ժամանակացանկը: Եթե մաքսատուրքերի ժամանակացանկն յուրաքանչյուր ապրանքատեսակի համար սահմանում է մեկական մաքսատուրքի դրույթաչափ, ապա ծառայությունների յուրաքանչյուր առաջարկվող ոլորտի կամ ենթաօլորտի համար ժամանակացանկում նշվում է շուկայի մատչելիության կամ ազգային մոտեցման ցանկացած սահմանափակում՝ մատուցման չորս տեսակների տեսանկյունից: Հետևապես, պարտավորությունը բաղկացած է ութ կետերից, որոնցում նշվում է շուկայի մատչելիության կամ ազգային մոտեցման սահմանափակումների առկայությունը կամ բացակայությունը ծառայությունների մատուցման յուրաքանչյուր տեսակի համար:

Ծառայությունների ժամանակացանկն իրենից ներկայացնում է բառասյուն աղյուսակ: Առաջին սյունակը ներառում է է պարտավորության առարկա հանդիսացող ոլորտը կամ ենթաօլորտը: Երկրորդ սյունակը պարունակում է շուկայի մատչելիությանը վերաբերող սահմանափակումները, որոնք ընկնում են ԾԱԳՀ-ի Հոդված XVI:2-ում նշված սահմանափակումների վեց տարատեսակների մեջ: Երրորդ սյունակը պարունակում է ազգային մոտեցման սահմանափակումները որոնք Ալֆան կցանկանա ԾԱԳՀ-ի Հոդված XVII-ի համաձայն: Չորրորդ սյունակի մեջ ԾԱԳՀ-ի Հոդված XVIII-ի համաձայն Անդամը կարող է ներառել ցանկացած այլ լրացուցիչ պարտավորություն, որը չի վերաբերում շուկայի մատչելիությանը կամ ազգային մոտեցմանը:

Ժամանակացանկերում պարտավորությունները բաժանված են երկու բաժինների: Առաջին բաժնում հորիզոնական պարտավորություններն են, այսինքն՝ այնտեղ նշված պարտավորությունները տարածվում են ժամանակացանկում ներառված բոլոր ոլորտների վրա: Դրանք հաճախ հղվում են մատուցման որոշակի տեսակի, մասնավորապես՝ առևտրային ներկայությանը կամ ֆիզիկական անձանց ներկայությանը: Հետևաբար ոլորտին վերաբերող հատուկ

պարտավորությունները որոշելիս պետք է հաշվի առնել նաև հորիզոնական գրառումները: Ժամանակացանկի երկրորդ բաժնում թվարկվում են այն պարտավորությունները, որոնք վերաբերում են որոշակի ոլորտի կամ ենթաօլորտի ծառայությունների առևտրին:

Այսպիսով, ժամանակացանկը յուրաքանչյուր Անդամի համար հանդիսանում է իրավական գործիք, որը ոլորտ առ ոլորտ, ծառայությունների մատուցման տեսակ առ տեսակ ներկայացնում է այն պարտավորությունները, որոնք Անդամը ստանձնել է ընդհանուր և ոլորտային բանակցությունների արդյունքում:

### 3.1.1. Ոլորտներ կամ ենթաօլորտներ - Առաջին սյունակ

Այս սյունը ներառում է հատուկ պարտավորությունների առարկա հանդիսացող ոլորտի, ենթաօլորտի կամ գործունեության մանրամասն նկարագիրը: Հաշվի առնելով այլ մասնակիցների հետ բանակցությունների արդյունքները՝ Անդամներն ազատ են որոշելու այն ոլորտները, ենթաօլորտները կամ գործունեությունները, որոնք նրանք կթվարկեն իրենց ժամանակացանկերում և միայն դրանց նկատմամբ կարող են կիրառվել պարտավորությունները:

Այսպիսով, Անդամները ստանձնում են պարտավորություններ միայն այն ոլորտներում և ենթաօլորտներում, որոնք ներառված են իրենց ժամանակացանկերում:

Ժամանակացանկերի մեծամասնությունում, ոլորտների թվարկման կարգը համապատասխանում է ՄԱԳՀ Զարտուղարության դասակարգմանը, որը պարունակում է 12 ընդգրկուն ոլորտներ:

Դրանք են՝

1. **Բիզնես ծառայություններ** - մասնագիտական, համակարգչային և առնչվող, գիտահետազոտական, անշարժ գույքի, վարձույթային/լիզինգային և այլ բիզնես ծառայություններ:
2. **Կապի ծառայություններ** - փոստային, սուբհանդակային, հեռահաղորդակցության, տեսաձայնային և այլ ծառայություններ:
3. **Շինարարական և առնչվող ճարտարագիտական ծառայություններ** - ընդհանուր շինարարական աշխատանքներ շենքերի և քաղաքացիական ճարտարագիտության համար, տեղադրում, հավաքում և կառույցի ավարտում:
4. **Բաշխման ծառայություններ** - կոմիսիոն գործակալներ, մեծածախ և մանրածախ առևտուր, ֆրանչայզինգ:
5. **Կրթության առնչվող ծառայություններ** - տարրական, միջնակարգ, բարձրագույն և չափահասների կրթություն:
6. **Շրջակա միջավայրի առնչվող ծառայություններ** - կոյուղի, թափոնների հեռացում, սանիտարական ու նմանաբնույթ ծառայություններ:
7. **Ֆինանսական ծառայություններ** - ապահովագրական, բանկային և այլ ֆինանսական ծառայություններ:
8. **Առողջապահական և սոցիալական ծառայություններ** - հիվանդանոցային այլ առողջապահական, սոցիալական ծառայություններ:

**9. Չբոսաշրջային և առնչվող ծառայություններ** - հյուրանոցային ու ռեստորանային, ճամփորդական գործակալությունների ու զբոսաշրջային օպերատորների, զբոսավարի ծառայություններ:

**10. Ժամանցային, մշակութային և սպորտային ծառայություններ** – ժամանցային, գրադարանային, արհիվային, թանգարանային, սպորտային ծառայություններ:

**11. Տրանսպորտային ծառայություններ** - ծովային, օդային, երկաթուղային, ճանապարհային, խողովակատար և օժանդակ տրանսպորտային ծառայություններ:

## **12. Այլ ծառայություններ**

Հիմնականում ոլորտային գրանցումները իրականացվում են Միավորված ազգերի կազմակերպության Ապրանքի կենտրոնական դասակարգման համակարգի հիման վրա, որը տալիս է մանրամասն նկարագրություն թվարկված յուրաքանչյուր ոլորտի և ենթաօլորտի ծառայությունների մասին, և որի վրա էլ հիմնված է Քարտուղարության ցանկը:

### **3.1.2. Շուկայի մատչելիություն (Հոդված XVI) - Երկրորդ սյունակ**

Երբ Անդամը ոլորտում կամ ենթաօլորտում ստանձնում է պարտավորություն, նա նշում է, թե մատուցման յուրաքանչյուր տեսակի համար ինչ սահմանափակումներ է կիրառում շուկայի մատչելիության մասով: Յուրաքանչյուր Անդամի ծառայությունների և ծառայություններ մատուցողների համար երաշխավորվում է մյուս Անդամի շուկայի մատչելիություն ոչ պակաս բարենպաստ պայմաններ, քան սահմանված է վերջինիս ժամանակացանկում: Հոդված XVI-ը Անդամներից պահանջում է վերացնել իրենց ժամանակացանկերում ներառված ոլորտների համար չթվարկված բոլոր քանակական սահմանափակումները:

Քանակական սահմանափակումները բաժանվում են վեց տեսակների՝

1. ծառայություն մատուցողների քանակ,
2. ծառայությանը վերաբերող գործարքների կամ ունեցվածքի արժեք,
3. ծառայությանը վերաբերող գործողությունների թիվ կամ ծառայության արդյունքի քանակ,
4. աշխատող ֆիզիկական անձանց քանակ,
5. իրավաբանական անձանց որոշակի տեսակներ,
6. օտարերկրյա կապիտալի մասնակցություն:

### **3.1.3. Ազգային մոտեցում (Հոդված XVII) - Երրորդ սյունակ**

Ցանկացած Անդամի ծառայություններին և ծառայություններ մատուցողներին տրամադրվում են ոչ պակաս բարենպաստ մրցակցային հնարավորություններ, քան այն, որը այդ Անդամը տրամադրում է սեփական նմանատիպ ծառայություններին և ծառայություններ մատուցողներին՝ բացառությամբ վերջինիս ժամանակացանկում նշված դեպքերի: Ազգային մոտեցումը ենթադրում է այն բոլոր խտրական միջոցների բացակայություն, որոնք կարող են փոփոխել մրցակցության պայմանները՝ ի վնաս օտարերկրյա ծառայությունների կամ ծառայություն մատուցողների:

Այսպիսով, Անդամը, որը ցանկություն ունի պահպանելու ազգային մոտեցման որևէ սահմանափակում, այսինքն կիրառելու միջոցներ, որոնց արդյունքում արտասահմանյան ծառայություններն ու ծառայություն մատուցողները պակաս բարենպաստ մոտեցում կունենան, պետք է նշի այդ սահմանափակումները ժամանակացանկի երրորդ սյունակում:

### **3.1.4. Լրացուցիչ պարտավորություններ (Յոդված XVIII) - Չորրորդ սյունակ**

Անդամները հնարավորություն ունեն իրենց ժամանակացանկերում ստանձնելու լրացուցիչ պարտավորություններ այն միջոցների համար, որոնք չեն ծածկվում Յոդվածներ XVI-ով կամ XVII-ով, այսինքն շուկայի մատչելիությանը և ազգային մոտեցմանը վերաբերող Յամաձայնագրի դրույթներով, օրինակ որակավորումները, համօրինակները, լիցենզիաները : Այս սյունակը ներկայացնում է պարտավորությունների դրական ցանկ, այսինքն չի սահմանում լրացուցիչ սահմանափակումներ :

### **3.1.5. Ինչպես են պարտավորությունները գրանցվում ժամանակացանկում**


Ժամանակացանկերում կատարված գրանցումները, որոնք հանդիսանում են Անդամի ժամանակացանկի իրավականորեն ամրագրված պարտավորությունները, մատնանշում են շուկայի մատչելիության ու ազգային մոտեցման սահմանափակումների առկայությունը կամ բացակայությունը ժամանակացանկում թվարկված ոլորտի, ենթաօլորտի կամ գործունեության համար՝ ծառայությունների մատուցման չորս տեսակներից յուրաքանչյուրի վերաբերյալ: Յետևյալ դեպքերում գրանցումների համար օգտագործվում է միօրինակ տերմինաբանություն՝

- ◆ Այն դեպքում, երբ տվյալ ոլորտում կամ մատուցման տեսակում չկա շուկայի մատչելիության կամ ազգային մոտեցման որևէ սահմանափակում, ապա գրանցվում է «Չկան»: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ երբ ժամանակացանկի երկրորդ՝ ոլորտին վերաբերող պարտավորությունների բաժնում օգտագործվում է «Չկան» տերմինը, դա նշանակում է, որ չկա սահմանափակում հատուկ այդ ոլորտում: Ինչպես արդեն վերևում նշվել է, պետք է միշտ հիշել, որ ժամանակացանկի առաջին բաժնում կարող են լինել համապատասխան հորիզոնական սահմանափակումներ:
- ◆ Ժամանակացանկում առկա բոլոր պարտավորությունները սահմանափակ են, քանի դեռ այլ կերպ չեն որակվել: Այն դեպքում, երբ Անդամը ցանկանում է տվյալ ոլորտում կամ մատուցման տեսակում ազատ լինել շուկայի մատչելիության կամ ազգային մոտեցման հետ անհամատեղելի միջոցներ կիրառելու կամ պահպանելու համար, ապա համապատասխան տեղում գրանցվում է «Անսահմանափակ» տերմինը:
- ◆ Որոշ դեպքերում մատուցման որոշակի տեսակը (օրինակ, կամրջաշինության ծառայության անդրսահմանային մատուցումը) չի կարող լինել տեխնիկապես հնարավոր կամ իրատեսական: Այս դեպքերում օգտագործվում է «Անսահմանափակ\*» տերմինը՝ հաճախ բացատրական նշագրմամբ՝ «Անսահմանափակ է տեխնիկապես անիրականալի լինելու պատճառով»:

Շատ դեպքերում ժամանակացանկերում կարող են հանդիպել սահմանափակ պարտավորությունների տեքստային բացատրություններ, որոնք մատնանշում են շուկայի մատչելիության կամ ազգային մոտեցման սահմանափակումները: Այդպիսի գրառումները չեն օգտագործում միօրինակ տերմինաբանություն, սակայն հիմնված են երկու ընդհանուր մոտեցումներից մեկի վրա:

- ◆ Գրառումները ցանկի համապատասխան մասում նկարագրում են սահմանափակման բնույթը՝ մատնանշելով այն տարրերը, որոնք այն դարձնում են անհամատեղելի ԾԱԳՅ-ի Յոդվածներ XVI-ի և XVII-ի հետ:
- ◆ Որոշ դեպքերում Անդամների կողմից նախընտրվում է մատնանշել սահմանափակ պարտավորությունները նկարագրելով, թե ինչ են նրանք այլ ինչ են առաջարկում, քան նրանց կողմից պահպանվող սահմանափակումները: Նման մոտեցումը հաճախ օգտագործվում է մատնանշելու համար ծառայությունների մատուցող օտարերկրյա ֆիզիկական անձանց որոշակի խմբի համար նախատեսված շուկայի մատչելիության հնարավորությունները:

# Հատուկ պարտավորությունների ժամանակացանկ



### 3.1.6. Լրացուցիչ դրույթներ

Ժամանակացանկում արված նշումներն ու մուտքագրումները պետք է սահմանազատեն այն միջոցները, որոնք անհամատեղելի են ՃԱԳՅ-ի շուկայի մատչելիությանը կամ ազգային մոտեցման դրույթներին, ինչպես նաև ցանկացած լրացուցիչ պարտավորությունների հետ, որոնք անդամ երկիրը կարող է ստանձնել համաձայն ՅՊՎԿՅ XVIII-ի:

Ժամանակացանկերը չպետք է իրավական հիմք ապահովեն ՃԱԳՅ-ի այլ դրույթների հետ անհամատեղելի միջոցներին՝ ներառյալ ՅՊՎԿՅ II-ով սահմանված ԱԱԲ պահանջը կամ ՅՊՎԿՅ VI:1-ի ներքո ընդհանուր կիրառման միջոցների պատշաճ, անաչառ և անկողմնակալ իրականացման պարտավորությունը: ԱԲԱ մոտեցմանը չհամապատասխանող միջոցները, որոնք չեն ներառվել համապատասխան ցանկում, պետք է ճանաչվեն անվավեր: Նույնը վերաբերում է ՅՊՎԿՅ VI-ին հակասող միջոցներին: Առևտրին խոչընդոտող երևույթները, որոնք կապված են ոչ խտրական բնույթի ներքին կանոնակարգման հետ՝ որակավորման պահանջներ ուսուցիչների, իրավաբանների կամ հաշվապահների համար, նվազագույն կապիտալի պահանջներ բանկերի համար և այլն, ինքնին չեն հանդիսանում Ժամանակացանկում ներառվելու առարկա: Ինչպես արդեն նշվել է, ՅՊՎԿՅ-ի ազդեցությանը հստակ տարբերություն է դնում՝ մի կողմից, հատուկ պարտավորությունների ներքո առևտրի ազատականացման, մյուս կողմից՝ որակի և այլ ընդունելի քաղաքականության նպատակներով ներքին կանոնակարգման միջև: Նույն նկատառումներով, կարիք չկա Ժամանակացանկում ներառել մատչելիության սահմանափակումներ՝ ինչպիսիք են զինամթերքի կամ պոռնոգրաֆիկ և այլ նման նյութերի առևտրի արգելքը, որոնց նկատմամբ տարածվում են ՅՊՎԿՅ XIV-ի Ընդհանուր բացառությունները կամ այն խելամիտ միջոցները, որոնք նպատակ ունեն երաշխավորելու ֆինանսական ծառայությունների ոլորտի կայունությունն ու միասնացումը:

### 3.1.7. Ժամանակացանկի օրինակ (երկիր ԱՎՖա)

Ադյուսակ Գ-ում ներկայացված է մի հատված ԱՎՖա երկրի հատուկ պարտավորությունների ժամանակացանկից : ԱՎՖայի հորիզոնական պարտավորությունները ըստ ծառայությունների մատուցման 3-րդ տեսակի, ազգային մոտեցման սկզբունքի ներքո իրավունք են վերապահում ԱՎՖային մերժել օտարերկրացիների կողմից հողի սեփականությունը: Ծառայությունների մատուցման 4-րդ տեսակի ներքո, ԱՎՖան իրավասու է արգելել ծառայությունների մատուցման նպատակով ցանկացած օտարերկրացու մուտքը իր տարածք՝ բացառությամբ անձանց որոշակի հատկորոշված խմբերի: Մանրածախ առևտրի ոլորտում պարտավորությունների շրջանակը բավականին լայն է ըստ ծառայությունների մատուցման տեսակների: Առավել ազատական են 2-րդ տեսակի (սպառում արտասահմանում) պարտավորությունները, որտեղ ԱՎՖան ամրագրել է չկիրառել որևէ միջոց ՅՊՎԿՅ XVI-ի կամ XVII-ի ներքո, որոնք կարող են իր ռեզիդենտներին խանգարել արտասահմանում առևտուր անելուց:

## Աղյուսակ 9. Հատուկ պարտավորությունների ժամանակացանկի օրինակ (ԱՎՖա)

Մատուցման տեսակներ՝ 1) Անդրսահմանային մատուցում; 2) Սպառում արտասահմանում; 3) Առևտրային ներկայություն; 4) Ֆիզիկական անձանց ներկայություն

Ոլորտ կամ ենթաօլորտ	Շուկայի մատչելիության սահմանափակումներ	Ազգային մոտեցման սահմանափակումներ	Լրացուցիչ պարտավորություններ
<b>1. ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
ԺԱՄԱՆԱԿԱՑԱՆ-ԿՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԲՈԼՈՐ ՈԼՈՐՏՆԵՐ	4) Անսահմանափակ, բացի. ա) այլ մասնաճյուղից գործուղված գործադիր ղեկավարների և մասնագետների ժամանակավոր ներկայությունը և բ) ծառայությունների վաճառքը բանակցելու նպատակով ծառայություններ մատուցողի ներկայացուցիչների ներկայությունը մինչև 90 օր ժամկետով:	3) Օտարերկրացիների կողմից հող ձեռք բերելու համար պահանջվում է թույլտվություն:	
<b>2. ՈԼՈՐՏԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՏՈՒԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
4. ԲԱՇԽՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ  9. Մանրածախ առևտրի ծառայություններ (CPC 631, 632)	(1) Անսահմանափակ (բացառությամբ՝ փոստային պատվերի համար՝ Չկան) (2) Չկան (3) Օտարերկրյա մասնակցությունը սահմանափակված է 51%-ով (4) Անսահմանափակ՝ բացառությամբ հորիզոնական բաժնում նշվածներից:	(1) Անսահմանափակ (բացառությամբ՝ փոստային պատվերի համար՝ Չկան) (2) Չկան (3) Ներդրումների իրականացումը հասանելի է միայն այն ընկերություններին, որոնք վերահսկվում են ԱՎՖայի քաղաքացիների կողմից: (4) Անսահմանափակ	

### 3.2. Հոդված II-ից (ԱԱԲ) ազատումների ցանկ

Ազգերի առավել բարենպաստության մոտեցումը հանդիսանում է ընդհանուր պարտավորություն, որը կիրառվում է ծառայությունների առևտրի վրա ազդող բոլոր միջոցների նկատմամբ: Բայց և այնպես, համաձայնեցված է, որ ԱԱԲ պարտավորությանը չհամապատասխանող որոշ միջոցներ կարող են պահպանվել սկզբունքորեն ոչ ավել, քան տաս տարի ժամկետով՝ ամենաքիչը յուրաքանչյուր հինգ տարի հետո վերանայման պայմանով: Անդամները կարող են ազատվել ԱԱԲ մոտեցումից Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահին կամ ԱՀԿ-ին անդամակցելու ժամանակ: Այդպիսի միջոցները պետք է ներառվեն ԱԱԲ ազատումների ցանկում: Հետագայում Հոդված II-ից ազատումների վերաբերյալ պահանջները կարող են բավարարվել միայն ԱՀԿ ստեղծման Մարաբեշի համաձայնագրով սահմանված ազատման ընթացակարգերով:

Ի տարբերություն հատուկ պարտավորությունների ժամանակացանկերի բարդ բնույթի, այս ցանկերը ունեն ավելի պարզ կառուցվածք: Ցանկերում ԱԱԲ ազատումների ամբողջական և պատշաճ գրանցումը ապահովելու նպատակով յուրաքանչյուր երկիր պարտավոր է յուրաքանչյուր ազատման համար տրամադրել տեղեկատվության հինգ տեսակ՝

- (ա) այն ոլորտի կամ ոլորտների նկարագրություն, որտեղ կիրառվում են ազատումները,
- (բ) միջոցի նկարագրություն՝ նշելով, թե ինչու է այն անհամապատասխան Հոդված II-ի դրույթներին,

- (գ) երկիր կամ երկրներ, որոնց նկատմամբ կիրառվում են այդ միջոցները,
- (դ) ազատման նախատեսվող տևողություն,
- (ե) ազատման անհրաժեշտությունն առաջացնող պայմաններ:

Համաձայնագրի հիմնական սկուզբունքն այն է, որ հատուկ պարտավորությունները կիրառվում են ԱԱԲ մոտեցման հիմքի վրա: Եթե պարտավորություններ են ստանձնված, ապա ԱԱԲ ազատման արդյունքը կարող է լինել միայն այն, որ երկրին, որի նկատմամբ կիրառվում է ազատումը, կարող է տրամադրվել ավելի բարենպաստ մոտեցում, քան այլ երկրներին: Եթե ստանձնած պարտավորություն չկա, ապա ԱԱԲ ազատումը կարող է նաև տրամադրել առավել պակաս բարենպաստ մոտեցում: Կարիք չկա թվարկել այն բոլոր միջոցների ցանկը, որոնք Անդամների միջև տնտեսական միասնացման համաձայնագրերի (օրինակ՝ ազատ առևտրի գոտիներ) ներքո տրվում են ծառայությունների առևտրի արտոնյալ ազատականացման համար: Այդպիսի արտոնյալ մոտեցում թույլատրված է ԾԱԳՀ-ի Հոդված V-ի համաձայն և պետք է համապատասխանի այդ Հոդվածում սահմանված չափանիշներին:

## ՄԱՍ 4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԲԱՆԱԿԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծառայությունների առևտրի մասին գլխավոր համաձայնագիրը լիազորում է ԱՅԿ անդամ երկրների կառավարություններին բանակցությունների հաջորդական փուլերի միջոցով աստիճանաբար ազատականացնել ծառայությունների առևտուրը: ԾԱԳՅ Հոդված XIX-ի ներքո՝ բանակցությունների վերջին փուլը սկսվել է 2000թ. հունվարին: 2001թ. մարտին Ծառայությունների առևտրի խորհուրդի կողմից հաստատվեց «Ուղեցույցներ ու ընթացակարգեր ծառայությունների առևտրի բանակցությունների համար» փաստաթուղթը: 2001թ. նոյեմբերին կայացած Դոհայի Նախարարական համաժողովի ընթացքում ծառայությունների շուրջ բանակցությունները ներառվեցին Դոհայի զարգացման օրակարգի մեջ և դարձան նրա անբաժանելի մասը:

### 4.1. Բանակցությունների ընթացք

Դոհայի փուլում բանակցությունները վարվում են հիմնականում երկու ուղղություններով.

- ◆ երկկողմ և/կամ բազմակող բանակցություններ ծառայությունների առևտրի շուկայական պայմանները բարելավելու նպատակով: Դրանք հիմնականում վերաբերում են շուկայի մատչելիության ու ազգային մոտեցման վերաբերյալ հատուկ պարտավորությունների բարելավմանը (այսինքն՝ ապահովել, որ տեղական ընկերություններին տրրվող արտոնությունները տրամադրվեն նաև օտարերկրյա ընկերություններին) և Ազգերի առավել բարենպաստության մոտեցման խթանմանը (ավելի հավասար մոտեցում ԱՅԿ անդամ երկրների միջև):
- ◆ Անդամների միջև բազմակողմ բանակցություններ այնպիսի անհրաժեշտ կանոններ և հիմնադրույթներ հիմնելու նպատակով (ինչպես օրինակ՝ ներքին կանոնակարգումը, պաշտպանական արտակարգ միջոցները, պետական գնումները և լրավճարները), որոնք կկիրառվեն ԱՅԿ-ի բոլոր անդամ երկրների վրա՝ զարգացող և թույլ զարգացած երկրների համար որոշակի հատուկ պայմաններով:

### 4.2. Հատուկ պարտականությունների շուրջ բանակցություններ

Ծառայությունների առևտրի համար շուկայական պայմաններն ազատականացնելու շուրջ բանակցությունները գլխավորապես վարվում են «պահանջարկ-առաջարկ» գործընթացի միջոցով: Անդամներն իրենց պահանջարկներն ուղարկում են անմիջապես միմյանց՝ նշելով, թե ինչ բարելավումներ են ակնկալում իրենց ծառայությունների և ծառայություններ մատուցողների համար: Ի պատասխան այդ պահանջարկներին, իրենց նախնական առաջարկներում Անդամները նշում են, թե ինչպես և ինչ չափով են նրանք ցանկանում ստանձնել պարտադիր պարտավորություններ:

Սա կարող է հանգեցնել մի շարք երկկողմ կամ բազմակողմ բանակցությունների: Անկախ նրանից, թե որ Անդամն է ներկայացնում պահանջարկը, բարելավված պարտավորությունների «ժամանակացանկի» տեսքով առաջարկը պետք է ներկայացվի բոլոր Անդամներին:

Ի տարբերություն պահանջարկներին, որոնք չեն ներկայացվում ԱՅԿ քարտուղարությանը, առաջարկները, որպես ԱՅԿ փաստաթուղթ, շրջանառվության մեջ են դրվում ԱՅԿ բոլոր ան-

դամ երկրների մեջ: Բանակցությունների վերջում վերջնական առաջարկները դառնում են իրավականորեն ամրագրված պարտավորություններ՝ հատկորոշելով ծառայությունների առևտրի պայմանները:

Բանակցությունների վերաբերյալ բոլոր մանրամասները ներառված են «Ուղեցույցներ ու ընթացակարգեր ծառայությունների առևտրի բանակցությունների համար» փաստաթղթում (S/L/93): Հոնգ-Կոնգի Նախարարական հռչակագրի Հավելված C-ն տալիս է բանակցությունների նպատակների մասին ավելի շատ մանրամասներ՝ որպես ուղեցույց Անդակների համար: Պահանջարկների ու առաջարկների ներկայացման տեխնիկական կողմերը բացատրված են ԱՀԿ քարտուղարության կողմից մշակված փաստաթղթում:

#### 4.2.1. Պահանջարկների տեխնիկական կողմերը

Պահանջարկները կարող են ուղղվել առանձին Անդամի կամ Անդամների խմբի: Պահանջարկների համար կան չորս հնարավոր թիրախներ, որոնք իրար փոխադարձաբար չեն բացառում:

1. Համապատասխան Ժամանակացանկում չընդգրկված ոլորտների ավելացում:
2. Գոյություն ունեցող սահմանափակումների վերացում կամ կրճատում (օգինակ՝ թույլատրված մատուցողների թվի ավելացում կամ օտարերկրյա կապիտալի մասնակցության մակարդակի բարձրացում): Պահանջարկը կարող է նաև նպատակ ունենալ «անսահմանափակ» պարտավորությունը փոխարինել սահմանափակումով կամ առանց դրա պարտավորության:  
Այսպիսի պահանջարկները միշտ վերաբերում են շուկայի մատչելիության (Հոդված XVI) կամ ազգային մոտեցման (Հոդված XVII) վրա ազդող միջոցներին:
3. Հոդվածներ XVI-ի և XVII-ի կիրառության շրջանակների մեջ չընկնող հարցերին վերաբերող լրացուցիչ պարտավորությունների (Հոդված XVIII) գրանցում:
4. ԱԱԲ-ից ազատումների վերացում: ԱԱԲ-ից ազատումների մասին հավելվածի 6-րդ կետը ամրագրում է, որ գործող ազատումները հանդիսանում են բանակցությունների առարկա՝ բանակցությունների հաջորդական փուլերի ընթացքում:

Պահանջարկը կարող է ներկայացվել սովորական նամակի տեսքով: Համապատասխանաբար, եթե Անդամը պահանջում է Հոդվածներ XVI-ի և XVII-ի ներքո լրիվ ամբողջական պարտավորություն, ապա այն պետք է պարզապես պահանջի իր առևտրային գործընկերոջը գրանցել «չկան» բառը իր Ժամանակացանկում:

#### 4.2.2. Առաջարկների տեխնիկական կողմերը

Սովորաբար առաջարկները պետք է հասցեագրված լինեն վերը նշված նույն խնդիրներին՝ այսինքն՝ նոր ոլորտների ավելացում, գործող սահմանափակումների վերացում կամ ծառայությունների մատուցման տեսակների սահմանափակում, որոնցով ընթացիկ պարտավորություններ չեն ստանձնված, Հոդվածի XVIII-ի ներքո լրացուցիչ պարտավորությունների ստանձնում, ԱԱԲ-ից ազատումների վերացում:

Եթե պահանջարկները սովորաբար ներկայացվում են նամակի տեսքով, ապա առաջարկները սովորաբար բաղկացած են պարտավորությունների Ժամանակացանկերի Նախագծերից:

Այդ պատճառով առաջարկները պահանջում են լուրջ տեխնիկական պատրաստություն:

Բանակցությունների ընթացքում ներկայացվում են իրար հաջորդող պահանջարկներ ու առաջարկներ: Նախնական առաջարկները վերանայման կարիք ունեն՝ հիմնականում նոր կամ նորացված պահանջարկների պատճառով: Առաջարկները դրվում են բազմակողմ շրջանառության: Այս մեխանիզմը արդյունավետ է ոչ միայն թափանցիկության առումով, այլ նաև գործառնական: Քանի որ առաջարկները արտացոլում են ստացված պահանջարկները, ապա դրանք պետք է բոլոր գործընկերների համար մասն բաց՝ խորհրդակցությունների և բանակցությունների համար:

### **Առաջարկներ**

Դոհայի նախարարական հռչակագիրը 2002թ. հունիսի 30-ը սահմանում է նախնական վերջնաժամկետ՝ նախնական պահանջարկների շրջանառության համար, և 2003թ. մարտի 31-ը՝ նախնական առաջարկների ներկայացման համար, պայմանով, որ բոլոր բանակցությունները պետք է ավարտվեն 2005թ. հունվարի 1-ից ոչ ուշ:

2003թ. սեպտեմբերին կայացած Կանկունի նախարարական համաժողովի ձախողման հետևանքով, վերանայված առաջարկների համար որպես նոր վերջնաժամկետ նշանակվեց 2005թ. մայիսը: Հետագայում, 2005թ. դեկտեմբերին կայացած Յունգ-Կոնգի նախարարական համաժողովի ժամանակ երկրորդ վերանայված առաջարկների համար որպես վերջնաժամկետ սահմանվեց 2006թ. հուլիսի 31-ը: Այնուամենայնիվ, այլ բնագավառներում բանակցությունների առաջընթացի բացակայության պատճառով, Դոհայի զարգացման օրակարգի բանակցությունները հուլիսի կեսերից հետաձգվեցին մինչև 2007թ. հունվար: Հետագայում բանակցությունները շարունակվեցին առանց նոր ժամկետների նշանակման:

### **Նախնական և վերանայված առաջարկներ**

2008թ. հունիսի վերջի դրությամբ Անդամների կողմից քննարկման են ներկայացվել 71 նախնական և 31 վերանայված առաջարկ: Նախնական և վերանայված առաջարկները, որոնք հանված են սահմանափակումներից, հասանելի են TN/S/O և TN/S/O rev.1 փաստաթղթերի շարքում:

## **4.3. Բանակցությունների համար ներկայացված առաջարկություններ**

Բանակցությունների սկզբում Անդամները ներկայացրեցին բանակցությունների կառուցվածքի և բովանդակության վերաբերյալ առաջարկություններ: Այս առաջարկություններն ընդգրկում են առանձին Անդամների և/կամ Անդամների խմբերի հետաքրքրությունների հիմնական ոլորտները: Հաճախ առաջարկները պարունակում էին նախնական տեղեկատվություն և որոշակի ոլորտներում առևտրի պայմանները բարելավելու առաջարկներ: Այժմ, երբ աշխատանքը թևակոխել է պահանջարկ-առաջարկ փուլ, փաստորեն ոչ մի նոր առաջարկ չի ներկայացվել:

## **Հատուկ նիստեր**

Ծառայությունների առևտրի խորհուրդը («հատուկ նիստ»-ի հանդիպում) բանակցությունների վերահսկողության համար պատասխանատու մարմին է: Բոլոր օժանդակ մարմինները, ինչպիսիք են Ներքին կանոնակարգման ու ԾԱԳՅ կանոնների աշխատանքային խմբերը, գեկուցում են ԾԱԽ-ին:

### **4.4. Բանակցային լիազորություններ**

2001թ. մարտին ԾԱԽ-ն հատուկ նիստում ընդունեց «Ուղեցույցներ ու ընթացակարգեր ծառայությունների առևտրի բանակցությունների համար» փաստաթուղթը (S/L/93): Այս փաստաթուղթը մեծամասամբ հիմնվում է ԾԱԳՅ-ի դրույթների՝ մասնավորապես Յոթերորդ IV-ի («Չարգացող երկրների աճող մասնակցություն») և Յոթերորդ XIX-ի («Բանակցություններ հատուկ պարտավորությունների շուրջ») վրա: Ստորև համառոտ ներկայցված է Ուղեցույցի հիմնական բովանդակությունը:

### **Նպատակներ և սկզբունքներ**

Հիմնական նպատակները և սկզբունքներն են.

- ◆ աստիճանական ազատականացում, ինչպես ամրագրված է ԾԱԳՅ-ի համապատասխան դրույթներում
- ◆ զարգացող երկրների նկատմամբ համապատասխան ճկունության դրսևորում՝ հատուկ նախապատվություն տալով թույլ զարգացած երկրներին
- ◆ հղում փոքր և միջին չափի ծառայություններ մատուցողների կարիքներին, մասնավորապես զարգացող երկրների պարտավորությանը՝ հարգելու «ԾԱԳՅ-ի առկա կառուցվածքը և սկզբունքները» (օրինակ՝ ժամանակացանկերի կազմման և մատուցման չորս տեսակների նկատմամբ ներքևից-վերև մոտեցումը ):

### **Կիրառման շրջանակներ**

- ◆ ոչ մի ոլորտ կամ մատուցման ձև ի սկզբանե չպետք է բացառվեն բանակցությունների շրջանակներից
- ◆ հատուկ ուշադրություն պետք է դարձվի զարգացող երկրների արտահանման շահերին
- ◆ Բանակցությունները կներառեն Ազգերի առավել բարենպաստության մոտեցումից ազատումների վերացման շուրջ քննարկումները՝ ԱՅԿ անդամ երկրների միջև համարժեք մոտեցում ապահովելու նպատակով
- ◆ Համաձայնագրի «կանոնաստեղծ» օրակարգը (վերաբերում է ներքին կանոնակարգմանը (Յոթերորդ VI:4), պաշտպանական արտակարգ միջոցներին (Յոթերորդ X), պետական գնումներին (Յոթերորդ XIII) և լրավճարներին (Յոթերորդ XV)) միասնականացված է ծառայությունների շուրջ բանակցությունների լայն համատեքստին:

## **Մոդալիտիներ և ընթացակարգեր**

- ◆ Ընթացիկ ժամանակացանկերը հանդիսանում են մեկնարկային կետ
- ◆ պահանջարկ-առաջարկ բանակցությունները հանդիսանում են գլխավոր մոտեցում
- ◆ ինքնուրույն ազատականացման համար բանակցային մոտեցումը հիմնված է ընդհանուր չափանիշների վրա: Ավելի ուշ, ԾԱԽ-ի կողմից այս չափանիշները ձևակերպվել են «Ինքնուրույն ազատականացման մոտեցման մոդալիտիները» փաստաթղթում (TN/S/6)
- ◆ Պետք է լինի ծառայությունների առևտրի ընթացիկ գնահատում
- ◆ ԾԱԳՀ Հոդվածի IV-ի լույսի ներքո, ԾԱԽ-ն իրավունք ունի գնահատել բանակցությունների արդյունքները՝ նախքան դրանց ավարտը:

Ի լրումն շուկայի մատչելիության շուրջ բանակցությունների, կան նաև ԾԱԳՀ-ի որոշակի «կանոնաստեղծ» ոլորտների հետագա զարգացման համար լիազորություններ: Ներքին կանոնակարգման աշխատանքային խմբին տրված է ներքին կանոնակարգման բնագավառում հիմնադրույթներ մշակելու լիազորություն, ինչպես նախատեսված է Հոդված VI.4-ում: ԾԱԳՀ-ի կանոնների աշխատանքային խումբն ունի պաշտպանական արտակարգ միջոցների (Հոդված X), պետական գնումների (Հոդված XIII) և լրավճարների (Հոդված XV) վերաբերյալ երեք բանակցային լիազորություն:

## **4.5. Բանակցությունների հիմնական փուլերը**

### **4.5.1. Դոհայից Կանկուն**

2003թ. սեպտեմբերի սկզբին կայացած Կանկունի նախարարական համաժողովը, այնուամենայնիվ, չհանգեցրեց որևէ առաջընթացի: Եզրափակիչ հայտարարությունը վերահաստատեց Դոհայի հռչակագիրն ու որոշումները, և կրկին հանձնարարեց Անդամներին «աշխատել դրանք ամբողջովին և բարեխղճորեն իրականացնելու համար»:

### **4.5.2. «2004թ.-ի հուլիսյան փաթեթ»**

«2004թ. հուլիսյան փաթեթը» (2004թ. օգոստոսի 1-ին Գլխավոր խորհրդի կողմից ընդունված Դոհայի աշխատանքային ծրագիր-որոշում) նոր տեղաշարժ առաջացրեց ընթացող բանակցություններում: «Հուլիսյան փաթեթում» 2005թ. մայիսը նախանշեց որպես վերանայված առաջարկների ներկայացման վերջնաժամկետ, ինչպես նաև սահմանեց մի շարք հանձնարարականներ, որոնք նախապես համաձայնեցվել էին ԾԱԽ-ի («Հատուկ նիստ») հետ: Դրանք ներառում էին մի շարք հանձնարարականներ՝

- ◆ նախնական առաջարկներ դեռ չներկայացրած Անդամներին՝ որքան հնարավոր է շուտ ներկայացնել դրանք
- ◆ ապահովել առաջարկների բարձր որակը, մասնավորապես զարգացող երկրների համար հետաքրքրություն ունեցող ոլորտներում և մատուցման տեսակներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով թույլ զարգացած երկրներին

- ❖ առավել ակտիվացնել Հոդվածներ VI.4, X, XIII և XV-ի ներքո «կանոնաստեղծ» բանակցությունների իրականացումը՝ դրանց լիազորություններին և վերջնաժամկետներին համապատասխան
- ❖ թիրախային տեխնիկական օժանդակություն տրամադրել զարգացող երկրներին՝ բանակցություններին նրանց մասնակցությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

### 4.5.3. Հավելված Գ և Հոնգ-Կոնգի նախարարական հռչակագիր

2005թ. սեպտեմբերի Հոնգ-Կոնգի նախարարական հռչակագիրը վերահաստատեց ծառայությունների շուրջ բանակցությունների հիմնական սկզբունքներն ու նպատակները և կոչ արեց անդամներին խորացնել բանակցությունները հռչակագրի հավելված Գ-ում նշված նպատակներին, մոտեցումներին և ժամանակացանկերին համապատասխան՝ պարտավորությունների ոլորտների և մատուցման տեսակների ծածկույթը ընդլայնելու և դրանց որակը բարելավելու համար՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով զարգացող երկրների արտահանման հետաքրքրություններին: Նախարարական հռչակագիրը նաև սահմանեց, որ թույլ զարգացած երկրները նոր պարտավորություններ չեն ստանձնելու այս փուլում:

Հավելված Գ-ում պարունակվում էին բանակցային նպատակներին հասնելու առավել մանրակրկիտ և հավակնոտ մոտեցումներ, քան դրան նախորդող ցանկացած այլ փաստաթղթում: Չարգացող անդամ երկրների համար համապատասխան ճկունությունն ապահովելով՝ այն սահմանեց շրջանակներ՝

- ❖ մատուցման յուրաքանչյուր տեսակի ներքո նոր կամ բարելավված պարտավորություններ առաջարկելու համար
- ❖ Ազգերի առավել բարենպաստության մոտեցումից ազատումների հետ վարվելու համար
- ❖ պարտավորությունների դասակարգման և ժամանակացանկերում գրանցման համար:

Այլ հարցերի թվում, հավելվածը նաև կոչ արեց Անդամներին ակտիվացնելու իրենց ջանքերը «կանոնաստեղծ» բանակցությունները ավարտին հասցնելու համար: Ինչ վերաբերում է բանակցային մոտեցումներին, հավելված Գ-ն նախատեսում է, որ պահանջարկ-առաջարկ բանակցությունները նույնպես իրագործվեն բազմակողմ հիմքի վրա, ինչպես նաև տրամադրում է բանակցությունների վարման ուղեցույցներ:

### 4.5.4. Բազմակողմ բանակցություններ

Բազմակողմ բանակցությունների ներքո ընդհանուր շահ ունեցող Անդամների խումբը միացյալ պահանջարկ է ներկայացնում առանձին Անդամների՝ որոշակի ոլորտներում կամ մատուցման տեսակում հատուկ պարտավորությունները բարելավելու նպատակով: Այնուհետև նրանք խմբով հանդիպում են այդ պահանջարկը ստացած երկրների հետ: Յուրաքանչյուր անդամի կամքն է՝ առանձին պատասխանելու խմբակային պահանջարկին:

Բազմակողմ բանակցությունների երկու փուլ անցկացվեցին 2006թ. սկզբին՝ հիմնվելով 21 խմբակային պահանջարկների վրա, որոնք հիմնականում ձևակերպվել էին ըստ ոլորտների:

Այս պահանջարկների հետ գործ ունեցող ոչ պաշտոնական բանակցային խմբերի արձագանքը դրական էր:

Յուրաքանչյուր խումբ կազմվել էր ընդհանուր բանակցային շահեր ունեցող 12 կամ ավելի Անդամների կողմից: Խմբերը հրավիրում էին այլ Անդամների՝ քննարկելու և ուսումնասիրելու այս շահերը:

Ակնկալվում էր, որ բազմակող բանակցությունների, ինչպես նաև լրացուցիչ երկկողմ հանդիպումների արդյունքներն կարտացոլվեին վերանայված առաջարկների երկրորդ փուլում: Թեև հավելված Գ-ով այս առաջարկների ներկայացման համար վերջնաժամկետ էր սահմանված 2006թ. հուլիսի 31-ը, սակայն ԴՉՕ-ի շրջանակում բոլոր բանակցությունները դադարեցվեցին դրանից ընդամենը մեկ շաբաթ առաջ՝ հիմնականում գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական ապրանքների՝ շուկայի մատչելիության շուրջ բանակցությունների անհույս վիճակի պատճառով:

2007թ. փետրվարից զգացվեց, որ հասունացել է ժամանակը բանակցությունների լրիվ վերականգնման համար: Ինչպես և նախկինում, ծառայությունների շուրջ հանդիպումները կազմակերպվում էին հիմնականում խմբերի ձևով, որպեսզի երկրների փորձագետները հնարավորություն ունենան յուրաքանչյուր 3 կամ 4 ամիսը մեկ ոչ միայն մասնակցել համապատասխանաբար ԾԱԽ-ի և ԱԲՀ-ի համապատասխան հանդիպումներին, այլև կազմակերպել երկկողմ և բազմակողմ հանդիպումներ՝ ուսումնասիրելու բարելավված առաջարկների շրջանակը և բովանդակությունը: Մի քանի այսպիսի հանդիպումներից հետո կար մի գերակայող կարծիք, որ «բազմակողմ»-ները այդ պահին ծառայեցին իրենց նպատակին:

#### **4.5.5. Դեպի ծառայությունների բանակցությունների ավարտը**

Շարունակելով երկկողմ հանդիպումները՝ անդամները նաև քննարկում էին այնպիսի տարրեր, որոնք ԴՉՕ-ի համատեքստում բանակցությունները կտանեն դեպի ավարտ: Այս կապակցությամբ ծառայությունների բանակցությունների նախագահը (ԾԱԽ-ի հատուկ նիստ) 2008թ. մայիսի 26-ին հրատարակեց զեկույց՝ ծառայությունների տեքստի նախագծի հետ միասին, որը ԱՀԿ անդամները հետագա քննարկումներից հետո կարող էին ընդունել: Նախագիծը, որը հիմնված էր նախագահի կողմից կազմակերպված խորհրդակցությունների վրա, հասցեագրվեց այնպիսի հարցերի, ինչպիսիք են մասնակիցների հավակնոտության մակարդակը, գործող և բարելավված շուկայի մատչելիության և ազգային մոտեցման մակարդակներ ամրագրելու նրանց պատրաստակամությունը, ինչպես նաև հատուկ հղումները ծառայությունների մատուցման 1-ին և 4-րդ տեսակներին՝ զարգացող երկրների արտահանման հետաքրքրությունների շրջանակներում գտնվող ոլորտների և մատուցման տեսակների նկատմամբ:

Չուզահեռաբար, Առևտրային բանակցությունների հանձնախմբի նախագահը կղեկավարի «ազդանշանային վարժույթը» խմբերի ղեկավարների շրջանում, որը տեղի կունենա այն ժամանակ, երբ գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական ապրանքների շուկայի մատչելիության մոդալիտիները համաձայնեցված կլինեն: Ազդանշանային վարժույթի ընթացքում մասնակցող նախարարները կնշեն, թե ինչպես կարող են բարելավել իրենց ծառայությունների առաջարկները: Հետագայում ԱԲՀ նախագահը պետք է այս վարժույթի մասին բանավոր զեկուցի ԱԲՀ-ին: Ազդանշանային վարժույթի նպատակն է պահանջարկ-առաջարկ բանակցությունների առաջընթացի առնչությամբ Անդամներին տալ հարմարավետություն՝ քանի դեռ սպասվում են իրական վերանայված առաջարկները:

## 4.6. Ընթացիկ իրավիճակ

Նոր կամ բարելավված պարտավորությունների նախնական և վերանայված առաջարկները պետք է հայտնի լինեն ԱՅԿ բոլոր անդամներին, քանի որ այդ պարտավորությունների ուժի մեջ մտնելը կարող է ազդեցություն ունենալ նրանց բոլորի վրա: Քննարկվող փոփոխությունները գրանցվում են առկա ժամանակացանկերում և մատչելի են դառնում բոլոր անդամներին՝ ԱՅԿ քարտուղարության միջոցով: Որոշ առաջարկներ հրապարակայնորեն մատչելի են, եթե ինդրին առնչվող Անդամը համաձայնել է ազատ տրամադրել փաստաթուղթը: Այդ առաջարկները կարելի է գտնել ԱՅԿ-ի վեբկայքում:

Չնայած դժվար է գնահատական տալ պահանջարկ-առաջարկ շարունակական գործընթացին, քանի որ նա դեռ ընթացքի մեջ է, այնուամենայնիվ ծառայությունների շուրջ ամբողջ բանակցությունների վերաբերյալ կարող են արվել որոշ ընդհանուր դիտողություններ՝

- ◆ Վերջնաժամկետ համարվող 2003թ. մարտի 31-ին առկա էին 12 նախնական առաջարկներ, որոնց հետևեցին ևս 26-ը՝ նախքան 2003թ. սեպտեմբերի սկզբին կայացած Կանկունի նախարարական համաժողովը: Մինչև Հոնգ-Կոնգի նախարարական համաժողովը (2005թ. դեկտեմբեր) առաջարկների ընդհանուր թիվը հասել էր 69-ի (ընդգրկելով ԱՅԿ 93 անդամներին)՝ լրացվելով 30 վերանայված առաջարկներով: Այդ ժամանակվանից քիչ բան է փոխվել. նախնական առաջարկների թիվը հասել է միայն 71-ի, իսկ վերանայված առաջարկներինը՝ 31-ի:
- ◆ Բոլոր զարգացած երկրները և շատ զարգացող երկրներ, որոշ բացառություններով, ներդրում են ունեցել:
- ◆ Ընդհանուր առմամբ, առաջարկները կենտրոնացած էին այն ոլորտների և ծառայությունների մատուցման տեսակների վրա, որոնք արդեն իսկ գերակայում են առկա ժամանակացանկերում՝ ամրագրման կառուցվածքում համեմատաբար քիչ փոփոխություններով: Այն ոլորտներում, որտեղ առկա են քիչ թվով պարտավորություններ, (կրթություն, առողջապահություն, փոստային փոխանցումներ, ճանապարհային փոխադրումներ) համեմատաբար քիչ առաջարկներ են արվել: Պահանջարկ-առաջարկ գործընթացի սահմանափակ առաջընթացը ընդգծված էր ԱԲՀ-ին ուղղված ԾԱԽ-ի նախագահի զեկույցում (TN/S/23): Չեկույցում նաև արտացոլված էին անդամների նպատակները ըստ ոլորտների և ծառայությունների մատուցման տեսակների:
- ◆ Փոքր առաջխաղացում է արձանագրվել «կանոնաստեղծ» բնագավառներում: Չնայած Ներքին կանոնակարգման աշխատանքային խմբի նախագահը 2007թ. ապրիլին կարողացավ ներկայացնել նախագիծ, սակայն մյուս երեք հարցերի շուրջ (արտակարգ պաշտպանություն, պետական գնումներ և լրավճարներ) բանակցությունների առաջընթացը քիչ է:
- ◆ Ծառայությունները ԴՉՕ-ի կարևոր բաղադրիչն են և ծառայությունների բնագավառում իմաստալից բանակցային փաթեթը մեծ նշանակություն կունենա բանակցությունների Դոհայի փուլի հաջող ավարտը երաշխավորելու համար:

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՅԱՆՄԱՆ  
ԽԹԱՆՈՒՄ**

(ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

# 1. Որո՞նք են ծառայությունների արտահանումից ակնկալվող օգուտները

Արտահանումից դուրս կարող եք ստանալ բազմաթիվ օգուտներ և առավելություններ: Մասնավորապես՝

- ◆ վաճառքի ծավալների աճ՝ Ձեր ներքին շուկայում հնարավոր վաճառքի ծավալների համեմատ
- ◆ շուկայի, արժույթի և հաճախորդների ընդլայնման հիմքի վրա ռիսկի դիվերսիֆիկացիա
- ◆ կայուն և փոխարկելի արժույթով պայմանագրերի կնքում
- ◆ այնպիսի հաճախորդների ձեռք բերում, որոնց պահանջներն առավելապես համապատասխանում են եր ծառայություններին
- ◆ արտադրական կարողությունների շարունակական ընդլայնում
- ◆ նոր գիտելիքների ու փորձի ձեռքբերում, որոնք կարող եք օգտագործել ներքին շուկայում:
- ◆ շուկան առավել բազմազան դարձնելու նպատակով գործընկերների ձեռք բերում
- ◆ ներքին շուկայում վաճառքից կախվածության նվազեցում կամ ներքին շուկայի լճացման փոխհատուցում:

# 2. Ինչպիսի՞ դժվարություններ կարող են հանդիպել ծառայություններ արտահանելիս

Ծառայությունների մարքեթինգը տարբերվում է ապրանքների մարքեթինգից հիմնականում այն պատճառով, որ ծառայությունները նյութական չեն և հաճախորդներից հաճախ պահանջվում է վճարել (կամ խոստանալ, որ կվճարեն) կանխավ, այսինքն՝ մինչև նրանք կստանան ամբողջական ծառայությունը: Այդ պատճառով հաճախորդները սովորաբար իրենց ծանոթներից խորհուրդներ են հարցնում նախքան նոր ծառայություն մատուցողի հետ աշխատելը: Եթե ձեր ընկերությունն արտասահմանյան շուկայում ճանաչված չէ, ապա քիչ հավանական է, որ ձեզ կերաշխավորեն՝ անկախ նրանից, թե որքան լավն է ձեր կողմից մատուցվող ծառայությունը: Ստորև ներկայացվում են մի քանի քայլեր, որոնք դուրս կարող եք ձեռնարկել՝ հիմնական խնդիրները լուծելու համար:

## Վստահության պակաս օտարերկրյա շուկայում

Ծառայության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար պետք է ունենալ պարզ պատկերացում, թե ինչպես ներգրավել հավանական հաճախորդներին և համոզել նրանց օգտվել ծառայությունից: Ոչ նյութական բարիքներ գնելու ռիսկայնության պատճառով ծառայություններ գնողների մեծամասնությունը փնտրում է լիազորված մարմինների կողմից հավաստիացումներ, որ ընկերությունը կիրականացնի պարտավորված ծառայությունները: Խնդիրն այստեղ այն է, թե ինչպես ծանոթանալ հավանական հաճախորդներին՝ մինչև արտասահման մեկնելու համար ժամանակ և գումար ներդնելը:

Դա հնարավոր է հաղթահարել հետևյալ քայլերով՝

- ◆ կենտրոնանալ Ձեր կազմակերպության նկատմամբ օտարերկրյա շուկայում վստահություն կառուցելու վրա՝ նախքան ծառայությունն արտահանելը
- ◆ համոզվել, որ Ձեր վեբ-կայքը և այլ գովազդային նյութերը համապատասխանում են միջազգային ստանդարտներին և ստեղծում են ձեզ համար ցանկալի կերպար, քանի որ այն կամրապնդի Ձեր մրցակցային հեղինակությունը
- ◆ համոզվել, որ Ձեր ընկերության ղեկավարները ի գործ և պատրաստ են ճանապարհորդել և արտասահմանում հավանական հաճախորդների հետ հարաբերություններ հաստատել
- ◆ ստեղծել կապերի և «կողմնակիցների» հզոր ցանց, որոնք կերաշխավորեն ձեր ծառայությունները
- ◆ մասնակցել միջազգային խորհրդաժողովներին կամ շնորհանդեսներին, քանի որ հաճախորդները ցանկանում են ծառայություններ մատուցողներին տեսնել գործնականում՝ որպես ծառայությունը փորձելու հնարավորություն
- ◆ ծանոթանալ տեղական մշակույթին
- ◆ համագործակցել տեղական առաջատար ընկերության հետ՝ շփման միջոցով վստահություն ստեղծելու նպատակով:

### **Շուկա ժամանակավոր մուտք գործելու դժվարություններ.**

Դա հնարավոր է հաղթահարել՝

- ◆ շուկան ընտրելուց առաջ ճանապարհորդության սահմանափակումները գնահատելու միջոցով, քանի որ դուք պետք է ի վիճակի լինեք անհրաժեշտության դեպքում կարողանալ հատել սահմանը
- ◆ հնարավորության դեպքում բազմակի մուտքի վիզա ստանալու միջոցով:

### **Ջարմարավետ մուտքի ակնհայտ պակաս.**

Դա հնարավոր է հաղթահարել՝

- ◆ աշխատելով շուկայի տեղական գործընկերների հետ կամ հիմնադրելով տեղական ներկայացուցչություն, քանի որ շատ գնորդներ իրենց ավելի հարմար են զգում ծառայությունների տեղական մատուցողների հետ գործ ունենալիս
- ◆ Էլեկտրոնային փոստի և օնլայն կապի միջոցով ձեր հաճախորդների հետ ստեղծելով ամուր Էլեկտրոնային կապեր:

### **3. Ի՞նչ է անհրաժեշտ բարեհաջող արտահանում իրականացնելու համար**

Բարեհաջող արտահանում իրականացնելուն պատրաստ լինելու համար անհրաժեշտ է ունենալ կամ ձեռնարկել հետևյալը՝

- ◆ արտահանման նպատակների և ռազմավարության նկատմամբ կազմակերպության կառավարական վերին օղակների աջակցությունը
- ◆ համապատասխան ռեսուրսներ՝ ֆինանսական միջոցներ, առաքման կարողություններ և անձնակազմ, որն ունակ է արագ հարմարվել մշակութային առանձնահատկություններին
- ◆ շուկայի հաճախորդների կարիքներին և նախասիրություններին համապատասխանեցված մրցունակ ծառայություն
- ◆ պատշաճ օնլայն ներկայություն
- ◆ հաջողության հասնելու իրատեսական սպասումներ և պատկերացումներ
- ◆ ճկուն և պլանավորված արտահանման ռազմավարություն, որը հիմնված է շուկայական պատշաճ հետազոտությունների վրա

Ձեր արտահանման ռազմավարության ճկունությունը շատ կարևոր է, քանի որ միջազգային մրցակցային միջավայրը փոփոխվում է շատ արագ, իսկ շուկայական հնարավորությունները հաճախ կարող են հայտնվել կամ վերանալ վեց ամսից էլ քիչ ժամանակահատվածում:

### **4. Որո՞նք են ծառայություններ արտահանողների կողմից կատարվող ամենատարածված սխալները**

Արտահանման սխալների մեծամասնությունը կարելի է բաժանել հետևյալ 8 խմբերի.

- ◆ ծառայությունների խթանման փորձ՝ առանց նախապես ժամանակ ծախսելու որակյալ ծառայություններ մատուցողի վստահություն ստեղծելու վրա
- ◆ վատ կամ հապճեպ պատրաստվածություն, ներառյալ արտասահմանյան շուկաներ ճանապարհորդելը՝ առանց ժամանակ ծախսելու շուկայական հետազոտությունների ու կապերի ստեղծման և զարգացման վրա
- ◆ բավարարված հաճախորդներից և այլ աղբյուրներից արձագանքներ ստանալու և գնահատելու փոխարեն անտարբեր վարքագծի դրսևորում
- ◆ ծառայության արտահանում՝ չփորձելով հարմարեցնել այն օտարերկրյա մշակութային արժեքներին և սովորույթներին, և անհիմն վստահություն, որ արտահանման որոշակի տեխնոլոգիան կամ ծառայությունը ինքնուրույնաբար հաջողություն կունենա բոլոր երկրներում
- ◆ նոր շուկայում օնլայն ներկայության բացակայություն
- ◆ բավարար և պլանավորված հետադարձ կապի բացակայություն
- ◆ միաժամանակ մի քանի շուկաներ մտնելու ցանկություն
- ◆ տեղական լեզվով թարգմանված մարքեթինգային նյութերի բացակայություն:

## **5. Ինչպե՞ս կարելի է վստահությունն ձեռք բերել արտերկրում՝ որպես ծառայություններ մատուցող**

Միակ բարդ խնդիրը, որին որպես զարգացող կամ անցումային տնտեսությամբ երկրի ծառայություններ մատուցողի կարող էք հանդիպել, դա որակյալ ծառայություններ տրամադրող ընկերության վստահության ստեղծումն է: Այդպիսի վստահություն ստեղծելու համար կարելի է օգտագործել ներքոնշյալ երեք գլխավոր ռազմավարությունները:

### **Ձեր կարողությունների վերաբերյալ օբյեկտիվ ապացույցների տրամադրում հետևյալ միջոցներով՝**

- ◆ շնորհանդեսների և ելույթների
- ◆ մրցունակ օնլայն ներկայության
- ◆ մասնագիտական անձնակազմի համապատասխան լիցենզիաների կամ սերտիֆիկատների
- ◆ Ձեր կազմակերպության որակի կառավարման համակարգի ISO գրանցման
- ◆ Ձեր կազմակերպության կամ մասնագիտական անձնակազմի կատարելության համար ստացված պարգևների
- ◆ մասնագիտական անձնակազմի կողմից հրապարակումների
- ◆ հայտնի և հեղինակավոր տեղեկատուներում Ձեր կազմակերպության ընդգրկման
- ◆ Ձեր կազմակերպության գործունեության վերաբերյալ մամուլի միջոցով լուսաբանման
- ◆ ոլորտի հայտնի առաջատարների հետ ռազմավարական միավորումների ստեղծման
- ◆ օնլայն քննարկումներին մասնակցության:

### **Ձեր կարողությունների անհատական երաշխիքների տրամադրում հետևյալ միջոցներով՝**

- ◆ հայտնի անձանցից երաշխավորագրերի
- ◆ բավարարված հաճախորդների շնորհակալական ուղերձների
- ◆ ոլորտի միություններում անդամակցության:

### **Դրական ներկայացուցչական կերպարի ապահովում հետևյալ միջոցներով՝**

- ◆ օգուտների հայտարարություն կատարելու
- ◆ որակյալ ինտերնետային կայք և այլ գովազդային նյութեր պատրաստելու
- ◆ մշակութային գործոնների հանդեպ ուշադրություն ցուցաբերելու:

## 6. Ինչպե՞ս կարելի է օգտագործել ինտերնետն՝ արտահանման նախաձեռնությանն օժանդակելու համար

Ինտերնետը մարքեթինգային գործիք և մեթոդ է: Այն հնարավորություն է տալիս ներկայացնել և մատուցել Ձեր ծառայությունները ընթացիկ ու պոտենցիալ հաճախորդներին, պատվիրատուներին ու գործընկերներին՝ անսահմանորեն մեծացնելով ձեր հնարավորությունները: Ցանցում իրականացվում են բիզնես տեղեկատվության փոխանակումներ, որն էլ հանդիսանում է կարևոր գործիք ծառայությունների արտահանման համար:

Քիչ հայտնի կազմակերպությունները կարող են դառնալ շատ հասանելի, եթե խելամտորեն օգտագործեն ինտերնետը: Անգամ փոքր կազմակերպությունները կարող են մշակել փայլուն և արդյունավետ վեբ ներկայություն և խթանման ռազմավարություն: Պոտենցիալ հաճախորդներին քիչ է հետաքրքրում կազմակերպության աշխարհագրական դիրքը, եթե կազմակերպությունը, որի հետ նրանք ցանկություն ունեն գործ ունենալ, հասանելի է էլեկտրոնային ճանապարհով:

Դուք կարող եք առնվազն վեց ճանապարհով օգտագործել ինտերնետը՝ արտահանմանը աջակցելու նպատակով.

- ◆ լավ նախագծված կորպորատիվ վեբ-կայքի միջոցով խթանել ձեր ընկերության կարողությունները
- ◆ ամրապնդել որպես փորձագետի Ձեր վստահելիությունը՝ մասնակցելով խմբային օնլայն քննարկումներին
- ◆ օնլայն իրականացնել արդյունավետ շուկայական հետազոտություններ
- ◆ կորորդինացնել տարբեր վայրերում գտնվող թիմերի գործունեությունը
- ◆ վարել օնլայն հանդիպումներ հաճախորդների հետ
- ◆ տարածության վրա մատուցել ծառայություններ էլեկտրոնային տարբերակով
- ◆ շուկայի վերաբերյալ տրամադրել տեղեկատվություն:

Ինտերնետը շատ միջոցներ է առաջարկում Ձեր կարողությունները խթանելու և կազմակերպության հեղինակությունը ձևավորելու համար: Զանի որ ինտերնետային մշակույթը հիմնված է տեղեկատվության ազատ փոխանակման վրա, ապա դուք կարող եք հեշտությամբ գրանցվել նորությունների խմբերին ու օնլայն խորհրդածողովներին, ձեռնարկել մատչելի զանգվածային մարքեթինգային ծրագրեր կամ մշակել վեբ-կայք՝ Ձեր վստահելիությունը բարձրացնելու համար:

Ձեր ծառայությունները խթանելու, ստացված մրցանակները կամ գալիք իրադարձությունները գովազդելու և նոր հաճախորդների ուշադրությունը գրավելու մեկ այլ միջոց է էլեկտրոնային փոստերի հասցեների ցանկերը: Այս ցանկերի միջոցով կարելի է ապահովել նպատակային հաճախորդների մեծ քանակի ուշադրությունը:

## 7. Որտե՞ղ կարելի է գտնել շուկայի վերաբերյալ տեղեկատվություն

Տնտեսագիտական ամսագրերը, ինչպես օրինակ “*The Economist*” և “*The Financial Times*”, և այնպիսի գեկույցները, ինչպես օրինակ *Standard & Poor’s Industry Surveys*, վերլուծում են ծառայությունների ոլորտի համաշխարհային միտումները: Ինտերնետը ևս տեղեկատվության լավ աղբյուր է:

Շուկայի վերաբերյալ տեղեկատվություն, ծառայություններ կամ հղումներ պարունակող բազմաթիվ վեբ կայքերից կարելի է առանձնացնել հետևյալները՝

- ◆ *Export Today’s Global Business Online*, [www.exporttoday.com/index.html](http://www.exporttoday.com/index.html): Համաշխարհային շուկաները, ֆինանսները, գործարքները, ռիսկի կառավարումը, հեռահաղորդակցությունը և այլ ոլորտները լուսաբանող համաշխարհային բիզնես պարբերական:
- ◆ *Financial Times*, [www.ft.com](http://www.ft.com): Պարունակում է շուկաների, արդյունաբերության տարբեր ոլորտների՝ ներառյալ ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն:
- ◆ [www.worldjump.com](http://www.worldjump.com): Այս կայքը ուղղորդում է դեպի երկրների պորտալներ:

Գնման հնարավորություններ կարող եք գտնել էլեկտրոնային շուկաների լայն շարքում: Ստորև տրված է «բիզնեսը բիզնեսի համար» (B2B) շուկաների պորտալների ցանկը.

URL	Կայքը գործում է B2B էլեկտրոնային շուկաներում
<a href="http://www.b2business.net">www.b2business.net</a>	Այո
<a href="http://www.bizprolink.com">www.bizprolink.com</a>	Այո
<a href="http://www.emarketservices.com">www.emarketservices.com</a>	Ոչ
<a href="http://www.netb2b.com">www.netb2b.com</a>	Ոչ
<a href="http://www.verticalnet.com">www.verticalnet.com</a>	Այո

Միջազգային միտումներին հետևելու համար օգտակար կայքեր.

Վեբ կայք	Ծածկույթ	Թիրախ
<a href="http://www.business2.com">www.business2.com</a>	Համաշխարհային	Էլ-բիզնես
<a href="http://www.ecommercetimes.com">www.ecommercetimes.com</a>	Համաշխարհային	Էլ-բիզնես
<a href="http://www.emarketer.com">www.emarketer.com</a>	Համաշխարհային	Էլ-շուկա
<a href="http://www.forrester.com">www.forrester.com</a>	Համաշխարհային	Հատազոտությունների արդյունքներ
<a href="http://www.gartnerweb.com">www.gartnerweb.com</a>	Համաշխարհային	Հետազոտությունների արդյունքներ
<a href="http://www.internetwk.com">www.internetwk.com</a>	Համաշխարհային	Էլ-բիզնես
<a href="http://www.netb2b.com">www.netb2b.com</a>	Համաշխարհային	Էլ-բիզնես
<a href="http://www.technewsworld.com">www.technewsworld.com</a>	Համաշխարհային	Տեխնոլոգիաներ
<a href="http://www.thestandard.com">www.thestandard.com</a>	Համաշխարհային	Էլ-բիզնես և տեխնոլոգիաներ
<a href="http://www.zdnet.com">www.zdnet.com</a>	Համաշխարհային	Տեխնոլոգիաներ

## 8. Որտե՞ղ գտնել տեղեկություններ շուկա մուտք գործելու սահմանափակումների մասին

Դուք կարող եք ձեզ հետաքրքրող տեղեկությունների մեծ մասը գտնել ԱՀԿ Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագրի ներքո երկրների կողմից ստանձնած պարտավորությունների ժամանակացանկերից, որոնք տեղակայված են ԱՀԿ վեբ կայքում՝ [www.wto.org](http://www.wto.org):

Շուկա մուտք գործելու սահմանափակումները վերաբերվում են յուրաքանչյուր երկրի կողմից կիրառվող տեխնիկական կանոնակարգերին և կամավոր ստանդարտներին, որոնք տարբեր երկրների համար տարբեր են: ԱՀԿ առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին համաձայնագիրը կոչված է երաշխավորել, որ կանոնակարգերը, ստանդարտները, ստուգման և սերտիֆիկացման գործընթացները առևտրի համար չեն ստեղծում անհիմն խոչընդոտներ: Այնտեղ շարադրված է պետական կառավարման մարմինների կողմից ստանդարտների պատրաստման, ընդունման և կիրառման բարեխիղճ գործելակերպի կանոնադրությունը:

Տեղեկատվության այլ աղբյուրներ են՝

- ◆ կառավարության առևտրի ոլորտի ծառայողները, և
- ◆ Ձեր երկրում գտնվող օտարերկրյա առևտրային ներկայացուցիչները կամ համապատասխան անձնակազմը:

Նկատի ունեցե՞ք նաև, որ Ձեզ հետաքրքրող տեղեկատվությունը կարող են տրամադրել նաև երկրների վերաբերյալ հատուկ կայքերը: Որպես օրինակ կարող են ծառայել հետևյալ կայքերը՝

- ◆ *World Chambers Network*, [www.worldchambers.com](http://www.worldchambers.com): Պարունակում է տեղեկություններ յուրաքանչյուր մայրցամաքի համար՝ գործող ընկերությունների ցանկեր, առևտրային հնարավորությունների մասին տեղեկատվություն, ինչպես նաև առևտրային տեղեկատուներ:
- ◆ *Trade Port* [www.tradeport.org/ts/countries\\_index.html](http://www.tradeport.org/ts/countries_index.html): Հնարավորություն է տալիս մուտք գործել երկրների գրադարան, որը հղումներ է պարունակում 9 տարածաշրջանների շատ երկրների առևտրային, ֆինանսական, քաղաքական և կոնտակտային տեղեկատվությանը:
- ◆ *Foreign Trade On-Line*. [www.foreign-trade.com](http://www.foreign-trade.com): Աջակցում է արտադրողներին, արտահանողներին և հավանական արտահանողներին՝ օտարերկրյա գնորդներին իրենց ծառայությունների մասին տեղեկատվություն տրամադրելով:

## 9. Ինչպե՞ս պարզել մրցակիցներին և նրանց կողմից առաջարկվող ծառայությունները

Միջազգային շուկայում մրցունակ լինելու համար դուք պետք է գտնեք աշխարհով մեկ տարածված հնարավոր մրցակիցներին, որպեսզի իմանաք, թե ինչ տեսակի ծառայություններ են նրանք առաջարկում: Դա ձեզ ոչ միայն հնարավորություն կտա իմանալ, թե ինչ են ակնկալում հաճախորդները, այլ նաև գաղափարներ կտա, թե ինչպես ձևափոխեք ձեր ծառայությունները՝ եկամտաբեր լինելու համար: Դրա լավագույն ճանապարհներից մեկը այն վեբ-կայքերի մոնիտորինգն է, որոնք տրամադրում են լավագույն փորձերի և համեմատական վերլուծությունների մասին տեղեկատվություն:

Դրանցից են՝

- ◆ **Benchnet**, [www.benchnet.com](http://www.benchnet.com): Լավագույն փորձերի և համեմատական վերլուծությունների օնլայն ցանց:
- ◆ **The benchmarking Network**, [www.benchmarkingnetwork.com](http://www.benchmarkingnetwork.com).

Դուք կարող եք նաև արդյունաբերական ստանդարտներին և ձեր մրցակիցների դասակարգմանը ծանոթանալ հետևյալ կայքերի միջոցով՝

- ◆ **BtoB**, [www.netb2b.com](http://www.netb2b.com): Օնլայն պարբերական՝ մարքեթինգային և էլ-առևտրի ռազմավարությունների համար:
- ◆ **CIO.com**, [www.cio.com](http://www.cio.com): Օնլայն աղբյուր՝ գործադիր ղեկավարների համար:
- ◆ **ZDNet E-Commerce**, [www.zdnet.com/ecommerce](http://www.zdnet.com/ecommerce).

Ցանկացած շուկայում դուք կունենաք և՛ տեղական, և՛ միջազգային մրցակիցներ: Եթե ձեր պետական կառավարման մարմինների առևտրային պաշտոնյաները չեն կարող օգնել Ձեզ ճշգրտելու դրանք, ապա այն կարող եք անել արդյունաբերական տեղեկատուների, առևտրային միությունների կամ տեղական լրատվամիջոցների օգնությամբ:

## 10. Ինչպես կարելի է առավելագույնի հասցնել շահութաբերությունը

Ինչպես և ներքին շուկայում, գոյություն ունեն շահույթն ավելացնելու երկու հիմնական եղանակ՝ ավելացնել եկամուտները կամ կրճատել ծախսերը: Արտահանման ընթացքում կատարվող լրացուցիչ ծախսերի պատճառով դուք պետք է համոզված լինեք, որ շուկայում ձեր ունեցած դիրքը կապահովի այնքան եկամուտ, որը կփակի ձեր ծախսերը: Սովորաբար սա նշանակում է մրցել որակով, կամ էլ գնի և արժեքի հարաբերակցությամբ, ոչ թե գնով, կամ առաջարկել բացառիկ ծառայություն, որի համար սպառողները պատրաստ են վճարել լրացուցիչ գումար:

Ձեր ծախսերը հավանաբար ավելի ցածր կլինեն, եթե դուք կարողանաք արտահանել ծառայությունն առանց լքելու Ձեր գտնվելու վայրը: Այստեղ դուք ունեք երկու տարբերակ՝ արտահանել արտերկիր էլեկտրոնային եղանակով կամ վաճառել ձեր ծառայությունները ներքին շուկա ելած օտարերկրյացիներին: Ծախսերը կարող են կրճատվել՝ առավելագույնի հասցնելով ձեռքի տակ եղած միջոցների օգտագործումը, ինչպես նաև այն միջոցների օգտագործումը, որոնք հնարավոր է ձեռք բերել ցածր ծախսերով: Օրիինակ՝ դուք կարող եք օգտվել կառավարական մարմինների կամ առևտրային միությունների կողմից տրամադրվող աջակցությունից:

Օգտագործեք ձեր ընկերության շուկայական հետազոտությունների եզրակացությունները՝ պարզելու համար, թե ինչպես խուսափել ծախսերից: Շահութաբերությունը առավելագույնի հասցնելու համար դուք պետք է հավասարակշռեք ծախսերն ու օգտագործեք ձեր շուկային և ձեր մատուցած ծառայություններին առավելագույնս համապատասխանող ծրագիր:

## **11. Ինչպե՞ս կարելի է օգտագործել երկրի արտահանման ազգային ռազմավարությունը՝ մատուցվող ծառայության արտահանման խթանման համար**

Նախ պետք է ուսումնասիրել այդ ռազմավարությունը և տեսնել, թե արդյոք այն հասցեագրված է Ձեր կարիքներին՝ որպես ծառայություն արտահանողի: Եթե ոչ, ապա պետք է դրդել Ձեր առևտրային կամ արդյունաբերական միությանն իրականացնելու լրբինգ Ձեր ծառայության ոլորտի համար առավել հարմար ռազմավարություն մշակելու:

Երկրորդ, դուք պետք է փորձեք մասնակցել ցանկացած ազգային առևտրային խնդիրների լուծման կամ արտահանման խթանման ջանքերին, որոնք համապատասխանում են Ձեր արտահանման զարգացման ռազմավարությանը:

Արտահանման խթանման ազգային ռազմավարությունները երբեմն սխալ կերպով ենթադրում են, որ ապրանքների համար մշակված նախաձեռնությունները հասցեագրված են նաև ծառայությունների ոլորտի կարիքներին: Արտահանման խթանման ազգային ծրագրերում ծառայություններ արտահանողների կարիքների ներառումը ապահովելու նպատակով կարող են կիրառվել որոշ քայլեր՝

- ◆ ապահովել, որպեսզի ծառայությունների ոլորտի միությունը արտահանման խթանման պլանավորման և առևտրային քաղաքականության մշակման ու զարգացման ժամանակ ունենա ձայնի իրավունք
- ◆ ճշգրտել ծառայությունների արտահանման հիմնական շուկաները և բանակցել բիզնեսի ժամանակավոր մուտքի նպաստավոր պայմանների շուրջ
- ◆ Ուսանել արտասահմանում առևտրային կցորդներին և ներկայացուցիչներին, ծառայությունների արտահանմանը լավագույնս աջակցելու նպատակով:

Պետությունը կարող է օգնել ապահովելու ծառայությունների միությունների և որոշ ձեռնարկությունների արդյունավետությունը՝ ճանաչելով նրանց որպես ծառայությունների արդյունաբերության ներկայացուցիչներ:

Գործնականում արտահանման ազգային ռազմավարությունը Ձեր օգտին օգտագործելու ամենաարդյունավետ եղանակն է կառավարական մարմիններին հնարավորինս չափ ծառայությունների ոլորտում ընդգրկելը և ոլորտի կարևորությունը նրանց ցույց տալը:

## **12. Ինչու՞ են մշակութային տարբերությունները կարևոր ծառայությունների արտահանման համար**

Օտարերկրյա շուկաներում ձախողման ամենահիմնական պատճառը ոչ թե կարողությունների անբավարարությունն է, այլ մշակութային գործոնների նկատմամբ անուշադրությունը: Մարդիկ նախընտրում են գործարք են կատարել նրանց հետ, ում հետ իրենց հարմարավետ են զգում: Մեր մշակութային համոզմունքներն ու արժեքները ձևավորում են մեր ենթադրությունները և մեր գործելաոճը:

Գործարարության տեսանկյունից մշակույթը կարող է դիտվել որպես կանոնների ամբողջություն, որոնք կանոնակարգում են որոշակի ազգի քաղաքացիների հետ վարվող հարաբերությունները: Այս կանոնները թելադրում են վարվելաձևի կանոնները և տվյալ մշակույթում հաղորդակցության և բանակցությունների ոճը:

Ծառայություններ արտահանողի համար մշակութային այս տարբերությունները հասկանալի ու կառավարելի հատկապես կարևոր է մի քանի պատճառներով.

- ◆ Հավանական գնորդները կորոշեն օգտվել ձեր ծառայություններից այն դեպքում, երբ նրանք կզգան, որ դուք կարող եք բավարարել իրենց պահանջները: Որոշումը մասնակիորեն կախված կլինի նրանից, թե որքան պատշաճ դուք կհաղորդակցվեք նրանց հետ:
- ◆ Սպառողները կգնահատեն Ձեր ծառայությունների որակը՝ ելնելով Ձեր և Ձեր անձնակազմի հետ իրենց փոխադարձ շփումից, որը տեղի է ունենում մշակութային համատեքստում: Եթե Ձեր վարքագիծը մշակութային առումով անհամապատասխան է, հաճախորդները անբավարարված կմնան, նույնիսկ եթե ծառայությունը տեխնիկապես ընդունելի է:
- ◆ Դուք և Ձեր անձնակազմը հակված կլինի մեկնաբանել հաճախորդների կարիքներն ու նախասիրությունները Ձեր սեփական մշակութային տեսանկյունից: Եվ դուք կգնաք այդ կարիքները ճիշտ չկռահելու ռիսկի, եթե չհասկանաք Ձեր հաճախորդների մշակութային նախապատվությունները:

Եթե ապրանք արտահանողները կարող են աշխատել տվյալ շուկայի ներկայացուցիչների և դիստրիբյուտորների հետ, որոնք քաջատեղյակ են տեղական մշակույթից, ապա ծառայություններ արտահանողներին անհրաժեշտ են անձնական հարաբերություններ հաստատել հնարավոր գնորդների հետ՝ շուկայում վստահություն ձեռք բերելու նպատակով: Այսպիսով, մշակութային արժեքներին և ավանդույթներին ծանոթանալը թիրախային շուկա մուտք գործելու նախապատրաստության վճռական մասն է:

### 13. Որո՞նք են տարբեր երկրների գործարար գործելակերպերի հիմնական տարբերությունները

Բիզնեսի ձևերը և մեթոդները, կրոնական ավանդույթները, սնունդը, հումորը և հազուստը երկրից երկիր զգալիորեն տարբերվում են: Ուստի, մինչև նպատակային շուկա մեկնելը, դուք պետք է իմանաք որոշ հիմնական կանոններ, ինչպիսիք են՝

- ◆ *Ինչպե՞ս են օտարները ողջունում միմյանց:* Որոշ երկրներում գործարարները ազատ են և ոչ պաշտոնական, այլ երկրներում պաշտոնական վերաբերմունքը առաջնային է և մարդկանց դիմելիս դուք պետք է միշտ օգտագործեք նրանց կոչումները: Պետք է նաև հաշվի առնել ողջունելու տարբեր գործածվող ձևերը: Դա կարող է լինել ձեռքսեղմում, գրկախառնություն, համբույր կամ ձեռքերը աղոթելու դիրքով պահելը: Տեղեկացվածության պակասը կարող է հանգեցնել անհարմար իրավիճակների:
- ◆ *Ինչպե՞ս են փոխանակվում այցեքարտերը:* Որոշ երկրներում, որտեղ այցեքարտը դիտվում է որպես անձի հասարակական դիրքը բնութագրող նշան, փոխանակումը գործարար արարողակարգի առանցքային մասն է, Օրինակ՝ Ճապոնիայում քարտը ստանալուց հետո անհրաժեշտ է ուշադիր զննել այն, կարդալ քարտատիրոջ կոչումը և ընկերության անվանումը, գլխով հաստատել, որ տեղեկատվությունը ընկալվել է և, թերևս, նաև պատշաճ մեկնաբանություն անել:
- ◆ *Ընդունված է արդյո՞ք նվերներ հանձնել, որպես հարգանքի և բարձր գնահատանքի նշան:* Գոյություն ունեն նվերներ հանձնելու մշակութային նորմեր: Որոշ երկրներում կան ընդունելի «նվերների» օրենսդրական սահմանափակումներ, մյուսներում կիրառական են շռայլ նվերները:

- ◆ *Ինչն է սովորական հանրային տեսանկյունից:* Եթե դուք հրավիրված եք հանրային միջոցառման, ապա պետք է ընդունեք հրավերը որպես հարգանքի նշան: Շատ երկրներում աշխատանքային ժամերից դուրս այդ միջոցառումները համարվում են ընկերության մասին մանրամասներ իմանալու հարմար առիթ:
- ◆ *Ինչպե՞ս են անցկացվում գործարար հանդիպումները:* Որոշ երկրներում հանդիպումները կազմում են գործարարությամբ զբաղվելու հիմնական մասը: Որոշ տեղերում հանդիպումները ոչ պաշտոնական են, պարբերական ընդհատումներով և այնպիսի բնույթ ունեն, որն ավելի համապատասխանում է հասարակական հավաքույթներին: Այլ երկրներում դրանք ավելի խիստ են, և դուք պարտավոր եք ուղարկել օրակարգ և Ձեր ընկերությունից մասնակիցների ցուցակ: Որոշ երկրներում կարևոր է ճշտապահությունը, և դուք պետք է անպայման լինեք ժամանակին, եթե ոչ մի քիչ ավելի շուտ: Այլ երկրներում ձեզ հյուրընկալողը կարող է սպասեցնել մեկ ժամ կամ ավելի:
- ◆ *Ինչպե՞ս են սովորաբար զարգանում գործարար հարաբերությունները:* Արտասահմանյան հաճախորդի հետ հարաբերությունների ձևավորումից հետո կարևոր է, որպեսզի աշխատեք այն պահպանել և զարգացնել: Հեռավորությունը կարող է արագորեն «ծերացնել» կապը և այն դարձնել անօգուտ, եթե հաղորդակցություն չպահպանվի: Շատ ընկերությունների համար դա նշանակում է ամսական կամ եռամսյա այցելություններ հաճախորդներին կամ մատակարարներին՝ շուկայում բարձր «տեսանելիություն» ապահովելու համար:

## 14. Որտեղի՞ց կարելի է գտնել տեղեկատվություն կոնկրետ շուկաներում գործարար գործելակերպերի և վարվելաձևերի մասին

Վարվելաձևը խորապես արմատավորված է շատ մշակույթներում և պահպանելով այն՝ դուք հարգանք եք ցուցաբերում ձեր գործընկերների նկատմամբ: Հետևաբար անհրաժեշտ է հասկանալ տեղական վարվելաձևի հիմնական կանոնները ինչպես գործարար, այնպես էլ հասարակական հանդիպումների և միջոցառումների համար: Այնպիսի երևույթները, ինչպիսիք են մարդու անձնական շփումները, ժեստերը, հյուրասիրությունը, նվերները և այլն տարբեր երկրներում տարբեր են, բայց յուրաքանչյուրը կգնահատի դրանց մասին ձեր գիտելիքները և ձեր գործադրած ջանքերը հարմարվելու նրանց հատուկ նախապատվություններին:

Շատ գրքեր են գրվել տարբեր երկրներում գործարարությամբ զբաղվելու մասին: Նմանատիպ գրքեր կարող են լինել նաև ձեր գրադարանում: Դուք կարող եք խորհրդակցել և տեղեկատվություն ստանալ՝

- ◆ թիրախ ընտրված շուկայի պաշտոնակիցներից,
- ◆ դեսպանատներից
- ◆ ձեր երկրում սովորող կամ աշխատող հետաքրքրող երկրի քաղաքացիներից
- ◆ միջազգային ուսուցման համապատասխան համալսարանական ծրագրերից,
- ◆ միջմշակութային հարաբերություններում մասնագիտացած մասնավոր խորհրդատուներից,
- ◆ վեբ-կայքերի, ինչպիսիք են՝
  - [www.odci.gov/cia/publications/factbook/index.html](http://www.odci.gov/cia/publications/factbook/index.html) (CIA, The World Fact Book)
  - [www.eticon.com/busetiq.htm](http://www.eticon.com/busetiq.htm) (Eticon, Inc., վարվելաձևի խորհրդատուներ)

- [www.jrcanda.com/art\\_etiquette.html](http://www.jrcanda.com/art_etiquette.html)
- <http://home3.americanexpress.com/smallbusiness/resources/expanding/global/countries.shtml>
- [www.exporthotline.com](http://www.exporthotline.com) (Շուկայական հետազոտությունների զեկույցներ, առևտրային գրադարան և 80 պետությունների շուկայի վերաբերյալ տեղեկություններ):

Դուք հավանաբար առավել նպատակահարմար կգտնեք մինչև արտասահման մեկնելը ժամանակ անցկացնել նպատակային շուկայի մարդկանց հետ, որպեսզի ճիշտ պատկերացում կազմեք վարվելաձևի հիմնական կանոնների մասին:

## 15. Ինչպես հարմարեցնել ծառայությունները որոշակի շուկային

Մշակութային արժեքների շնորհիվ մենք ունենք ենթագիտակցական աշխարհայացք, որի միջոցով հաղորդակցվում ենք մյուսների հետ: Այդ ենթագիտակցորեն ներծծված ուղեցույցի շնորհիվ մենք կարողանում ենք ապրել մեր կյանքի մեծ մասն առանց շարունակական, գիտակցական որոշումներ կայացնելու այն մասին, թե ինչպես գործել: Այնուամենայնիվ, երբ մենք տեղափոխվում ենք այլ մշակույթ, պետք է մի կողմ դնենք մեր բնական ռեֆլեքսները և գիտակցաբար նոր վարքագիծ սովորել:

Կոնկրետ շուկային Ձեր ծառայությունը հարմարեցնելու համար դուք պետք է հարմարվեք գործարարությամբ զբաղվելու տեղական ձևերին և ծառայությունների մատուցման համապատասխան մշակութային միջոցներին: Ահա որոշ կանոններ, որոնք պետք է հաշվի առնել՝

- ◆ Գործարարությամբ զբաղվելու տեղական ձևերին հարմարվելը կնշանակի փոփոխություններ՝
  - աշխատանքային ժամերում
  - լեզուներում, որոնց համար օգնություն է պետք
  - բաշխման տեղակայման տեսակներում
  - ծառայության մատուցման ձևերում:
- ◆ Միաժամանակ, համապատասխան ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ է՝
  - դառնալ ավել կամ պակաս պաշտոնական և հարգալից
  - հաճախորդներին տալ ապահովության զգացում
  - հավաստիացնել, որ ծառայությունը միանգամայն կայուն է ժամանակի ընթացքում
  - կենտրոնանալ գլխավորապես ծառայությունների արագ մատուցման կամ հաճախորդների հետ հարաբերությունները զարգացնելու վրա
  - ակնկալել, որ աշխատակազմը կգործի սահմանված ընթացակարգով կամ նախաձեռնություն կիրականացնի
  - առավելագույն պատասխանատվություն ստանձնել աշխատակազմի յուրաքանչյուր անդամի համար կամ ուժեղացնել յուրաքանչյուրի անձնական պատասխանատվության զգացումը

- բուլոր հաճախորդներին և աշխատակազմի անդամներին վերաբերվել հավասար կամ հարգել հասարակական դիրքի և կոչումների միջև եղած տարբերությունները
- օգնել անձնակազմին կենտրոնանալ խմբային կամ անձնական նպատակների վրա:

## 16. Որո՞նք են արտասահմանում ծառայությունների մատուցման բնագավառում թույլ տրվող ամենատարածված մշակութային սխալները

Ծառայությունների առևտրում պահանջվում է ավելի զգայուն լինել մշակութային գործոնների նկատմամբ, քան ապրանքների առևտրի դեպքում: Ամենատարածված սխալը մատուցվող ծառայությունների ընկալման և գնահատման վրա մշակույթի ազդեցության թերագնահատումն է: Այլ տարածված սխալներ են.

- ◆ *Չափից դուրս ոչ պաշտոնական լինելը: Օրինակ՝ առանց թույլտվության անուններով դիմելը:* Շատ երկրներում նախատեսված է օգտագործել կոչումներ, մինչև առաջարկվի անցնել անուններին: Օրինակ, Գերմանիայում գործարարության շրջանակներում չեն օգտագործվում անուններ: Ի տարբերություն, Թայլանդում մարդիկ միմյանց դիմում են անուններով (որին նախորդում է պարոն, տիկին, օրիորդ բառերի թայլանդերեն անվանումները) և թողնում են ազգանունները շատ պաշտոնական առիթների և գրավոր հաղորդակցության համար:
- ◆ *Ենթադրելը, որ այն ինչ լավ է աշխատում սեփական մշակույթում, կաշխատի նաև թիրախային շուկայում:* Որոշ մշակույթներում հաղորդակցությունը հակված է լինել ուղղակի, նույնիսկ եթե որևէ մեկի անձնական զգացումները հնարավոր է տուժեն: Այլ մշակույթներում այդպիսի վարքագիծը կարող է ունենալ կործանարար հետևանքներ: Որոշ երկրներում մարդիկ ուշադրություն են դարձնում անհատի զգացումների (կամ «դեմքի») վրա և խուսափում են պատճառել ցանկացած անձնական անհարմարություն:
- ◆ *Հարգանքի և վստահության հարաբերություններ ստեղծելու համար շատ քիչ ժամանակ տրամադրելը:* Որոշ շուկաներում շեշտը կարող է դրվել պայմանագրային հարաբերությունների և տարածայնությունները լուծելու հարցում իրավական համակարգի օգտագործման վրա: Այլ հասարակություններում, այնուամենայնիվ, հիմնական շեշտը դրվում է անհատների միջև վստահության վրա և խնդիրները լուծվում են ընկերական կապերի շնորհիվ:

## 17. Ի՞նչպիսի գովազդային նյութեր են անհրաժեշտ

Առնվազն Ձեզ անհրաժեշտ կլինեն այցեքարտեր և Ձեր կարողությունների, սպասարկվող հաճախորդների տեսակների ու տրամադրվող օգուտների մասին գրավոր նկարագիր: Կախված նրանից, թե դուք ինչպես եք ձեռք բերում նոր հաճախորդներ, Ձեզ նաև անհրաժեշտ կլինեն՝

- ◆ գովազդային բրոշյուր
- ◆ Ձեր տպագրած հոդվածների կրկնօրինակները
- ◆ Ձեր կամ Ձեր ընկերության մասին լրատվամիջոցների լուսաբանման կրկնօրինակները, և
- ◆ վեբ կայք:

Բրոշյուրը ձեր ծառայությունների գովազդման առաջին կարևոր գործիքն է: Մինչ տպագրին կամ գրաֆիկական դիզայներին հանդիպելը, դուք պետք է հստակ իմանաք, թե ինչ եք ուզում ներառել բրոշյուրում: Այն պետք է ներառի այն ծառայությունների հստակ նկարագիրը, որոնք դուք կարող եք մատուցել պոտենցիալ հաճախորդներին, Ձեր հնարավորությունների և փորձի մասին ապացույցներ, մատուցվող ծառայությունների հետ կապված օգուտներ և ներկայիս հաճախորդների երաշխավորագրեր: Ձեր բրոշյուրը պետք է լինի որքան հնարավոր է հակիրճ, ուշագրավ և մասնագիտական: Ստեղծագործ ընկերության կամ տպագրիչի հետ բրոշյուրը քննարկելիս տեղեկացրեք նրանց, նպատակների ու պահանջների մասին, ինչպես նաև որոշակի պատկերացում տվեք Ձեր բյուջեի մասին: Համոզվեք, որ նրանք գիտեն ձեր պահանջները և նրանցից պահանջեք բրոշյուրը գնորդների համար առավել գրավիչ դարձնող այնպիսի առաջարկներ, որոնք համապատասխանում են ձեր բյուջեին:

Պոտենցիալ հաճախորդներին ուղարկվող ցանկացած բրոշյուրին պետք է կցվի Ձեզ և Ձեր ընկերությունը ներկայացնող մի էջանոց նամակ: Կարող եք նաև կցել Ձեզ կամ Ձեր ընկերությանը վերաբերող ցանկացած լրատվամիջոցային լուսաբանման կրկնօրինակ: Այնուամենայնիվ, ավելի լավ է միանգամից շատ տեղեկություն չուղարկել: Թող պոտենցիալ հաճախորդներն իմանան, որ դուք լրացուցիչ տեղեկություններ ունեք և պահանջի դեպքում ուրախությամբ կտրամադրեք դրանք:

Հաճախորդներն ակնկալում են, որ ի վիճակի կլինեն Ձեր ընկերության մասին տեղեկություններ ստանալ օնլայն տարբերակով, ուստի անհրաժեշտ է ունենալ կորպորատիվ վեբ կայք: Հաշվարկված է, որ ինտերնետային գովազդի միջոցով կարող եք ձեռք բերել մեծ լսարան ավանդական գովազդի արժեքի 5%-ից ցածր գնով: Վեբ կայքով Ձեր ծառայությունները կարող են վաճառվել ամբողջ օրվա ընթացքում, ամբողջ աշխարհում և ամեն օր: Գոյություն ունեն բազմաթիվ տեղեկատվական տեխնոլոգիական ընկերություններ, որոնք կարող են ձեզ օգնել ստեղծելու ձեր կարիքներին առավել համապատասխանող վեբ կայք:

Գովազդային միջոցները պետք է օգտագործվեն միասին՝ որքան հնարավոր է մեծ լսարան և, հետևաբար, մեծ թվով գնորդներ գրավելու համար:

## 18. Ի՞նչ պետք է պարունակեն գովազդային նյութերը

Հիշեք, որ պոտենցիալ հաճախորդները փնտրում են երաշխիքներ, որ դուք կարող եք բարեհաջող բավարարել իրենց կարիքները: Այսպիսով, գովազդային նյութերը պետք է պարունակեն.

- ◆ օգուտների վերաբերյալ հաղորդագրություններ («Ահա թե ինչ կարող է Ձեզ տալ մեր ծառայությունը...»)
- ◆ մրցակցային դիրքորոշման հաղորդագրություններ («Ահա թե ինչով ենք մենք տարբերվում մյուսներից...»)
- ◆ շնորհակալական ուղերձներ բավարարված հաճախորդներից, ներառյալ կառավարական հաստատություններից: Հավաստիացեք, թե արդյո՞ք կարող եք օգտագործել այդ հաճախորդների անունները Ձեր գովազդային նյութերում
- ◆ Ձեր ընկերության կարողությունների բնութագիր
- ◆ Նույնամասն շուկաներում ձեր փորձի նկարագրություն
- ◆ Ձեր նախկին կամ ներկայիս հաճախորդների ցանկ

- ◆ Ձեր կամ Ձեր ընկերության ստացած մրցանակների ցանկ
- ◆ որակը հավաստող վկայականների ցանկ կամ նկարագրություն
- ◆ այն միությունների ցանկը, որոնց անդամ է հանդիսանում Ձեր ընկերությունը
- ◆ մեջբերումներ լրատվամիջոցներում լուսաբանված նյութերից:

Ձեր ինտերնետային կայքը պետք է պարունակի նույնանման տեղեկատվություն, ինչպես նաև կրթական և այլ օգտակար տեղեկություններ կայքից օգտվողների համար: Դուք կարող եք ներառել նաև Ձեր ծառայությունների մասին նախապատմություններ և լրացուցիչ տեղեկությունների համար ինտերնետային կայքերի հասցեներ:

Եթե դուք վստահ չեք, թե ինչպես առավել պարզ ու արդյունավետ հաղորդակցվել ձեր գովազդային նյութերի միջոցով, դուք կարող եք դիմել մասնագետների օգնությանը:

## 19. Որո՞նք են օգտագործելու համար հարմար վեբ կայքին բնորոշ գծերը

Էլեկտրոնային առևտրում մրցունակ լինելու համար Ձեր ընկերությանն անհրաժեշտ է օնլայն ներկայություն: Պետք է համոզված լինեք, որ այն կենտրոնացած է հաճախորդների վրա և պարբերաբար թարմացվում է: Օգտագործողի համար հարմար վեբ կայքի բնութագրիչներն են՝

Վեբ կայքը ինքնին պետք է՝

- ◆ բեռնավորվի 3 վայրկյանից քիչ ժամանակահատվածում
- ◆ նախ պետք է բեռնավորվի տեքստը, հետո գրաֆիկները
- ◆ յուրաքանչյուր հաջորդ էջը պետք է բեռնավորվի 1 վայրկյանում
- ◆ չպահանջի նայելու համար լրացուցիչ տեխնոլոգիա
- ◆ պահանջվող տեղեկությունը տրամադրի 2 կամ ավելի քիչ անգամ սեղմելուց հետո
- ◆ ցույց տա բացատրական տեքստ, երբ մկնիկը վերնագրի վրա է
- ◆ առաջին էջում տրամադրի առաջին անհրաժեշտության և առաջնահերթ տեղեկատվությունը
- ◆ ապահովի հեշտ վերադարձ սկզբնական էջ:

Վեբկայքը պետք է պարունակի օգնության ստանդարտ հնարավորություններ, ինչպիսիք են՝

- ◆ տեղեկատվական հոդվածներ և նոր ամփոփագրեր
- ◆ որոնման ֆունկցիա
- ◆ հաճախակի տրվող հարցերի պատասխաններ
- ◆ առընչվող կայքերին հղումներ:

Վեր կայքը պետք է տրամադրի լրացուցիչ տեղեկատվություն, ինչպիսիք են՝

- ◆ հաշտության հասնելու համար ռազմավարական խորհուրդներ
- ◆ ինքնազնահատման միջոցներ,
- ◆ որոշումներ կայացնելու համար ուղեցույցներ
- ◆ մատուցողին ընտրելու ուղեցույցներ
- ◆ համեմատման գործիքների շրջանակ:

## 20. Ինչ տեղեկություն պետք է պարունակի այցեքարտը

Այցեքարտը ամենակարևոր մարքեթինգային գործիքն է: Ձեր և պոտենցիալ հաճախորդի հանդիպումից հետո այն դեռ երկար կմնա վերջինիս մոտ: Այցեքարտում պարունակվող տեղեկատվությունը ոչ միայն պետք է հնարավորություն տա մարդկանց կապվել Ձեզ հետ, այլև պետք է ամրապնդի Ձեր մրցակցային և մասնագիտական կերպարը: Այն առնվազն պետք է ներառի՝

- ◆ Ձեր անունը՝ համապատասխան մասնագիտական պաշտոնի կամ կոչումի նշումով
- ◆ Ձեր ընկերության տեսակը
- ◆ Ձեր ընկերության անունն ու ապրանքանշանը
- ◆ Ձեր ընկերության մատուցած ծառայության տեսակի նկարագրությունը՝ մեկ տողով
- ◆ Ձեր հասցեն՝ ներառյալ երկրի անունը
- ◆ Ձեր հեռախոսահամարը և ֆաքսի համարը՝ ներառյալ երկրի և քաղաքի կոդերը
- ◆ Ձեր էլ-փոստի և կազմակերպության վեբ-կայքի հասցեները:

Քարտի վրա տեղավորեք այնքան տեղեկատվություն, որքան հնարավոր է, բայց միշտ պետք է տեղ թողնել, որպեսզի ստացողը կարողանա նշումներ կատարել նրա վրա: Եթե Ձեր տեղեկատվությունը պատշաճ կամ ընթերցելի կերպով չի տեղավորվում քարտի վրա, օգտագործեք նաև հետևի կողմը: Տարածված են դառնում ծավրոլ այցեքարտերը, որոնք բացվում են փոքր գրքույկի պես: Սովորական գործնական տեղեկատվությունը տպվում է քարտի արտաքին կողմից, իսկ ներսի կողմը պարունակում է ընկերության ծառայությունների և առավելությունների մանրամասն նկարագրությունը: Անկախ ձեր ընտրած այցեքարտի տեսակից՝ համոզվեք, որ այն ստանդարտ չափի է և կարող է տեղավորվել դրամապանակում կամ քարտապանակում կամ կարող է հեշտորեն ամրացվել հասցեների թղթապանակին:

Կախված շուկայից, դուք կարող եք նպատակահարմար գտնել երկլեզու քարտ ունենալը՝ մի կողմում ձեր մայրենի լեզվով, մյուսում՝ նպատակային շուկայի առավել տարածված լեզվով:

Որոշ ընկերություններ իրենց այցեքարտերի հետևում օրացույց կամ մետրական չափումների աղյուսակ են տեղադրում՝ նպաստելով հաճախորդի կողմից դրա առավել հաճախ օգտագործմանը:

Ձեր ընկերությունում օգտագործվող այցեքարտերը պետք է ունենան միանման տեսք: Ձեր պիտույքները պետք է լինեն նույն ոճի և պարունակեն նույն տեղեկությունը, ինչ Ձեր քարտը: Պիտույքները կարող են ծառայել նաև որպես արդյունավետ և մասնագիտական մարքե-

թինգային գործիք Ձեր պոտենցիալ և ընթացիկ հաճախորդների, ինչպես նաև Ձեր գործին առնչվող այլ անձանց հետ հաղորդակցվելիս:

Եթե Ձեր գովազդային բյուջեն սահմանափակ է, ապա ավելի լավ է կենտրոնանալ որակյալ այցեքարտի վրա, քան օգտագործել միջին որակի բազմազան նյութեր:

## **21. Ինչպե՞ս են ԾԱԳՅ-ն և ԱՅԿ համաձայնագրերը օգնում ծառայություններ արտահանողին**

ԱՅԿ համաձայնագրերը, որոնց նպատակն է առավել ազատ, մրցունակ և զարգացող երկրների համար բարենպաստ առևտրային համակարգի ստեղծումը, տարածվում են գրեթե բոլոր խոշոր արտահանման շուկաների և ապրանքների ու ծառայությունների ոլորտների վրա: Ծառայություններ արտահանողների առաջնային օգուտը միջազգային առևտրի նկատմամբ կիրառվող կանոնների թափանցիկության և կանխատեսելիության բարձրացումն է:

Արտահանողներին վերապահելով առանձին շուկաների մուտքի հայտնի և անփոփոխ պայմանների հիման վրա տեղեկացված որոշումներ կայացնելու իրավունքը՝ ԾԱԳՅ-ը խրախուսում է ծառայությունների որակի բարձրացումը, գների մրցունակությունն ու ծառայությունների մատուցման մեջ նորամուծությունը: ԾԱԳՅ-ը սկսել ու շարունակում է բարելավել իր Անդամների մուտքը դեպի ծառայությունների միջազգային հսկայական շուկա:

ԾԱԳՅ ոչ խտրականության սկզբունքի (ԱԱԲ) համաձայն՝ Անդամը մյուս բոլոր Անդամների նկատմամբ պետք է ցուցաբերի նույն վերաբերմունքը, որը ցույց է տալիս իր առևտրային գործընկերներից որևէ մեկին: Շուկայի մատչելիության պայմանները ներկայացված են հատուկ ոլորտներում բանակցված պարտավորություններում: Ազգային մոտեցումը նույնպես ԾԱԳՅ-ի ներքո պարտավորություն է: Այն ոլորտներում, որտեղ Անդամը ստանձնել է ազգային մոտեցման պարտավորություն, չպետք է գործադրի խտրական մոտեցում՝ ի նպաստ իր ներքին ծառայությունների կամ ծառայություններ մատուցողների:

Չարգացող երկրների արտահանողները կարող են օգտվել ԱՅԿ համաձայնագրերի ներքո մատչելի դարձած տեղեկատվության առավելությունից՝ նրանց հետաքրքրող շուկաներում բազմազան գործոններին իրական գնահատական տալու համար: Օրինակ՝ իրականացվող ընթացիկ տնտեսական քաղաքականության մասին տեղեկատվությունը կարելի է ձեռք բերել առանձին երկրների ԱՅԿ առևտրային քաղաքականության վերաբնություններից: Չարգացող Անդամների ծառայություններ մատուցողներին աջակցելու նպատակով ԾԱԳՅ-ն բոլոր զարգացած Անդամներին կոչ է անում հիմնել կոնսուլտային կետեր՝ տեխնիկական և առևտրային տեղեկատվություն տրամադրելու համար: ԾԱԳՅ-ի ազգային հատուկ պարտավորությունների ժամանակացանկերը կարող են օգտագործվել թիրախային շուկաները համեմատելու և այնտեղ մուտք գործելու լավագույն ճանապարհները որոշելու համար: Հետևելով ԱՅԿ համապատասխան բանակցությունների զարգացման գործընթացին՝ արտահանողները կարող են նախապես իմանալ հետագա հնարավոր կանոնակարգային փոփոխությունների մասին և ըստ դրա մշակել և զարգացնել իրենց բիզնես ռազմավարությունները:

## Վեճերի կարգավորում

ԱՅԿ-ում գործում է նաև Անդամների միջև վեճերի կարգավորման մեխանիզմը: Ծառայությունների արտահանումներն անարդար կերպով օտարերկրյա շուկաներում խոչընդոտվելու դեպքում տվյալ երկրի կառավարության կողմից հարցը կարող է ներկայացնել ԱՅԿ վեճերի կարգավորման մարմին: Վեճերի կարգավորման մարմինն օժտված է գործի քննման նպատակով փորձագետների «քննախումբ» նշանակելու, ինչպես նաև այդ քննախմբի եզրակացությունները կամ բողոքարկման արդյունքներն ընդունելու կամ մերժելու բացառիկ լիազորությամբ: Այն վերահսկում է վեճերի և հանձնարարականների կատարումը, և որևէ երկրի կողմից դրանք չկիրառելու դեպքում օժտված է այդ երկրի նկատմամբ պատժամիջոցներ սահմանելու լիազորությամբ:

## 22. Որտեղից կարելի է ստանալ ծառայության ոլորտում ազատականացման պարտավորությունների մասին տեղեկատվություն

ԵԱԳՅ-ի համաձայն՝ յուրաքանչյուր Անդամից պահանջվում է ներկայացնել ծառայությունների ոլորտներում պարտավորությունների ժամանակացանկ: Եթե դուք պլանավորել եք Ձեր ծառայությունները նոր շուկա արտահանել, ապա ուսումնասիրեք Ձեր թիրախային շուկայի հատուկ պարտավորությունների ժամանակացանկը և ճշտեք, թե Ձեր ծառայության տեսակի համար ինչ է առաջարկում այդ շուկան՝ շուկայի մատչելիության և ազգային մոտեցման տեսանկյունից:

Դեպի այս պարտավորությունների ցանկեր մուտք ստանալու ամենահեշտ եղանակներից մեկը Եվրոպական հանձնաժողովի վեբ-կայքի միջոցով է՝ Ծառայությունների համաշխարհային առևտրի INFO-POINT հասցեում՝ <http://gats-info.eu.int/gats-info/gatscomm.pl?MENU=fff>: Այս կայքը հնարավորություն է ընձեռում Ձեզ հետաքրքրած շուկաների և Ձեր ոլորտում պարտավորությունների մասին կոնկրետ տեղեկություններ ստանալ: Պարտավորությունները տեղակայված են նաև ԱՅԿ վեբ-կայքում:

ԱՅԿ վեբ-կայքը պարունակում է նաև առևտրի ազատականացման համաձայնագրերի մասին ոլորտային հաշվետվություններ, ինչպես նաև նոր զարգացումների մասին տեղեկատվություն: Այս տեղեկատվությունը ստանալու համար պետք է այցելել ԱՅԿ վեբ-կայքը, ընտրել *A-Z list*, ընտրել *Services, trade in* և ընտրել հետաքրքրող թեման: ԱՅԿ փաստաթղթերը և հրապարակումները նայելու համար պետք է այցելել ԱՅԿ վեբ-կայք, ընտրել *Search* և հետևել որոնման ցուցումներին՝ գտնելու համար հետաքրքրող տեղեկատվությունը:

**ԱՅԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ  
ՄԱՍԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ ԳԼԽԱՎՈՐ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

**ԳԼՈՒԽ I**

*Հոդված I*

**ՇՐՋԱՆԱԿՆԵՐ ՈՒ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ**

Շրջանակներ ու սահմանումներ

**ԳԼՈՒԽ II**

*Հոդված II*

*Հոդված III*

*Հոդված III<sup>bis</sup>*

*Հոդված IV*

*Հոդված V*

*Հոդված V<sup>bis</sup>*

*Հոդված VI*

*Հոդված VII*

*Հոդված VIII*

*Հոդված IX*

*Հոդված X*

*Հոդված XI*

*Հոդված XII*

*Հոդված XIII*

*Հոդված XIV*

*Հոդված XIV<sup>bis</sup>*

*Հոդված XV*

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ**

Ազգերի առավել բարենպաստության մոտեցում

Թափանցիկություն

Գաղտնի տեղեկությունների բացահայտում

Չարագոյ երկրների աճող մասնակցություն

Տնտեսական միասնացում

Աշխատանքի շուկաների միասնացման համաձայնագրեր

Ներքին կանոնակարգում

Ճանաչում

Մենաշնորհներ և ծառայությունների բացառիկ մատուցողներ

Գործարար գործելակերպեր

Պաշտպանական արտակարգ միջոցներ

Վճարումներ և փոխանցումներ

Սահմանափակումներ վճարային հաշվեկշռի պաշտպանության նպատակով

Պետական գնումներ

Ընդհանուր բացառություններ

Անվտանգության հետ կապված բացառություններ

Լրավճարներ

**ԳԼՈՒԽ III**

*Հոդված XVI*

*Հոդված XVII*

*Հոդված XVIII*

**ՀԱՏՈՒԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Շուկայի մատչելիություն

Ազգային մոտեցում

Լրացուցիչ պարտավորություններ

**ԳԼՈՒԽ IV**

*Հոդված XIX*

*Հոդված XX*

*Հոդված XXI*

**ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՈՒՄ**

Բանակցություններ հատուկ պարտավորությունների շուրջ

Հատուկ պարտավորությունների ժամանակացանկ

Ժամանակացանկերի փոփոխում

**ԳԼՈՒԽ V**

*Հոդված XXII*

*Հոդված XXIII*

*Հոդված XXIV*

*Հոդված XXV*

*Հոդված XXVI*

**ՍԱՀՄԱՆԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Խորհրդակցություններ

Վեճերի կարգավորում և կիրարկում

Ծառայությունների առևտրի խորհուրդ

Տեխնիկական համագործակցություն

Միջազգային այլ կազմակերպությունների հետ հարաբերություններ

**ԳԼՈՒԽ VI**

*Հոդված XXVII*

*Հոդված XXVIII*

*Հոդված XXIX*

**ԵՃՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Օգուտների մերժում

Սահմանումներ

Հավելվածներ

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

II Հողվածից ազատումների մասին հավելված

Համաձայնագրի համաձայն ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց տեղաշարժի մասին հավելված

Օդային փոխադրման ծառայությունների մասին հավելված

Ֆինանսական ծառայությունների մասին հավելված

Ֆինանսական ծառայությունների մասին երկրորդ հավելված

Ծովային փոխադրման ծառայությունների շուրջ բանակցությունների մասին հավելված

Հեռահաղորդակցությունների մասին Հավելված

Հիմնական հեռահաղորդակցությունների շուրջ բանակցությունների մասին հավելված

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ ԳԼԽԱԿՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Անդամները,

*ընդունելով* ծառայությունների առևտրի աճող կարևորությունը համաշխարհային տնտեսության աճի և զարգացման գործում,

*ցանկանալով* ծառայությունների առևտրի համար սկզբունքների և կանոնների բազմակողմ կառուցվածք ստեղծել՝ այդ առևտուրը թափանցիկության և աստիճանական ազատականացման պայմաններում ընդլայնելու նպատակով և որպես միջոց՝ խթանելու բոլոր առևտրային գործընկերների տնտեսական աճն ու զարգացող երկրների զարգացումը,

*ցանկանալով* շուտ հասնել ծառայությունների առևտրի ազատականացման աստիճանաբար ավելի բարձրացող մակարդակների՝ բազմակողմ բանակցությունների հաջորդական փուլերի միջոցով, որոնց նպատակն է փոխշահավետ հիմունքներով խթանել բոլոր մասնակիցների շահերը և ապահովել իրավունքների ու պարտավորությունների համընդհանուր հաշվեկշիռը՝ միաժամանակ պատշաճորեն հաշվի առնելով ազգային քաղաքականությունների նպատակները,

*ճանաչելով*, ազգային քաղաքականության նպատակներն իրականացնելու նպատակով իրենց տարածքներում ծառայությունների մատուցումը կարգավորելու և դրա վերաբերյալ նոր կանոնակարգեր մտցնելու Անդամների իրավունքը, և զարգացող երկրների՝ այդ իրավունքներից օգտվելու առանձնահատուկ պահանջները, որը պայմանավորված է տարբեր երկրներում ծառայությունների կանոնակարգումների զարգացման աստիճանի առնչությամբ գոյություն ունեցող անհամաչափություններով,

*ցանկանալով* նպաստել ծառայությունների առևտրում զարգացող երկրների աճող մասնակցությանն ու դրանց ծառայությունների արտահանման ընդլայնմանը, ներառյալ՝ մասնավորապես ծառայությունների ներքին կարողությունների հզորացման ու դրանց արդյունավետության ու մրցունակության բարձրացման միջոցով,

*հատուկ ուշադրություն դարձնելով* առավել թույլ զարգացած երկրների լուրջ դժվարություններին՝ դրանց տնտեսական առանձնահատուկ իրավիճակի և դրանց զարգացման, առևտրի և ֆինանսական կարիքների տեսակետից,

սույնով համաձայնում են հետևյալի մասին.

# ԳԼՈՒԽ I ՇՐՋԱՆԱԿՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

## Հոդված I. Շրջանակներ ու սահմանումներ

1. Սույն Համաձայնագիրը տարածվում է Անդամների կիրառած այն միջոցների վրա, որոնք ազդում են ծառայությունների առևտրի վրա:
2. Սույն Համաձայնագրի նպատակներով ծառայությունների առևտուրը սահմանվում է որպես ծառայությունների մատուցում՝
  - ա) մի Անդամի տարածքից որևէ այլ Անդամի տարածք.
  - բ) մի Անդամի տարածքում որևէ այլ Անդամի ծառայությունն սպառողին.
  - գ) մի Անդամի ծառայություն մատուցողի կողմից՝ որևէ այլ Անդամի տարածքում առևտրային ներկայության միջոցով.
  - դ) մի Անդամի ծառայություն մատուցողի կողմից՝ որևէ այլ Անդամի տարածքում Անդամի ֆիզիկական անձանց ներկայության միջոցով:
3. Սույն Համաձայնագրի նպատակներով՝
  - ա) «Անդամների կիրառած միջոցները» նշանակում են միջոցներ, որոնք ձեռնարկել են.
    - i) կենտրոնական, տարածաշրջանային կամ տեղական կառավարություններն ու իրավասու մարմինները, և՛
    - ii) ոչ պետական մարմինները՝ կենտրոնական, տարածաշրջանային կամ տեղական կառավարությունների կամ իրավասու մարմինների կողմից տրված լիազորություններն իրականացնելիս:

Սույն Համաձայնագրով սահմանված իր պարտականություններն ու պարտավորությունները կատարելիս յուրաքանչյուր Անդամ ձեռնարկում է այնպիսի պատշաճ միջոցներ, ինչպիսիք կարող են մատչելի լինել իրեն, որպեսզի ապահովի, որ իր տարածքում գտնվող տարածաշրջանային ու տեղական կառավարություններն ու իրավասու մարմինները և ոչ պետական մարմինները պահպանեն դրանք.

- բ) «ծառայություններն» ընդգրկում են ցանկացած ծառայություն ցանկացած ոլորտում, բացառությամբ այն ծառայությունների, որոնք մատուցվում են կառավարական իրավասություններն իրականացնելիս.
- գ) «ծառայություն, որը մատուցվում է կառավարական իրավասություններն իրականացնելիս» նշանակում է ցանկացած ծառայություն, որը մատուցվում է ոչ առևտրային հիմունքով և ոչ էլ մեկ կամ ավելի ծառայություններ մատուցողների հետ մրցակցությամբ:

**ԳԼՈՒԽ II**  
**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված II.**  
**Ազգերի առավել բարենպաստության մոտեցում**

1. Սույն Համաձայնագրով կարգավորվող ցանկացած միջոցի առնչությամբ յուրաքանչյուր Անդամ ցանկացած այլ Անդամի ծառայություններին ու ծառայություն մատուցողներին անհապաղ և անվերապահորեն տրամադրում է ոչ պակաս բարենպաստ մոտեցում, քան այն որն ինքը տրամադրում է ցանկացած այլ երկրի նման ծառայություններին ու ծառայություն մատուցողներին:
2. Անդամը կարող է 1-ին կետին չհամապատասխանող միջոց պահպանել, եթե այդ միջոցը նշված է II Հոդվածից ազատումների մասին Հավելվածում ու բավարարում է դրա պայմաններին:
3. Սույն Համաձայնագրի դրույթները չեն մեկնաբանվում այնպես, թե որևէ Անդամի արգելում են առավելություններ շնորհել կամ տրամադրել սահմանակից երկրներին՝ սահմանամերձ գոտիներով սահմանափակված այն ծառայությունների փոխանակումը դյուրինացնելու համար, որոնք արտադրվում և սպառվում են տեղում:

**Հոդված III.**  
**Թափանցիկություն**

1. Յուրաքանչյուր Անդամ շտապ կարգով և, բացառությամբ արտակարգ իրավիճակների, ամենաուշը դրանք ուժի մեջ մտնելու ժամանակ հրապարակում է ընդհանուր կիրառության բոլոր համապատասխան միջոցները, որոնք առնչվում են սույն Համաձայնագրի գործողությանը կամ ազդում են դրա վրա: Որևէ Անդամի ստորագրած միջազգային համաձայնագրերը, որոնք առնչվում են ծառայությունների առևտրին կամ ազդում են դրա վրա, նույնպես հրապարակվում են:
2. Եթե 1-ին կետում հիշատակված հրապարակումն անիրագործելի է, ապա այդ տեղեկությունը հանրության համար մատչելի է դարձվում որևէ այլ ձևով:
3. Յուրաքանչյուր Անդամ շտապ կարգով և առնվազն տարին մեկ անգամ Ծառայությունների առևտրի խորհրդին տեղեկացնում է ցանկացած նոր օրենք, կանոնակարգ կամ վարչական ուղեցույց կամ գոյություն ունեցողներում ցանկացած փոփոխություն մտցնելու մասին, որը զգալի ազդեցություն ունի սույն Համաձայնագրով սահմանված իր հատուկ պարտավորություններով ընդգրկված ծառայությունների առևտրի վրա:
4. Յուրաքանչյուր Անդամ շտապ կարգով պատասխանում է որևէ այլ Անդամի՝ առանձին տեղեկությունների համար ներկայացրած բոլոր պահանջներին, որոնք վերաբերում են իր ընդհանուր կիրառման որևէ միջոցի կամ 1-ին կետում նշված միջազգային համաձայնագրերի: Յուրաքանչյուր Անդամ ստեղծում է նաև մեկ կամ ավելի հարցման կետեր, որպեսզի պահանջ ներկայացվելու դեպքում այլ Անդամներին առանձին տեղեկություններ տրամադրի, որոնք վերաբերում են բոլոր նման հարցերին, ինչպես նաև այն հարցերին, որոնք ենթակա են 3-րդ կետի ծանուցման պահանջին: Այդ հարցման կետերը ստեղծվում են ԱՀԿ ստեղծման մասին համաձայնագիրը (սույն համաձայնագրում հիշատակվում է որպես «ԱՀԿ համաձայնագիր») ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկու տարվա ընթացքում: Չարգացող առանձին Անդամ երկրների համար կարող է համապատասխան ճկունություն համաձայնեցվել այն ժամկետի առնչությամբ, որի ընթացքում այդ հարցման կետերը պետք է ստեղծվեն: Պարտադիր չէ, որ հարցման կետերն օրենքների և կանոնակարգերի պահոց լինեն:
5. Յուրաքանչյուր Անդամ կարող է Ծառայությունների առևտրի խորհրդին ծանուցել որևէ այլ Անդամի ձեռնարկած ցանկացած միջոցի մասին, որն իր կարծիքով ազդում է սույն Համաձայնագրի գործողության վրա:

**Հոդված III<sup>bis</sup>.**  
**Գաղտնի տեղեկության բացահայտում**

Սույն Համաձայնագիրը ոչնչով որևէ Անդամից չի պահանջում գաղտնի տեղեկություններ տրամադրել, որոնց բացահայտումը կիսափաներ օրենքների կիրարկումը, կամ որևէ այլ կերպ կհակասեր հասարակական շահերին, կամ որը կվնասեր պետական կամ մասնավոր առանձին ընկերությունների առևտրային օրինական շահերը:

## **Յոթրդրված IV. Չարգացող երկրների աճող մասնակցություն**

1. Չարգացող Անդամ երկրների՝ համաշխարհային առևտրում աճող մասնակցությունը դյուրինացվում է սույն Յամաճայնագրի III և IV Գլուխների համաձայն տարբեր Անդամների բանակցած հատուկ պարտավորությունների միջոցով, որոնք վերաբերում են.
  - ա) դրանց ծառայությունների ներքին կարողությունների հզորացմանը և արդյունավետության ու մրցունակության բարձրացմանը, այլոց թվում՝ դեպի տեխնոլոգիաներ առևտրային հիմունքով մուտքի միջոցով.
  - բ) դրանց համար դեպի բաշխման ուղիներ ու տեղեկատվական ցանցեր մուտքի բարելավմանը, և՛
  - գ) շուկայի մատչելիության ազատականացմանն այն ոլորտներում և մատուցման եղանակներում, որոնք դրանց համար արտահանման առումով հետաքրքրություն են ներկայացնում:
2. Չարգացած Անդամ երկրները և հնարավոր չափով՝ այլ Անդամները, ԱՅԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկու տարվա ընթացքում, ստեղծում են հաղորդակցման կետեր՝ դյուրինացնելու Չարգացող Անդամ երկրների ծառայություններ մատուցողների մուտքը դեպի իրենց համապատասխան շուկաներին առնչվող տեղեկությունները, որոնք վերաբերում են.
  - ա) ծառայությունների մատուցման առևտրային ու տեխնիկական կողմերին.
  - բ) մասնագիտական որակավորումների գրանցմանը, ճանաչմանն ու ձեռք բերմանը, և՛
  - գ) ծառայությունների տեխնոլոգիաների մատչելիությանը:
3. 1-ին և 2-րդ կետերն իրականացնելիս հատուկ առաջնություն է տրվում առավել թույլ զարգացած Անդամ երկրներին: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում առավել թույլ զարգացած երկրների՝ բանակցված հատուկ պարտավորություններ ընդունելիս ունեցած լուրջ դժվարություններին՝ ելնելով նրանց տնտեսական առանձնահատուկ իրավիճակից և զարգացման, առևտրային ու ֆինանսական կարիքներից:

## **Յոթրդրված V. Տնտեսական միասնացում**

1. Սույն Յամաճայնագիրն իր Անդամներից որևէ մեկին չի արգելում որևէ համաձայնագիր կնքել կամ լինել այնպիսի համաձայնագրի կողմ, որով ազատականացվում է այդ համաձայնագրի կողմերի մեջ կամ դրանց միջև ծառայությունների առևտուրը, եթե այդ համաձայնագիրը.
    - ա) ոլորտների եական ընդգրկում ունի<sup>1</sup> և՛
    - բ) այդ համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահին կամ էլ խելամիտ ժամկետների հիման վրա նախատեսում է «ա» ենթակետով ընդգրկված ոլորտներում կողմերի մեջ կամ դրանց միջև՝ XVII Յոթրդրվածի իմաստով բոլոր տեսակի խտրականությունների բացակայություն կամ վերացում
      - i) գոյություն ունեցող խտրական միջոցների վերացման միջոցով, և(կամ)
      - ii) նոր կամ ավելի խտրական միջոցների արգելման միջոցով, բացառությամբ՝
- XI, XII, XIV և XIV<sup>bis</sup> Յոթրդրվածների համաձայն թույլատրված միջոցների:
2. 1«բ» կետով սահմանված պայմանների բավարարված լինելը գնահատելիս, կարող է հաշվի առնվել համաձայնագրի կապը ինդրո առարկա երկրների միջև տնտեսական միասնացման ավելի լայն գործընթացի կամ առևտրի ազատականացման հետ:

<sup>1</sup> Սույն պայմանը հասկացվում է ոլորտների քանակի, ազդեցություն կրող առևտրի ծավալի և մատուցման եղանակների առումով: Սույն պայմանը բավարարելու համար համաձայնագրերը մատուցման որևէ եղանակի չհիմնավորված բացառություն չպետք է նախատեսեն:

3.
  - ա) Եթե զարգացող երկրները 1-ին կետում հիշատակված կարգի համաձայնագրի կողմեր են, ապա 1-ին կետում, հատկապես դրա «բ» ենթակետում շարադրված պայմանների պահպանման համար ճկունություն է նախատեսվում՝ խնդրո առարկա երկրների՝ ինչպես համընդհանուր, այնպես էլ առանձին ոլորտներում ու ենթաօլորտներում ունեցած զարգացման մակարդակին համապատասխան:
  - բ) Անկախ 6-րդ կետից, եթե 1-ին կետում հիշատակված կարգի համաձայնագիրն ընդգրկում է միայն զարգացող երկրներ, ապա կարող է ավելի բարենպաստ մոտեցում շնորհվել այդ համաձայնագրի կողմերի ֆիզիկական անձանց պատկանող կամ դրանց կողմից վերահսկվող իրավաբանական անձանց:
4. 1-ին կետում հիշատակված ցանկացած համաձայնագիր կոչված է նպաստելու համաձայնագրի կողմերի միջև առևտրին, և համաձայնագրին չմիացած որևէ Անդամի առնչությամբ համապատասխան ոլորտներում ու ենթաօլորտներում չի բարձրացնում ծառայությունների առևտրի արգելքների համընդհանուր մակարդակը՝ համեմատած նախքան այդ համաձայնագիրը կիրառվող մակարդակի հետ:
5. Եթե 1-ին կետով սահմանված որևէ համաձայնագրի կնքման, ընդլայնման կամ որևէ նշանակալի փոփոխության ժամանակ որևէ Անդամ նախատեսում է որևէ հատուկ պարտավորություն հանել կամ փոփոխել, ինչը չի համապատասխանում իր ժամանակացանկով սահմանված պայմաններին, ապա Անդամն առնվազն 90 օր առաջ նախնական ծանուցում է ներկայացնում այդ փոփոխության կամ հանման մասին, և կիրառվում է XXI Յոգվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով սահմանված ընթացակարգը:
6. Որևէ այլ Անդամի ծառայություն մատուցողը, որն 1-ին կետում հիշատակված համաձայնագրի կողմի օրենքների համաձայն հիմնադրված իրավաբանական անձ է, այդ համաձայնագրով նախատեսված մոտեցում ստանալու իրավունք է ձեռքբերում, եթե այդ համաձայնագրի կողմերի տարածքում ներգրավված է ինքնուրույն ձեռնարկատիրական գործունեության մեջ:
7.
  - ա) Անդամները, որոնք 1-ին կետում հիշատակված որևէ համաձայնագրի կողմեր են, Ծառայությունների առևտրի խորհրդին շտապ կարգով ծանուցում են ցանկացած այդպիսի համաձայնագրի, և այդ համաձայնագրի ցանկացած ընդլայնման կամ որևէ նշանակալի փոփոխության մասին: Նրանք խորհրդի համար մատչելի են դարձնում նաև այնպիսի համապատասխան տեղեկություններ, որոնք կարող է վերջինս պահանջել: Խորհուրդը կարող է աշխատանքային խումբ ստեղծել, որպեսզի վերջինս քննության առնի այդ համաձայնագիրը, կամ այդ համաձայնագրի ընդլայնումը կամ փոփոխությունը և խորհրդին զեկուցի սույն Յոգվածին դրա համապատասխանության մասին:
  - բ) Անդամները, որոնք 1-ին կետում հիշատակված որևէ այնպիսի համաձայնագրի կողմեր են, որն իրականացվում է ժամկետների հիման վրա, Ծառայությունների առևտրի խորհրդին պարբերաբար զեկուցում են դրա իրականացման մասին: Խորհուրդը կարող է այդ զեկույցները քննության առնելու համար աշխատանքային խումբ ստեղծել, եթե այդպիսի աշխատանքային խումբն անհրաժեշտ է համարում:
  - գ) Հիմնվելով «ա» և «բ» ենթակետերում նշված աշխատանքային խմբերի զեկույցների վրա՝ Խորհուրդը կարող է այնպիսի հանձնարարականներ տալ կողմերին, ինչպիսիք նպատակահարմար է համարում:
8. Անդամը, որն 1-ին կետում հիշատակված որևէ համաձայնագրի կողմ է, չի կարող փոխհատուցում պահանջել առևտային օգուտների համար, որոնք որևէ այլ Անդամ կարող է ստանալ այդ համաձայնագրով:

**Յոթերորդ Կարգադրում V<sup>bis</sup>.**  
**Աշխատանքի շուկաների միասնացման համաձայնագրեր**

Սույն Համաձայնագիրն իր Անդամներից որևէ մեկին չի խոչընդոտում այնպիսի մի համաձայնագրի կողմ լինել, որով այդ համաձայնագրի կողմերի մեջ կամ դրանց միջև աշխատանքի շուկաների լիարժեք միասնացում<sup>2</sup> է ստեղծվում, եթե այդ համաձայնագիրը.

- ա) համաձայնագրի կողմերի քաղաքացիներն ազատում է բնակությանը և աշխատանքի թույլտրվությանը վերաբերող պահանջներից.
- բ) ծանուցվել է Ծառայությունների առևտրի խորհրդին:

**Յոթերորդ Կարգադրում VI.**  
**Ներքին կանոնակարգում**

1. Յուրաքանչյուր Անդամ ապահովում է, որ այն ուղորտներում, որտեղ հատուկ պարտավորություններ են ստանձնվել, ծառայությունների առևտրի վրա ազդող ընդհանուր կիրառման բոլոր միջոցներն իրականացվեն պատշաճ, անաչառ և անկողմնակալ ձևով:
2.
  - ա) Յուրաքանչյուր Անդամ պահպանում է կամ հնարավորին չափ շուտ ստեղծում է դատական, միջնորդական կամ վարչական ատյաններ կամ ընթացակարգեր, որոնցով նախատեսվում է ծառայությունների առևտրի վրա ազդեցություն ունեցող վարչական որոշումների շտապ վերաքննության անցկացում և արդարացված լինելու դեպքում դրանց նկատմամբ համապատասխան պաշտպանական միջոցների կիրառում՝ ծառայություններ մատուցող տուժողի պահանջով: Եթե այդ ընթացակարգերն անկախ չեն այն գործակալությունից, որն օժտված է տվյալ վարչական որոշման իրավասությամբ, ապա Անդամը երաշխավորում է, որ այդ ընթացակարգերով նախատեսվի փաստացիորեն անաչառ և անկողմնակալ վերաքննություն:
  - բ) «ա» ենթակետի դրույթները չեն մեկնաբանվում այնպես, թե Անդամից պահանջվում է այդպիսի ատյաններ կամ ընթացակարգեր հաստատել, երբ դա անհամապատասխան կլիներ նրա սահմանադրական կառուցվածքին կամ իրավական համակարգի բնույթին:
3. Եթե թույլտվություն է պահանջվում որևէ ծառայություն մատուցելու համար, որի վերաբերյալ հատուկ պարտավորություն է ստանձնված, ապա Անդամի իրավասու մարմինը ներքին օրենքների և կանոնակարգերի համաձայն լիարժեք համարվող դիմումը ներկայացվելուց հետո՝ պատշաճ ժամանակահատվածի ընթացքում դիմողին տեղեկացնում է դիմումի վերաբերյալ կայացված որոշման մասին: Դիմողի պահանջով իրավասու մարմինն առանց անհարկի հետաձգման տեղեկատվություն է տրամադրում դիմումի կարգավիճակի վերաբերյալ:
4. Նպատակ ունենալով ապահովել, որ որակավորման պահանջներին և ընթացակարգերին, տեխնիկական համորինակներին (համորինակներին) և լիցենզավորման պահանջներին վերաբերող միջոցներն ավելորդ խոչընդոտներ չեն առաջացնում ծառայությունների առևտրի համար, Ծառայությունների առևտրի խորհուրդը՝ համապատասխան մարմինների միջոցով, որոնք ինքը կարող է ստեղծել, մշակում է ցանկացած անհրաժեշտ հիմնադրույթներ: Այդ հիմնադրույթների նպատակն է երաշխավորել, որ այդ պահանջները, մասնավորապես,
  - ա) հիմնված լինեն այնպիսի անաչառ ու թափանցիկ չափանիշների վրա, ինչպիսիք են իրազեկությունն ու ծառայությունը մատուցելու կարողությունը.
  - բ) ավելի բարդ չլինեն, քան անհրաժեշտ է ծառայության որակը երաշխավորելու համար.
  - գ) լիցենզավորման ընթացակարգերի դեպքում, ինքնին սահմանափակում չլինեն ծառայությունների մատուցման համար:

<sup>2</sup> Սովորաբար այդպիսի միասնացումը խնդրո առարկա կողմերի քաղաքացիների համար նախատեսում է կողմերի աշխատուժի շուկաներ ազատ մուտքի իրավունք և միջոցներ է ընդգրկում վարձատրության պայմանների, աշխատանքի և սոցիալական ապահովման այլ պայմանների վերաբերյալ:

5.
  - ա) Այն ոլորտներում, որտեղ Անդամը հատուկ պարտավորություններ է ստանձնել, այդ Անդամը, մինչև այդ ոլորտներում 4-րդ կետի համաձայն մշակած հիմնադրություններն ուժի մեջ մտնելը, լիցենզավորման ու որակավորման պահանջներ և տեխնիկական համօրինակներ չի կիրառում, որոնք վերացնում կամ նվազեցնում են այդ հատուկ պարտավորություններն այնպիսի ձևով, որը՝
    - i) չի համապատասխանում 4«ա», «բ» և «գ» ենթակետերով սահմանված չափանիշներին.
    - ii) չէր կարող պատճառաբանված կերպով ակնկալվել այդ Անդամից՝ այդ ոլորտներում հատուկ պարտավորությունները ստանձնելու պահին:
  - բ) Անդամի կողմից 5«ա» կետով սահմանված պարտավորության պահպանումը որոշելիս հաշվի է առնվում միջազգային համապատասխան կազմակերպությունների<sup>3</sup> միջազգային այն համօրինակները, որոնք այդ Անդամը կիրառում է:
6. Այն ոլորտներում, որտեղ հատուկ պարտավորություններ են ստանձնվել մասնագիտական ծառայությունների վերաբերյալ, յուրաքանչյուր Անդամ համապատասխան ընթացակարգեր է նախատեսում որևէ այլ Անդամի մասնագետների իրազեկությունը ստուգելու նպատակով:

## **Յոթված VII. Ճանաչում**

1. Ծառայություններ մատուցողների թույլտվությանը, լիցենզավորմանը կամ հավաստագրմանը վերաբերող իր համօրինակները կամ չափանիշները ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարելու նպատակով և հաշվի առնելով 3-րդ կետով սահմանված պահանջները՝ Անդամը կարող է ճանաչել առանձին երկրում ձեռք բերված կրթությունը կամ փորձը, կատարված պահանջները կամ տրված լիցենզիաները կամ հավաստագրերը: Այդպիսի ճանաչումը, որին կարելի է հասնել ներդաշնակեցմամբ կամ որևէ այլ եղանակով, կարող է հիմնված լինել ինդրո առարկա երկրի հետ համաձայնագրի կամ համաձայնության վրա կամ կարող է շնորհվել ինքնուրույնաբար:
2. Անդամը, որն 1-ին կետում նշված կարգի համաձայնագրի կամ համաձայնության (գոյություն ունեցող է դա, թե ապագա) կողմ է, այլ շահագրգիռ Անդամների բավարար հնարավորություն է տալիս բանակցելու այդ համաձայնագրին կամ համաձայնությանն իրենց անդամակցության համար, կամ էլ բանակցելու մի այնպիսին համար, որը համեմատելի է դրա հետ: Եթե որևէ Անդամն ինքնուրույն ճանաչում է շնորհում, ապա ցանկացած այլ Անդամին բավարար հնարավորություն է տալիս ապացուցելու, որ այդ այլ Անդամի տարածքում ձեռք բերված կրթությունը, փորձը, լիցենզիաները կամ հավաստագրերը, կամ կատարված պահանջները պետք է ճանաչվեն:
3. Անդամը ճանաչում չի շնորհում այնպիսի եղանակով, որն երկրների միջև խտրություն դնելու միջոց կհանդիսանա՝ ծառայություններ մատուցողներին թույլտվություն տալու, լիցենզավորելու կամ հավաստագրելու իր համօրինակների կամ չափանիշների կիրառման հարցում, կամ որը քողարկված սահմանափակում կհանդիսանա ծառայությունների առևտրի համար:
4. Յուրաքանչյուր Անդամ՝
  - ա) իր համար ԱՅԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ 12 ամսվա ընթացքում Ծառայությունների առևտրի խորհրդին տեղեկացնում է իր՝ ճանաչման գոյություն ունեցող միջոցների մասին և նշում է, թե արդյոք այդ միջոցները հիմնված են 1-ին կետում հիշատակված կարգի համաձայնագրերի կամ համաձայնությունների վրա.
  - բ) Ծառայությունների առևտրի խորհրդին շտապ կարգով, հնարավորին չափ նախօրոք տեղեկացնում է 1-ին կետում հիշատակված կարգի համաձայնագրի կամ համաձայնության վերաբերյալ բանակցություններ սկսելու մասին, որպեսզի որևէ այլ Անդամի համապատասխան հնարավորություն տրվի՝ բանակցություններին մասնակցելու իր շահագրգռության մասին նշել մինչև բանակցությունները հիմնական փուլ մտնելը.

<sup>3</sup> «Միջազգային Համապատասխան կազմակերպություններ» արտահայտությունը վերաբերում է այն միջազգային մարմիններին, որոնց անդամակցությունն ազատ է ԱՅԿ առնվազն բոլոր Անդամների համապատասխան մարմինների համար:

զ) Ծառայությունների առևտրի խորհրդին շտապ կարգով տեղեկացնում է ճանաչման նոր միջոցների ընդունելու կամ գոյություն ունեցողների մեջ զգալի փոփոխություն կատարելու մասին և նշում է, թե արդյոք այդ միջոցները հիմնված են 1-ին կետում հիշատակված կարգի համաձայնագրի կամ համաձայնության վրա:

5. Հարկ եղած դեպքում, ճանաչումը պետք է հիմնված լինի բազմակողմ կերպով համաձայնեցված չափանիշների վրա: Հարկ եղած դեպքերում Անդամները համապատասխան միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների հետ համագործակցելով աշխատում են ճանաչման վերաբերյալ ընդհանուր միջազգային համօրինակների ու չափանիշների, և համապատասխան ծառայությունների գործարար ու մասնագիտական գործելակերպի վերաբերյալ ընդհանուր միջազգային համօրինակների ստեղծման և ընդունման ուղղությամբ:

## **Յոթերորդ Կարգադրում VIII.**

### **Մենաշնորհներ և ծառայությունների բացառիկ մատուցողներ**

1. Յուրաքանչյուր Անդամ ապահովում է, որ իր տարածքում որևէ մենաշնորհային ծառայության մատուցող համապատասխան շուկայում մենաշնորհային ծառայություն մատուցելիս չգործի այնպիսի ձևով, որն անհամապատասխան է այդ Անդամի՝ II Յոթերորդ կարգադրումում հատուկ պարտավորություններով սահմանված պարտավորություններին:
2. Եթե որևէ Անդամի մենաշնորհային մատուցողը, որն այդ Անդամի հատուկ պարտավորությունների առարկա է, ուղղակիորեն կամ էլ փոխկապակցված ընկերության միջոցով մրցում է իր մենաշնորհային իրավունքների շրջանակներից դուրս գտնվող ծառայությունների մատուցման մեջ, ապա Անդամն ապահովում է, որ այդ մատուցողը չշահագործի իր մենաշնորհային դիրքն այնպես, որ իր տարածքում գործի այդ պարտավորություններին անհամապատասխան ձևով:
3. Ծառայությունների առևտրի խորհուրդը կարող է որևէ Անդամի պահանջով, որը հիմք ունի ենթադրելու, որ ցանկացած այլ Անդամի ծառայությունների մենաշնորհային մատուցողը գործում է 1-ին և 2-րդ կետերին անհամապատասխան ձևով, պահանջել այն Անդամից, որը ստեղծել, պահպանել կամ թուլատվություն է տվել այդ մատուցողին, հատուկ տեղեկատվություն ներկայացնել համապատասխան գործողությունների վերաբերյալ:
4. Եթե ԱՀԿ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո որևէ Անդամ մենաշնորհային իրավունքներ է շնորհում իր հատուկ պարտավորություններով ընդգրկված ծառայության մատուցման համար, ապա այդ Անդամն այդ մասին Ծառայությունների առևտրի խորհրդին ծանուցում է ոչ ուշ, քան նախատեսվող մենաշնորհային իրավունքները շնորհելուց երեք ամիս առաջ, և կիրառվում են XXI Յոթերորդ կարգադրումի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի դրույթները:
5. Սույն Յոթերորդ կարգադրումը կիրառվում են նաև ծառայությունների բացառիկ մատուցողների դեպքում, երբ Անդամը պաշտոնապես կամ գործնականում. ա) թույլատրում կամ ստեղծում է փոքր թվով ծառայություն մատուցողներ, և՛ բ) Եականորեն կանխարգելում է իր տարածքում այդ մատուցողների միջև մրցակցությունը:

## **Յոթերորդ Կարգադրում IX.**

### **Գործարար գործելակերպեր**

1. Անդամներն ընդունում են, որ ծառայություններ մատուցողների որոշ գործարար գործելակերպեր, որոնք այլ են, քան VIII Յոթերորդ կարգադրումի տակ ընկնողները, կարող են կաշկանդել մրցակցությունն ու դրանով սահմանափակել ծառայությունների մատուցումը:
2. Յուրաքանչյուր Անդամ որևէ այլ Անդամի պահանջով խորհրդակցություններ է սկսում՝ նպատակ ունենալով վերացնել 1-ին կետում նշված գործելակերպերը: Անդամը, որին ուղղված է պահանջը, լիարժեք ու բարյացակամ վերաբերմունք է ցուցաբերում այդ պահանջի նկատմամբ և համագործակցում է՝ քննարկվող հարցին առնչվող հասարակայնորեն մատչելի ոչ գաղտնի տեղեկություններ տրամադրելու միջոցով: Անդամը, որին ուղղված է պահանջը, պահանջ ներկայացնող Անդամին տրամադրում է նաև մատչելի այլ տեղեկություններ՝ պահպանելով իր ներքին օրենքներն ու կնքելով բավարար համաձայնագիր՝ պահանջ ներկայացնող Անդամի կողմից իր գաղտնիությունը պաշտպանելու վերաբերյալ:

## **Յոթրդրոն X.** **Պաշտպանական արտակարգ միջոցներ**

1. Պաշտպանական արտակարգ միջոցների վերաբերյալ անց են կացվում բազմակողմ բանակցություններ, որոնք հիմնված են առանց խտրականության սկզբունքի վրա: Այդ բանակցությունների արդյունքները ուժի մեջ են մտնում ԱՅԿ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ ոչ ուշ, քան երեք տարի հետո:
2. 1-ին կետում նշված բանակցությունների արդյունքներն ուժի մեջ մտնելուց առաջ ընկած ժամանակահատվածում ցանկացած Անդամ կարող է, անկախ XXI Յոթրդրոնի 1-ին կետի դրույթներից, Ծառայությունների առևտրի խորհրդին ծանուցել հատուկ պարտավորությունը փոփոխելու կամ հանելու իր մտադրության մասին՝ պարտավորությունն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարի հետո, եթե Անդամը խորհրդի առջև պատճառաբանում է, որ փոփոխությունը կամ հանումը չի կարող հետաձգվել մինչև XXI Յոթրդրոնի 1-ին կետով նախատեսված՝ երեք տարվա ժամկետի ավարտը:
3. 2-րդ կետի դրույթների կիրառությունը դադարում է ԱՅԿ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից երեք տարի հետո:

## **Յոթրդրոն XI.** **Վճարումներ և փոխանցումներ**

1. Անդամը սահմանափակումներ չի կիրառում իր հատուկ պարտավորություններին վերաբերող ընթացիկ գործարքների համար կատարվող միջազգային փոխանցումների և վճարումների նկատմամբ, բացառությամբ XII Յոթրդրոնով նախատեսված հանգամանքներից:
2. Սույն Համաձայնագիրը ոչնչով չի ազդում Արժույթի միջազգային հիմնադրամի անդամների այն իրավունքների և պարտավորությունների վրա, որոնք սահմանված են Հիմնադրամի համաձայնագրի Յոթրդրոնով, ներառյալ՝ արտարժույթային գործողությունները, որոնք համապատասխանում են համաձայնագրի հոդվածներին, եթե Անդամը դրամամիջոցների գործարքների վրա սահմանափակումներ չի դնում, որոնք անհամապատասխան են այդ գործարքներին վերաբերող իր հատուկ պարտավորությունների հետ, բացառությամբ XII Յոթրդրոնի կամ Հիմնադրամի պահանջի համաձայն դրվողներից:

## **Յոթրդրոն XII.** **Սահմանափակումներ վճարային հաշվեկշիռը պաշտպանելու նպատակով**

1. Վճարային հաշվեկշիռի ու արտաքին ֆինանսական լուրջ դժվարությունների կամ դրանց վտանգի դեպքում Անդամը կարող է սահմանափակումներ ընդունել կամ պահպանել այն ծառայությունների առևտրի նկատմամբ, որոնց վերաբերյալ հատուկ պարտավորություններ է ստանձնել, ներառյալ՝ այդ պարտավորություններին առնչվող ընթացիկ գործարքների համար կատարվող փոխանցումների և վճարումների նկատմամբ: Ընդունվում է, որ տնտեսական զարգացման ընթացքում կամ տնտեսական անցումային շրջանում Անդամի վճարային հաշվեկշիռի վրա առանձին ճնշումներ կարող են սահմանափակումների կիրառման անհրաժեշտություն առաջացնել՝ մասնավորապես տնտեսական զարգացման կամ տնտեսական անցման իր ծրագրի իրականացման համար բավարար ֆինանսական պահուստի մակարդակի պահպանումն ապահովելու համար:
2. 1-ին կետում հիշատակված սահմանափակումները՝
  - ա) խտրականություն չեն դնում Անդամների միջև.
  - բ) համապատասխանում են Արժույթի միջազգային հիմնադրամի համաձայնագրի հոդվածներին.
  - գ) խուսափում են որևէ այլ Անդամի առևտրային, տնտեսական և ֆինանսական շահերին անհիմն վնաս պատճառելուց.
  - դ) չեն գերազանցում այն սահմանափակումները, որոնք անհրաժեշտ են 1-ին կետում նկարագրված հանգամանքների հետ գործ ունենալիս.
  - ե) ժամանակավոր են և աստիճանաբար վերացվում են 1-ին կետում հատկորոշված իրավիճակի բարելավման հետ մեկտեղ:

3. Այդ սահմանափակումների ազդեցության ոլորտը որոշելիս Անդամները կարող են առաջնություն տալ այն ծառայությունների մատուցմանը, որոնք ավելի էական են իրենց տնտեսական կամ զարգացման ծրագրերի համար: Այնուամենայնիվ, այդ սահմանափակումները չեն ընդունվում կամ պահպանվում ծառայության որոշակի ոլորտ հովանավորելու նպատակով:
4. 1-ին կետի համաձայն ընդունված կամ պահպանված ցանկացած սահմանափակում կամ էլ դրանցում կատարած ցանկացած փոփոխություն շտապ կարգով ծանուցվում է Գլխավոր խորհրդին:
5.
  - ա) Սույն Զոդվածի դրույթները կիրարկող Անդամները Վճարումների հաշվեկշռի սահմանափակումների հանձնախմբի հետ շտապ կարգով խորհրդակցում են սույն Զոդվածի համաձայն ընդունված սահմանափակումների վերաբերյալ:
  - բ) Նախարարների համաժողովն ընթացակարգեր<sup>4</sup> է ստեղծում պարբերաբար տեղի ունեցող խորհրդակցությունների համար՝ նպատակ ունենալով խնդրո առարկա Անդամին այնպիսի հանձնարարականներ տալու հնարավորություն ստեղծել, ինչպիսիք ինքը նպատակահարմար կգտնի:
  - գ) Այդ խորհրդակցություններում գնահատվում են խնդրո առարկա Անդամի վճարային հաշվեկշռի իրավիճակը և սույն Զոդվածի համաձայն ընդունված կամ պահպանված սահմանափակումները՝ այլոց թվում հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են.
    - i) վճարումների հաշվեկշռի և ֆինանսական արտաքին դժվարությունների բնույթն ու չափը.
    - ii) խորհրդակցող Անդամի արտաքին տնտեսական և առևտրային միջավայրը.
    - iii) այլընտրանքային շտկիչ միջոցները, որոնք կարող են մատչելի լինել:
  - դ) խորհրդակցություններում դիտարկվում են ցանկացած սահմանափակումների համապատասխանությունը 2-րդ կետին, մասնավորապես 2«ե» կետի համաձայն սահմանափակումների աստիճանական վերացումը:
  - ե) Այդ խորհրդակցությունների ընթացքում Արժույթի միջազգային հիմնադրամի ներկայացրած վիճակագրական և այլ փաստերի վերաբերյալ բոլոր հայտնաբերումները, որոնք վերաբերում են արտարժույթին, դրամական պահուստներին և վճարային հաշվեկշռին, ընդունվում են, իսկ եզրակացությունները հիմնվում են խորհրդակցող Անդամի վճարային հաշվեկշռի և ֆինանսական արտաքին իրավիճակի՝ Զիմնադրամի տված գնահատականի վրա:
6. Եթե Անդամը, որն Արժույթի միջազգային հիմնադրամի անդամ չէ, ցանկանում է կիրարկել սույն Զոդվածի դրույթները, ապա Նախարարների համաժողովը վերաքննության և ցանկացած այլ անհրաժեշտ ընթացակարգեր է ստեղծում:

### **Զոդված XIII Պետական գնումներ**

1. II, XVI և XVII Զոդվածները չեն վերաբերում այն օրենքներին, կանոնակարգերին կամ պահանջներին, որոնք ղեկավարում են պետական գործակալությունների կողմից ծառայությունների գնումները, որոնք կատարվում են կառավարական նպատակներով, այլ ոչ թե առևտրային վերավաճառքի կամ առևտրային վաճառքի համար ծառայություններ մատուցելիս օգտագործելու նպատակով:
2. ԱԶԿ Զամաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկու տարվա ընթացքում, ըստ սույն Զամաձայնագրի անց են կացվում բազմակողմ բանակցություններ ծառայությունների պետական գնումների վերաբերյալ:

<sup>4</sup> Հասկացվում է, որ 5-րդ կետով ամրագրված ընթացակարգերը նույն են, ինչ ՄԱԳԳ-1994-ով սահմանված ընթացակարգերը:

## Յոթերորդ ԿՈՒՆՎԵՆՏ Ընդհանուր բացառություններ

Հաշվի առնելով այն պահանջը, որ այդ միջոցները չեն կիրարկվում այնպիսի եղանակով, որը կարող է նման պայմաններում գտնվող երկրների միջև կամայական կամ չարդարացված խտրականություն առաջացնել, կամ ծառայությունների առևտրի համար քողարկված սահմանափակում հանդիսանալ, սույն Համաձայնագրի մեջ ոչինչ չի մեկնաբանվում այնպես, թե որևէ Անդամի արգելում է այնպիսի միջոցներ ընդունել կամ կիրարկել, որոնք

- ա) անհրաժեշտ են հասարակական բարքերը պաշտպանելու կամ հասարակական կարգը<sup>5</sup> պահպանելու համար.
- բ) անհրաժեշտ են մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքը կամ առողջությունը պաշտպանելու համար.
- գ) անհրաժեշտ են այն օրենքների կամ կանոնակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար, որոնք անհամապատասխան չեն սույն Համաձայնագրի դրույթներին, ներառյալ՝ նրանք, որոնք վերաբերում են՝
  - i) շփոթեցնող և խարդախ գործելակերպերի կանխարգելմանը կամ ծառայությունների վերաբերյալ պարտավորագրերի վրա պարտազանցման ազդեցությունների կարգավորմանը.
  - ii) անձանց գաղտնիքների պաշտպանությանը՝ կապված անձնական տվյալների վերամշակման և տարածման հետ, և անձնական կենսագրական տվյալների և հաշիվների գաղտնիության պաշտպանությանը.
  - iii) անվտանգությանը.
- դ) չեն համապատասխանում XVII Կոնվենտին, ընդ որում՝ մոտեցման մեջ տարբերությունը նպատակ ունի ապահովելու այլ Անդամների ծառայությունների կամ ծառայություն մատուցողների նկատմամբ ուղղակի հարկերի անաչառ կամ արդյունավետ<sup>6</sup> կիրառումը կամ հավաքումը.
- ե) չեն համապատասխանում II Կոնվենտին, ընդ որում՝ մոտեցման մեջ տարբերությունը կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ համաձայնագրի կամ ցանկացած այլ միջազգային համաձայնագրի կամ համաձայնության, որով Անդամը կապված է, կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ դրույթների արդյունք է:

<sup>5</sup> Հասարակական կարգին վերաբերող բացառությանը կարելի է դիմել միայն այն դեպքում, երբ հասարակության հիմնական շահերից որևէ մեկին իրական և բավականին լուրջ վտանգ է սպառնում:

<sup>6</sup> Այն միջոցները, որոնք նպատակ ունեն ուղղակի հարկերի անաչառ կամ արդյունավետ կիրառում և հավաքում ապահովել, ընդգրկում են Անդամի՝ իր հարկային համակարգի համաձայն ձեռնարկած միջոցներ, որոնք՝

- i) կիրառվում են ոչ մշտաբնակ ծառայություն մատուցողների նկատմամբ՝ այն փաստի ճանաչմամբ, որ ոչ մշտաբնակների հարկային պարտավորությունը որոշվում է հարկման ենթակա այն տարրերի առկայությամբ, որոնք ծագել կամ գտնվում են Անդամի տարածքում, կամ՝
- ii) կիրառվում են ոչ մշտաբնակների նկատմամբ՝ Անդամի տարածքում կիրառումը կամ հավաքումն ապահովելու համար, կամ՝
- iii) կիրառվում են ոչ մշտաբնակների կամ մշտաբնակների նկատմամբ՝ հարկերից խուսափումը կամ խուսանավումը կանխարգելելու համար, ներառյալ՝ համապատասխանեցման միջոցները, կամ՝
- iv) կիրառվում են մեկ այլ Անդամի տարածքում կամ տարածքից մատուցած ծառայություններ սպառողների նկատմամբ՝ այդ սպառողների նկատմամբ Անդամի տարածքում գտնվող աղբյուրներից ծագած հարկերի կիրառումն ու հավաքումն ապահովելու համար, կամ՝
- v) տարբերակում են այնպիսի ծառայություններ մատուցողներին, որոնք հարկման ենթակա են աշխարհով մեկ տարածված հարկման ենթակա տարրերի համար, և այլ ծառայություն մատուցողներին՝ ընդունելով դրանց միջև հարկային հիմքի բնույթների տարբերությունը, կամ՝
- vi) Անդամի հարկային հիմքը պաշտպանելու նպատակով սահմանում, բաշխում կամ բաժանում են մշտաբնակ անձանց կամ մասնաճյուղերի եկամուտը, շահույթը, օգուտը, կորուստը, հանուրդը կամ վարկը, կամ դրանք բաշխում կամ բաժանում են փոխկապակցված անձերի կամ միևնույն անձի մասնաճյուղերի միջև:

XIV Կոնվենտի «դ» կետում, ինչպես նաև սույն ծանոթագրության մեջ նշված հարկային անվանումներն ու հասկացությունները որոշվում են միջոցը ձեռնարկող Անդամի ներքին օրենսդրությամբ սահմանված հարկային սահմանումների և հասկացությունների կամ համարժեք կամ համանման սահմանումների և հասկացությունների համաձայն:

**Հոդված XIV<sup>bis</sup>**  
**Անվտանգության հետ կապված բացառություններ**

1. Սույն Համաձայնագրի մեջ ոչինչ չի մեկնաբանվում, թե՝
  - ա) Անդամից պահանջում է, որ այն որևէ տեղեկություն տրամադրի, որի բացահայտումը համարում է իր անվտանգության էական շահերին հակասող, կամ՝
  - բ) Անդամին արգելում է որևէ գործողություն ձեռնարկել, որն այն անհրաժեշտ է համարում իր անվտանգության էական շահերը պաշտպանելու համար, որը՝
    - i) վերաբերում է ծառայությունների մատուցմանը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կատարվում է զինված ուժերը մատակարարելու նպատակով.
    - ii) վերաբերում է միջուկային տրոհման ընդունակ նյութերին կամ այն նյութերին, որոնցից դրանք ստացվել են;
    - iii) որը ձեռնարկված է պատերազմի կամ միջազգային հարաբերություններում այլ արտակարգ իրավիճակների ժամանակ, կամ՝
  - գ) Անդամին արգելում է որևէ գործողություն ձեռնարկել՝ ի կատարումն Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ սահմանված՝ միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման համար իր պարտավորությունների:
2. Ծառայությունների առևտրի խորհուրդը հնարավորին չափ լիարժեքորեն տեղեկացվում է 1 «բ» և «գ» կետերի համաձայն ձեռնարկված միջոցների և դրանց դադարեցման մասին:

**Հոդված XV**  
**Լրավճարներ**

1. Անդամներն ընդունում են, որ որոշ դեպքերում լրավճարները կարող են խաթարող ազդեցություն ունենալ ծառայությունների առևտրի վրա: Անդամները բանակցություններ են սկսում՝ նպատակ ունենալով առևտրի վրա այդպիսի խաթարող ազդեցությունից խուսափելու համար անհրաժեշտ բազմակողմ հիմնադրույթներ մշակել<sup>7</sup>: Բանակցություններում դիտարկվում է նաև փոխհատուցման ընթացակարգերի նպատակահարմարության հարցը: Այդ բանակցությունները ճանաչում են լրավճարների դերը զարգացող երկրների զարգացման ծրագրերի հարցում և հաշվի են առնում Անդամների, հատկապես զարգացող Անդամ երկրների կարիքներն այդ ոլորտում ճկունություն ունենալու առումով: Այդ բանակցությունների նպատակով Անդամները տեղեկություններ են փոխանակում ծառայությունների առևտրի առնչվող բոլոր այն լրավճարների մասին, որոնք նրանք տրամադրում են իրենց ներքին ծառայություններ մատուցողներին:
2. Որևէ Անդամ, որը համարում է, որ վնասակար ազդեցության է ենթարկվել այլ Անդամի լրավճարի հետևանքով, կարող է այդ Անդամի հետ խորհրդակցություններ պահանջել այդ հարցերի շուրջ: Այդ պահանջների նկատմամբ բարյացակամ վերաբերմունք է ցուցաբերվում:

<sup>7</sup> Ապագա աշխատանքային ծրագրով պետք է որոշվի, թե ինչպես և ինչ ժամկետներում կանցկացվեն այդ բազմակողմ հիմնադրույթների վերաբերյալ բանակցությունները:

**ԳԼՈՒԽ III  
ՀԱՏՈՒԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Հոդված XVI  
Շուկայի մատչելիություն**

1. I Հոդվածում հատկանշված մատուցման եղանակների միջոցով շուկայի մատչելիության առնչությամբ յուրաքանչյուր Անդամ ցանկացած այլ Անդամի ծառայությունների և ծառայություններ մատուցողների նկատմամբ ցուցաբերում է ոչ պակաս բարենպաստ մոտեցում, քան այն, որը նախատեսված է իր Ժամանակացանկում համաձայնեցված և հատկանշված ժամկետներով, սահմանափակումներով ու պայմաններով<sup>8</sup>:
2. Այն ոլորտներում, որտեղ շուկայի մատչելիության պարտավորություններ են ստանձնված, այն միջոցները, որոնք Անդամը չպետք է պահպանի կամ ընդունի ոչ տարածքային ստորաբաժանման և ոչ էլ իր ամբողջ տարածքի հիմունքով, սահմանվում են հետևյալ կերպ, եթե այլ բան չի հատկանշված իր Ժամանակացանկում.
  - ա) ծառայություն մատուցողների քանակի սահմանափակումներ, լինի դա թվային քվոտաների, մենաշնորհների, ծառայության բացառիկ մատուցողների, թե տնտեսական անհրաժեշտության ստուգման պահանջների ձևով.
  - բ) ծառայությանը վերաբերող գործարքների կամ ունեցվածքի ընդհանուր արժեքի սահմանափակումներ՝ թվային քվոտաների կամ տնտեսական անհրաժեշտության ստուգման պահանջի ձևով.
  - գ) ծառայությանը վերաբերող գործողությունների ընդհանուր թվի կամ ծառայության արդյունքի՝ հատկորոշված թվային միավորներով արտահայտած ընդհանուր քանակի սահմանափակումներ՝ քվոտաների կամ տնտեսական անհրաժեշտության ստուգման պահանջի ձևով<sup>9</sup>.
  - դ) այն ֆիզիկական անձանց ընդհանուր թվի սահմանափակումներ քվոտաների կամ տնտեսական անհրաժեշտության ստուգման պահանջի ձևով, ովքեր կարող են աշխատել ծառայության առանձին ոլորտում, կամ ում ծառայություն մատուցողը կարող է վարձել, և ովքեր անհրաժեշտ են որոշակի ծառայություն մատուցելու համար և ուղղակիորեն առնչվում են դրան.
  - ե) միջոցներ, որոնցով իրավաբանական անձի կամ համատեղ ձեռնարկության հատկանշված տեսակներ են արգելվում կամ պահանջվում, որոնց միջոցով ծառայություն մատուցողը կարող է ծառայություն մատուցել, և՛
  - զ) օտարերկրյա գործարար միջոցների (կապիտալի) մասնակցության սահմանափակումներ՝ օտարերկրյա բաժնետիրության վրա առավելագույն տոկոսային սահմանի կամ անհատական կամ ընդհանուր օտարերկրյա ներդրումների ընդհանուր ծավալի առումով:

<sup>8</sup> Եթե որևէ Անդամ շուկայի մատչելիության պարտավորություն է ստանձնում I Հոդվածի 2«ա» ենթակետում հիշատակված մատուցման եղանակով ծառայության մատուցման կապակցությամբ, և եթե սահմանի վրայով գործարար միջոցների (կապիտալի) տեղաշարժն ինքնին ծառայության եական մաս է, ապա այդ Անդամը դրանով պարտավոր է թույլատրել գործարար միջոցների այդպիսի տեղաշարժը: Եթե որևէ Անդամ շուկայի մատչելիության պարտավորություն է ստանձնում I Հոդվածի 2«գ» ենթակետում հիշատակված մատուցման եղանակով ծառայության մատուցման կապակցությամբ, ապա նա դրանով պարտավոր է թույլատրել համապատասխան գործարար միջոցների փոխանցումներն իր տարածք:

<sup>9</sup> 2«գ» ենթակետը չի ընդգրկում Անդամի այն միջոցները, որոնցով սահմանափակվում է ծառայություններ մատուցելու համար օգտագործվող ներդրանքը:

## **Հոդված XVII Ազգային մոտեցում**

1. Իր ժամանակացանկի մեջ ներգրավված ոլորտներում, հաշվի առնելով դրանում սահմանված ցանկացած պայմաններն ու վերապահումները, յուրաքանչյուր Անդամ ծառայությունների մատուցման վրա ազդող բոլոր միջոցների առնչությամբ որևէ այլ Անդամի ծառայությունների ու ծառայություն մատուցողների նկատմամբ ցուցաբերում է ոչ պակաս բարենպաստ մոտեցում, քան այն, որն ինքը ցուցաբերում է իր սեփական նման ծառայությունների և ծառայություն մատուցողների նկատմամբ<sup>10</sup>:
2. Անդամը կարող է 1-ին կետի պահանջը կատարել՝ որևէ այլ Անդամի ծառայությունների և ծառայություն մատուցողների նկատմամբ ցուցաբերելով պաշտոնապես նույնական կամ պաշտոնապես տարբեր մոտեցում՝ համեմատած այն մոտեցման հետ, որն ինքը ցուցաբերում է իր սեփական նման ծառայությունների և ծառայություն մատուցողների նկատմամբ:
3. Պաշտոնապես նույնական կամ պաշտոնապես տարբեր մոտեցումը համարվում է պակաս բարենպաստ, եթե այն մրցակցության պայմանները փոխում է հոգուտ Անդամի ծառայությունների և ծառայություն մատուցողների՝ համեմատած որևէ այլ Անդամի նման ծառայությունների և ծառայություն մատուցողների հետ:

## **Հոդված XVIII Լրացուցիչ պարտավորություններ**

Անդամները կարող են պարտավորություններ բանակցել ծառայությունների առևտրի վրա ազդող այն միջոցների առնչությամբ, որոնք XVI կամ XVII Հոդվածների համաձայն ենթակա չեն ժամանակացանկում գրանցվելու, ներառյալ՝ վերապահումների, համօրինակների կամ լիցենզավորման հարցերին վերաբերողները: Այդ պարտավորությունները գրանցվում են Անդամի ժամանակացանկում:

## **ԳԼՈՒԽ IV ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԱՉԱՏԱԿԱՆԱՅՈՒՄ**

### **Հոդված XIX Բանակցություններ հատուկ պարտավորությունների շուրջ**

1. Ի կատարումն սույն Համաձայնագրի նպատակների՝ Անդամները բանակցությունների հաջորդական փուլեր են անցկացնում, որոնք սկսվում են ԱԶԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան հինգ տարի հետո, և դրանից հետո անցկացվում են պարբերաբար՝ նպատակ ունենալով հասնելու ազատականացման ավելի ու ավելի բարձր մակարդակի: Այդ բանակցություններն ուղղված են ծառայությունների առևտրի վրա միջոցների վնասակար ազդեցության նվազեցմանը կամ վերացմանը՝ որպես շուկայի արդյունավետ մատչելիություն ապահովելու միջոց: Այս գործընթացն իրականացվում է՝ նպատակ ունենալով փոխշահավետ հիմունքներով խթանելու բոլոր մասնակիցների շահերը և ապահովելու իրավունքների ու պարտավորությունների համընդհանուր հաշվեկշիռը:
2. Ազատականացման գործընթացը տեղի է ունենում՝ պատշաճորեն հաշվի առնելով ինչպես համընդհանուր, այնպես էլ առանձին ոլորտներում ազգային քաղաքականության նպատակները և առանձին Անդամների զարգացման աստիճանը: Չարգացող առանձին Անդամ երկրներ համապատասխան ճկունություն ունեն ավելի քիչ ոլորտներ բացելու, գործարքների ավելի քիչ տեսակներ ազատականացնելու, իրենց զարգացման իրավիճակի հետ համաբայլ՝ շուկայի մատչելիությունը աստիճանաբար ընդլայնելու և օտարերկրյա ծառայություն մատուցողների համար իրենց շուկաները մատչելի դարձնելիս այդ մուտքի համար այնպիսի պայմաններ դնելու, որոնց նպատակը IV Հոդվածում հիշատակված խնդիրներն իրագործելն է:
3. Յուրաքանչյուր փուլի համար սահմանվում են բանակցային ուղեցույցներ և ընթացակարգեր: Այդ ուղեցույցները սահմանելու նպատակով Ծառայությունների առևտրի խորհուրդն անց է կացնում ծառայ-

<sup>10</sup> Սույն Հոդվածի համաձայն ստանձնված հատուկ պարտավորությունները չեն մեկնաբանվում, թե որևէ Անդամից պահանջում են փոխհատուցել մրցակցային որևէ ներհատուկ աննպաստության համար, որը համապատասխան ծառայությունների կամ ծառայություն մատուցողների օտարերկրյա լիներու հետևանք է:

յությունների առևտրի ընդհանուր և ըստ ոլորտների գնահատում՝ վկայակոչելով սույն Համաձայնագրի նպատակները, ներառյալ՝ IV Հոդվածի 1-ին կետում սահմանված նպատակները: Բանակցային ուղեցույցներով եղանակներ են սահմանվում Անդամների՝ նախկին բանակցություններից ի վեր ինքնուրույնաբար ձեռնարկած ազատականացման նկատմամբ մոտեցման համար, ինչպես նաև առավել թույլ զարգացած Անդամ երկրների նկատմամբ IV Հոդվածի 3-րդ կետի դրույթներով սահմանված հատուկ մոտեցման համար:

4. Աստիճանական ազատականացման գործընթացը յուրաքանչյուր այդպիսի փուլում երկկողմ, բազմակողմ-կամավոր կամ բազմակողմ-պարտադիր բանակցությունների միջոցով առաջ է տարվում դեպի Անդամների՝ սույն Համաձայնագրի համաձայն ստանձնած հատուկ պարտավորությունների ընդհանուր մակարդակի բարձրացումը:

## **Հոդված XX** **Հատուկ պարտավորությունների ժամանակացանկ**

1. Յուրաքանչյուր Անդամ սույն Համաձայնագրի III Գլխի համաձայն ստանձնած իր հատուկ պարտավորությունները շարադրում է ժամանակացանկում: Այն ոլորտների առնչությամբ, որոնցում այդ պարտավորությունները ստանձնվել են, յուրաքանչյուր ժամանակացանկում հատկանշվում է՝
  - ա) շուկայի մատչելիությանը վերաբերող ժամկետները, սահմանափակումներն ու պայմանները.
  - բ) ազգային մոտեցմանը վերաբերող պայմաններն ու վերապահումները.
  - գ) լրացուցիչ պարտավորություններին վերաբերող հանձնառությունները.
  - դ) անհրաժեշտության դեպքում՝ այդ պարտավորությունների իրականացման ժամկետները, և՛
  - ե) այդ պարտավորություններն ուժի մեջ մտնելու օրը:
2. Այն միջոցները, որոնք չեն համապատասխանում ոչ XVI և ոչ էլ XVII Հոդվածներին, գրանցվում են XVI Հոդվածին վերաբերող սյունակում: Այդ դեպքում համարվում է, որ գրանցմամբ պայման կամ վերապահում է սահմանվում նաև XVII Հոդվածի համար:
3. Հատուկ պարտավորությունների ժամանակացանկը կցվում է սույն Համաձայնագրին ու դրա անբաժանելի մասն է կազմում:

## **Հոդված XXI** **Ժամանակացանկերի փոփոխում**

1.
  - ա) Անդամը (սույն Հոդվածում հիշատակվում է որպես «փոփոխող Անդամ») կարող է սույն Հոդվածի դրույթների համաձայն իր ժամանակացանկում ցանկացած պարտավորություն փոփոխել կամ հանել՝ այդ պարտավորությունն ուժի մեջ մտնելու օրվանից երեք տարի անցնելուց հետո ցանկացած ժամանակ:
  - բ) Փոփոխող Անդամը Ծառայությունների առևտրի խորհրդին պարտավորությունը փոփոխելու կամ այն հանելու իր մտադրության մասին ծանուցում է փոփոխությունը կամ հանումն իրականացնելու ծրագրված օրվանից՝ ոչ ուշ, քան երեք ամիս առաջ:
2.
  - ա) Փոփոխող Անդամը բանակցություններ է սկսում ցանկացած այն Անդամի պահանջով, որի՝ սույն Համաձայնագրով սահմանված օգուտները կարող են տուժել 1«բ» ենթակետի համաձայն ծանուցված՝ առաջարկվող փոփոխության կամ հանման պատճառով (սույն Հոդվածում հիշատակվում է որպես «տուժող Անդամ»)՝ նպատակ ունենալով համաձայնության հասնել ցանկացած անհրաժեշտ փոխհատուցողական կարգավորման վերաբերյալ: Այդ բանակցությունների ժամանակ ու համաձայնության մեջ, խնդրո առարկա Անդամները ձգտում են փոխշահավետ պարտավորությունների ընդհանուր մակարդակ պահպանել, որն առևտրի համար ոչ պակաս բարենպաստ է, քան այն, որ նախատեսված էր նախքան այդ բանակցությունները եղած հատուկ պարտավորությունների ժամանակացանկով:
  - բ) Փոխհատուցման կարգավորումները կատարվում են ազգերի առավել բարենպաստության հիմունքով:

3.
  - ա) Եթե փոփոխող Անդամն ու որևէ տուժող Անդամ համաձայնության չեն գալիս մինչև բանակցությունների համար նախատեսված ժամկետի վերջը, ապա այդ տուժող Անդամը կարող է գործը ներկայացնել միջնորդ դատարան: Ցանկացած տուժող Անդամ, որը ցանկանում է օգտվել այն իրավունքից, որն ինքը կարող է ունենալ փոխհատուցման առումով, պետք է մասնակցի միջնորդ դատավարությանը:
  - բ) Եթե ոչ մի տուժող Անդամ միջնորդ դատավարություն չի պահանջել, ապա փոփոխող Անդամն ազատ է իրականացնել առաջարկված փոփոխությունը կամ հանումը:
4.
  - ա) Փոփոխող Անդամը չի կարող փոփոխել կամ հանել իր պարտավորությունները, քանի դեռ փոխհատուցողական կարգավորումներ չի կատարել միջնորդ դատարանի եզրակացությունների համաձայն:
  - բ) Եթե փոփոխող Անդամն իրականացնում է իր առաջարկած փոփոխությունը կամ հանումը և չի կատարում միջնորդ դատարանի եզրակացությունները, ապա միջնորդ դատավարությանը մասնակցած ցանկացած տուժող Անդամ կարող է այդ եզրակացությունների համաձայն էականորեն համարժեք օգուտներ փոփոխել կամ հանել: Անկախ II Հոդվածից, այդ փոփոխությունը կամ հանումը կարող է իրականացվել միայն փոփոխող Անդամի նկատմամբ:
5. Ծառայությունների առևտրի խորհուրդը ստեղծում է ժամանակացանկերի շտկման կամ փոփոխման ընթացակարգեր: Ցանկացած Անդամ, որը սույն Հոդվածի համաձայն փոփոխել կամ հանել է ժամանակացանկում գրանցված պարտավորությունները, իր ժամանակացանկը փոփոխում է այդ ընթացակարգերի համաձայն:

## ԳԼՈՒԽ V ՍԱՀՄԱՆԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Հոդված XXII Խորհրդակցություն

1. Յուրաքանչյուր Անդամ բարյացակամ վերաբերմունք է ցուցաբերում այն նյութերի շուրջ խորհրդակցության նկատմամբ, որոնք ցանկացած այլ Անդամ կարող է ներկայացնել սույն Համաձայնագրի գործողության վրա ազդեցություն ունեցող ցանկացած հարցի առնչությամբ, և համապատասխան հնարավորություն է ընձեռում դրա համար: Վեճերի Կարգավորման փոխհամաձայնությունը (ՎԿՓ) տարածվում է այդ խորհրդակցությունների վրա:
2. Ծառայությունների առևտրի խորհուրդը կամ Վեճերի կարգավորման մարմինը (ՎԿՄ) կարող է, ցանկացած Անդամի պահանջով, ցանկացած Անդամի կամ Անդամների հետ խորհրդակցել ցանկացած այն հարցի շուրջ, որի համար 1-ին կետի համաձայն անցկացված խորհրդակցության միջոցով հնարավոր չի եղել գոհացուցիչ լուծում գտնել:
3. Ոչ սույն Հոդվածի և ոչ էլ XXIII Հոդվածի համաձայն՝ Անդամը չի կարող դիմել XVII Հոդվածին՝ կապված մեկ այլ Անդամի այն միջոցի հետ, որն ընկնում է կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ դրանց միջև եղած միջազգային համաձայնագրի շրջանակների մեջ: Այն դեպքում, երբ Անդամների միջև տարաձայնություն կա միջոցի՝ իրենց միջև եղած այդ համաձայնագրի շրջանակների մեջ ընկնելու վերաբերյալ, յուրաքանչյուր Անդամ ազատ է այս հարցը ներկայացնել Ծառայությունների առևտրի խորհուրդը<sup>11</sup>: Խորհուրդը հարցը ներկայացնում է միջնորդ դատարան: Միջնորդ դատարանի որոշումը վերջնական է և Անդամներին պարտավորեցնող:

<sup>11</sup> Կրկնակի հարկումից խուսափելու մասին այն համաձայնագրերի առնչությամբ, որոնք գոյություն են ունեցել ԱՅԿ համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը, այդ հարցը կարող է Ծառայությունների առևտրի խորհուրդը ներկայացվել միայն այդ համաձայնագրի երկու կողմերի համաձայնությամբ:

## **Յոդված XXIII** **Վեճերի կարգավորում և կիրարկում**

1. Եթե որևէ Անդամ համարի, որ որևէ այլ Անդամ թերանում է կատարել սույն Համաձայնագրով սահմանված իր պարտականությունները կամ հատուկ պարտավորությունները, ապա նա կարող է դիմել ՎԿՓ-ի օգնությանը՝ հարցի փոխադարձ գոհացուցիչ լուծման հասնելու նպատակով:
2. Եթե ՎԿՄ-ն համարում է, որ հանգամանքները բավականաչափ լուրջ են այդ գործողությունն արդարացնելու համար, ապա կարող է ՎԿՓ-ի 22-րդ Յոդվածի համաձայն՝ Անդամին կամ Անդամներին թույլատրել ժամանակավորապես դադարեցնել պարտականությունների և հատուկ պարտավորությունների կիրառումը ցանկացած այլ Անդամի կամ Անդամների նկատմամբ:
3. Եթե որևէ Անդամ համարում է, որ որևէ օգուտ, որն ինքը կարող էր խելամտորեն ակնկալել, որ իրեն կհասնի այլ Անդամի՝ սույն Համաձայնագրի III Գլխով սահմանված հատուկ պարտավորության համաձայն, վերացվում կամ նվազեցվում է սույն Համաձայնագրի դրույթներին չհակասող որևէ միջոցի կիրառման հետևանքով, ապա նա կարող է դիմել ՎԿՓ-ի օգնությանը: Եթե ՎԿՄ-ն որոշում է, որ միջոցը վերացրել կամ նվազեցրել է օգուտը, ապա տուժող Անդամը փոխադարձ գոհացուցիչ կարգավորման իրավունք է ստանում XXI Յոդվածի 2-րդ կետի հիման վրա, ինչը կարող է միջոցի փոփոխում կամ հանում ընդգրկել: Այն դեպքում, երբ խնդրո առարկա Անդամները համաձայնության չեն գալիս, կիրառվում է ՎԿՓ-ի 22-րդ Յոդվածը:

## **Յոդված XXIV** **Ծառայությունների առևտրի խորհուրդ**

1. Ծառայությունների առևտրի խորհուրդը կատարում է այնպիսի գործառնություններ, ինչպիսիք իր վրա դրվել սույն Համաձայնագրի գործողությանն ու դրա նպատակների իրագործմանը նպաստելու համար: Խորհուրդը կարող է այնպիսի օժանդակ մարմիններ ստեղծել, ինչպիսիք նպատակահարմար կգտնի իր գործառնությունն արդյունավետորեն կատարելու համար:
2. Խորհուրդը և, քանի դեռ Խորհուրդն այլ կերպ չի որոշել, դրա օժանդակ մարմինները բաց են բոլոր Անդամների ներկայացուցիչների մասնակցության համար:
3. Խորհրդի Նախագահն ընտրվում է Անդամների կողմից:

## **Յոդված XXV** **Տեխնիկական համագործակցություն**

1. IV Յոդվածի 2-րդ կետում հիշատակված՝ հաղորդակցման կետերի ծառայությունները մատչելի են Անդամների՝ այդպիսի աջակցության կարիք ունեցող ծառայություն մատուցողների համար:
2. Զարտուղարությունը զարգացող երկրներին տեխնիկական աջակցություն է տրամադրում բազմակողմ մակարդակի վրա, իսկ դրա վերաբերյալ որոշումը կայացնում է Ծառայությունների առևտրի խորհուրդը:

## **Յոդված XXVI** **Միջազգային այլ կազմակերպությունների հետ հարաբերություններ**

Գլխավոր խորհուրդը խորհրդակցության ու համագործակցության համար անհրաժեշտ պայմանավորվածություններ է ձեռք բերում Միավորված ազգերի կազմակերպության և դրա մասնագիտացված գործակալությունների, ինչպես նաև ծառայություններին առնչվող միջկառավարական այլ կազմակերպությունների հետ:

**ԳԼՈՒԽ VI  
ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված XXVII  
Օգուտների մերժում**

Անդամը կարող է մերժել սույն Համաձայնագրի օգուտները տրամադրել՝

- ա) ծառայության մատուցման առնչությամբ, եթե պարզում է, որ ծառայությունը մատուցվում է ոչ Անդամ երկրի տարածքից կամ տարածքում կամ այն Անդամի տարածքից կամ տարածքում, որի նկատմամբ մերժող Անդամը չի կիրառում ԱՅԿ համաձայնագիրը:
- բ) ծովային փոխադրումների ծառայության մատուցման դեպքում, եթե պարզում է, որ ծառայությունը մատուցվում է՝
  - i) մի նավով, որը գրանցված է ոչ Անդամ երկրի օրենքների կամ այն Անդամի օրենքների համաձայն, որի նկատմամբ մերժող Անդամը չի կիրառում ԱՅԿ համաձայնագիրը, և՝
  - ii) մի անձի կողմից, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն շահագործում և(կամ) օգտագործում է նավը, որը, սակայն, պատկանում է ոչ Անդամ երկրի կամ պատկանում է մի Անդամի, որի նկատմամբ մերժող Անդամը չի կիրառում ԱՅԿ համաձայնագիրը:
- գ) ծառայություն մատուցող իրավաբանական անձին, եթե պարզում է, որ նա մեկ այլ Անդամի ծառայություն մատուցող չէ կամ այն Անդամի ծառայություն մատուցողն է, որի նկատմամբ մերժող Անդամը չի կիրառում ԱՅԿ համաձայնագիրը:

**Հոդված XXVIII  
Սահմանումներ**

Սույն համաձայնագրի նպատակներով՝

- ա) «միջոցներ» նշանակում է Անդամի ձեռնարկած ցանկացած միջոց, լինի դա օրենքի, կանոնակարգման, կանոնի, ընթացակարգի, որոշման, վարչական գործողության, կամ ցանկացած այլ տեսքով:
- բ) «ծառայության մատուցում» ընդգրկում է ծառայության արտադրությունը, բաշխումը, շուկայահանումը, վաճառքը և առաքումը:
- գ) «Անդամների ձեռնարկած՝ ծառայությունների առևտրի վրա ազդեցություն ունեցող միջոցներն» ընդգրկում են միջոցներ, որոնք՝
  - i) վերաբերում են ծառայության գնմանը, վճարմանը կամ օգտագործմանը:
  - ii) ծառայության մատուցման կապակցությամբ՝ վերաբերում են այն ծառայությունների մատչելիությանը և օգտագործմանը, որոնք այդ Անդամները պահանջում են առաջարկել հասարակությանը:
  - iii) վերաբերում են Անդամի տարածքում ծառայություն մատուցելու նպատակով՝ մեկ այլ Անդամի անձանց ներկայությանը, ներառյալ՝ առևտրային ներկայությանը:
- դ) «առևտրային ներկայություն» նշանակում է ծառայություն մատուցելու նպատակով որևէ Անդամի տարածքում գործարար կամ մասնագիտական հաստատության ցանկացած տեսակ, որը ստեղծվել է՝ ներառյալ՝
  - i) իրավաբանական անձի կազմավորման, ձեռքբերման կամ պահպանման միջոցով, կամ՝
  - ii) մասնաճյուղի կամ ներկայացուցչական գրասենյակի ստեղծման կամ պահպանման միջոցով:

- ե) ծառայության «ոլորտ» նշանակում է՝
- i) հատուկ պարտավորության առնչությամբ՝ այդ ծառայության մեկ կամ ավելի կամ բոլոր ենթաօլորտները, ինչպես հատկորոշված է Անդամի ժամանակացանկում,
  - ii) այլապես, այդ ծառայության օլորտն ամբողջությամբ, ներառյալ՝ դրա բոլոր ենթաօլորտները.
- զ) «այլ Անդամի ծառայություն» նշանակում է ծառայություն, որը մատուցվում է՝
- i) այդ այլ Անդամի տարածքից կամ տարածքում կամ՝ ծովային փոխադրման դեպքում, այդ այլ Անդամի օրենքների համաձայն գրանցված նավով կամ այդ այլ Անդամի անձի կողմից, որը ծառայությունը մատուցում է՝ նավը շահագործելու և (կամ) այն ամբողջությամբ կամ մասնակիորեն օգտագործելու միջոցով, կամ՝
  - ii) ծառայությունն առևտրային ներկայության կամ ֆիզիկական անձի ներկայության միջոցով մատուցելու դեպքում՝ այդ այլ Անդամի՝ ծառայություն մատուցողի կողմից.
- է) «ծառայություն մատուցող» նշանակում է որևէ անձ, որը ծառայություն է մատուցում<sup>12</sup>.
- ը) «ծառայության մենաշնորհային մատուցող» նշանակում է ցանկացած պետական կամ մասնավոր անձ, որին Անդամը պաշտոնապես կամ գործնականորեն լիազորել կամ հաստատել է որպես այդ Անդամի տարածքի համապատասխան շուկայում այդ ծառայության բացառիկ մատուցող.
- թ) «ծառայություն սպառող» նշանակում է ցանկացած անձ, որը ծառայություն է ստանում կամ օգտագործում.
- ժ) «անձ» նշանակում է կամ ֆիզիկական կամ իրավաբանական անձ;
- ժա) «այլ Անդամի ֆիզիկական անձ» նշանակում է ֆիզիկական անձ, որը բնակվում է այդ այլ Անդամի կամ որևէ այլ Անդամի տարածքում, և որն այդ այլ Անդամի օրենքների համաձայն՝
- i) այդ այլ Անդամի քաղաքացի է, կամ՝
  - ii) այդ այլ Անդամ երկրում մշտական բնակության իրավունք ունի այն դեպքում, երբ Անդամը՝
    1. քաղաքացիներ չունի, կամ՝
    2. ծառայությունների առևտրի վրա ազդեցություն ունեցող միջոցների կապակցությամբ՝ իր մշտական բնակիչների նկատմամբ ցուցաբերում է ըստ էության նույն մոտեցումը, ինչ ցուցաբերում է իր քաղաքացիների նկատմամբ, ինչպես որ ծանուցվել է իր կողմից ԱԶԿ համաձայնագրի ընդունման կամ դրան անդամակցելու ժամանակ, ընդ որում՝ ոչ մի Անդամ պարտավոր չէ այդ մշտական բնակիչներին ավելի բարենպաստ մոտեցում տրամադրել, քան այն, որն այդ մշտական բնակիչներին կտրամադրեր այդ այլ Անդամը: Այդ ծանուցման մեջ երաշխիք է ներառվում՝ այդ մշտական բնակիչների նկատմամբ, իր օրենքների և կանոնակարգերի համաձայն, այն նույն պարտականությունները հանձն առնելու, ինչպիսիք որ այլ Անդամը կրում է իր քաղաքացիների նկատմամբ:
- ժբ) «իրավաբանական անձ» նշանակում է գործող օրենքների համաձայն պատշաճ կերպով, շահույթ հետապնդելու կամ որևէ այլ նպատակով ստեղծված կամ այլ կերպ կազմավորված ցանկացած օրինական, մասնավոր կամ պետական սեփականությամբ կազմակերպություն, ներառյալ՝ ցանկացած բաժնետիրական ընկերություն, միավորում, գործընկերություն, համատեղ ձեռնարկություն, անհատական ձեռնարկություն թե ընկերակցություն.

<sup>12</sup> Եթե ծառայությունն ուղղակիորեն իրավաբանական անձը չի մատուցում, այլ այն մատուցվում է առևտրային ներկայության այլ եղանակներով, ինչպիսիք են մասնաճյուղը կամ ներկայացուցչական գրասենյակները, ապա այդ ներկայության միջոցով ծառայություն մատուցողի նկատմամբ (այսինքն՝ իրավաբանական անձի), այնուամենայնիվ, ցուցաբերվում է ծառայություն մատուցողների համար Համաձայնագրով նախատեսված մոտեցում: Այդ մոտեցումը տարածվում է այն ներկայության վրա, որի միջոցով ծառայությունը մատուցվում է, և կարող է չտարածվել մատուցողի այն բաժանմունքների վրա, որոնք դուրս են այն տարածքից, որտեղ ծառայությունը մատուցված է:

Ժգ) «այլ Անդամի իրավաբանական անձ» նշանակում է իրավաբանական անձ, որը՝

- i) կամ ստեղծվել, կամ այլ կերպ կազմավորվել է այդ այլ Անդամի գործող օրենքների համաձայն և այդ Անդամի կամ որևէ այլ Անդամի տարածքում ներգրավված է ինքնուրույն գործարար գործունեության մեջ, կամ էլ՝
- ii) առևտրային ներկայության միջոցով ծառայություն մատուցելու դեպքում՝
  1. պատկանում է այդ Անդամի ֆիզիկական անձանց կամ վերահսկվում է դրանց կողմից, կամ՝
  2. պատկանում է այդ այլ Անդամի՝ «i» ենթակետում հատկանշված իրավաբանական անձանց կամ վերահսկվում է դրանց կողմից.

Ժդ) իրավաբանական անձը՝

- i) «պատկանում է» որևէ Անդամի անձանց, եթե դրանում սեփական միջոցների 50 տոկոսից ավելի մասնաբաժինը օգտառու կերպով պատկանում է այդ Անդամի անձանց.
- ii) «վերահսկվում է» որևէ Անդամի անձանց կողմից, եթե այդ անձինք իրավասու են նշանակելու դրա տնօրենների մեծամասնությանը կամ այլ կերպ օրինականորեն ուղղորդելու դրա գործողությունները.
- iii) «փոխկապակցված է» մեկ այլ անձի հետ, եթե այն վերահսկում է այդ այլ անձին կամ վերահսկվում է դրա կողմից, կամ եթե այն և այդ այլ անձը՝ երկուսն էլ վերահսկվում են միևնույն անձի կողմից, և՛

Ժե) «ուղղակի հարկերն» ընդգրկում են ընկերությունների վճարած՝ ընդհանուր եկամուտի, ընդհանուր գործարար միջոցների կամ եկամուտի կամ գործարար միջոցների տարրերի վրա դրվող բոլոր հարկերը, ներառյալ՝ գույքի օտարումից գոյացած հասույթների վրա դրվող հարկերը, գույքահարկերը, ժառանգության և նվիրատվության վրա դրվող հարկերը և ընկերությունների վճարած աշխատավարձերի կամ ռոճիկների ընդհանուր գումարի վրա դրվող հարկերը, ինչպես նաև գործարար միջոցների արժեքաճի վրա դրվող հարկերը:

## **Յոթերորդակցում Յոթերորդակցում**

Սույն Համաձայնագրին կից Յոթերորդակցումը սույն Համաձայնագրի անբաժանելի մասն է:

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### II ՀՈԴՎԱԾԻՑ ԱԶԱՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ

#### Շրջանակներ

1. Սույն Հավելվածով հատկորոշվում են այն պայմանները, որոնց համաձայն Անդամը սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահին ազատվում է II Հոդվածի 1-ին կետով սահմանված իր պարտավորություններից:
2. Ցանկացած նոր ազատում, որի համար դիմում են ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո, կարգավորվում է այդ Համաձայնագրի IX Հոդվածի 3-րդ կետի համաձայն:

#### Վերաքննություն

3. Ծառայությունների առևտրի խորհուրդը վերաքննում է 5 տարվանից ավելի ժամկետով շնորհված բոլոր ազատումները: Առաջին այդպիսի վերաքննությունը տեղի է ունենում ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց՝ ոչ ավելի, քան 5 տարի հետո:
4. Վերաքննության ընթացքում Ծառայությունների առևտրի խորհուրդը՝
  - ա) քննության է առնում, թե արդյոք ազատման անհարաժեշտությունը ստեղծող պայմանները դեռևս գոյություն ունեն.
  - բ) որոշում է ցանկացած հետագա վերաքննության ժամկետը:

#### Դադարեցում

5. Անդամի ազատումը Համաձայնագրի II Հոդվածի 1-ին կետով սահմանված՝ առանձին միջոցի վերաբերող պարտավորություններից դադարեցվում է ազատմամբ նախատեսված օրը:
6. Սկզբունքորեն, այդ ազատումների ժամկետը չպետք է գերազանցի 10 տարին: Ցանկացած դեպքում դրանք ենթակա են բանակցման առևտրի ազատականացման հետագա փուլերում:
7. Ազատման ժամկետը լրանալիս Անդամը Ծառայությունների առևտրի խորհրդին ծանուցում է, որ չհամապատասխանող միջոցը համապատասխանեցվել է Համաձայնագրի II Հոդվածի 1-ին կետին:

## II Հողվածից ազատումների ցանկ

[II Հողվածի 2-րդ կետով սահմանված ազատումների համաձայնեցված ցանկերը՝ որպես սույն Հավելվածի մաս, առկա են ԱՅԿ համաձայնագրի պայմանագրային օրինակում:]

### ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՅՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՏԵՂԱՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ

1. Սույն Հավելվածը տարածվում է այն միջոցների վրա, որոնք ծառայության մատուցման կապակցությամբ ազդում են որևէ Անդամի՝ ծառայություն մատուցող ֆիզիկական անձանց վրա, և Անդամի այն ֆիզիկական անձանց վրա, ովքեր վարձված են որևէ Անդամի՝ ծառայություն մատուցողի կողմից:
2. Համաձայնագիրը չի տարածվում այն միջոցների վրա, որոնք ազդում են որևէ Անդամի աշխատանքի շուկա մտնել ձգտող ֆիզիկական անձանց վրա, և ոչ էլ այն միջոցների վրա, որոնք վերաբերում են մրջտական հիմունքով քաղաքացիությանը, բնակվելուն կամ աշխատանքին:
3. Համաձայնագրի III և IV Գլուխների համաձայն Անդամները կարող են հատուկ պարտավորություններ բանակցել, որոնք վերաբերում են Համաձայնագրի համաձայն ծառայություններ մատուցող ֆիզիկական բոլոր կարգերի անձանց տեղաշարժին: Հատուկ պարտավորության տակ ընկնող ֆիզիկական անձանց թույլատրվում է ծառայությունը մատուցել այդ պարտավորության պայմանների համաձայն:
4. Համաձայնագիրը որևէ Անդամի չի արգելում միջոցներ կիրառել՝ կանոնակարգելու ֆիզիկական անձանց մուտքը իր տարածք կամ իր տարածքում նրանց ժամանակավոր կացությունը, ներառյալ՝ այն միջոցները, որոնք անհրաժեշտ են իր սահմանների ամբողջականությունը պաշտպանելու և իր սահմանի վրայով ֆիզիկական անձանց կանոնավոր տեղաշարժը ապահովելու համար, եթե այդ միջոցները չեն կիրառվում այնպիսի ձևով, որ վերացնեն կամ նվազեցնեն հատուկ պարտավորության պայմանների համաձայն որևէ Անդամի հասնող օգուտները<sup>13</sup>:

### ՕՂԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ

1. Սույն Հավելվածը տարածվում է ցուցակագրմամբ կամ առանց ցուցակագրման օդային փոխադրման ծառայությունների և օժանդակ ծառայությունների առևտրի վրա ազդող միջոցներին: Հաստատված է, որ սույն Համաձայնագրով ստանձնված որևէ հատուկ պարտավորություն կամ պարտականություն չի նվազեցնում Անդամի՝ ԱՅԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահին գործող երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերով սահմանված պարտականությունները կամ չի ազդում դրանց վրա:
2. Բացառությամբ սույն Հավելվածի 3-րդ կետով նախատեսվածներից, սույն Համաձայնագիրը, ներառյալ՝ դրա վեճերի կարգավորման ընթացակարգերը, չի կիրառվում այն միջոցների նկատմամբ, որոնք ազդում են՝
  - ա) այնուամենայնիվ թույլատրված երթևեկության իրավունքների վրա, կամ՝
  - բ) այն ծառայությունների վրա, որոնք ուղղակիորեն վերաբերում են երթևեկության իրավունքից օգտվելուն:
3. Համաձայնագիրը կիրառվում է այն միջոցների նկատմամբ, որոնք ազդում են՝
  - ա) օդանավերի վերանորոգման և սպասարկման ծառայությունների վրա,
  - բ) օդային փոխադրման ծառայությունների վաճառքի և շուկայահաման վրա,
  - գ) համակարգչային պատվիրման համակարգի (ՅՊՀ) ծառայությունների վրա:
4. Համաձայնագրի՝ վեճերի կարգավորման ընթացակարգերին կարելի է դիմել միայն, երբ խնդրո առարկա

<sup>13</sup> Միայն այն փաստը, որ որոշ Անդամների ֆիզիկական անձանց համար այցագիր (վիզա) է պահանջվում, իսկ մյուսների անձանց համար՝ ոչ, չի դիտարկվում որպես հատուկ պարտավորությամբ սահմանված օգուտների վերացում կամ նվազեցում:

Անդամները պարտականություններ կամ հատուկ պարտավորություններ են ստանձնել, և երբ երկկողմ և այլ բազմակողմ համաձայնագրերի և համաձայնությունների վեճերի կարգավորման ընթացակարգերն սպառվել են:

5. Ծառայությունների առևտրի խորհուրդը պարբերաբար և առնվազն յուրաքանչյուր հինգ տարին մեկ վերանախնայում է օդային փոխադրման ոլորտի զարգացումները և սույն Հավելվածի գործողությունը՝ նպատակ ունենալով քննարկել այդ ոլորտում Համաձայնագրի հնարավոր հետագա կիրառումը:

6. Սահմանումներ.

ա) «օդանավի վերանորոգման ու սպասարկման ծառայությունները» նշանակում են օդանավի կամ դրա որևէ մասի վրա կատարվող այնպիսի գործողություններ, որոնք կատարվում են, երբ այն հանված է ծառայությունից, և չեն ներառում այսպես կոչված գծային սպասարկումը:

բ) «օդային փոխադրման ծառայությունների վաճառքն ու շուկայահանումը» նշանակում են հնարավորություններ խնդրո առարկա օդային փոխադրամիջոցի համար՝ վաճառելու և ազատորեն շուկայահանելու իր օդային փոխադրումների ծառայությունները, ներառյալ՝ շուկայահանման բոլոր կողմերը, ինչպիսիք են շուկայի հետազոտումը, գովազդումը և բաշխումը: Այդ գործողությունները չեն ներառում օդային փոխադրման ծառայությունների գնորոշումը և ոչ էլ կիրառելի պայմանները:

գ) «համակարգչային պատվիրման ծառայություններ» նշանակում են համակարգչային համակարգերի միջոցով տրամադրվող ծառայություններ, որոնք պարունակում են տեղեկություններ օդային փոխադրամիջոցների չվացուցակների, առկայության, տոմսերի արժեքի և ճանապարհորդության կանոնների վերաբերյալ, որոնց միջոցով կարող են պատվերներ կատարվել կամ տոմսեր թողարկվել:

դ) «երթևեկության իրավունքները» նշանակում են՝ ցուցակագրված և չցուցակագրված ծառայությունների համար Անդամի տարածքից, դեպի Անդամի տարածք, Անդամի տարածքում կամ տարածքի վրայով ուղևորների, փոխադրաբեռների և փոստառաքումների հետ գործողություններ կատարելու և(կամ) դրանք փոխադրելու իրավունքը՝ վարձատրության կամ վարձույթով հիմնադրված, ներառյալ՝ սպասարկվող կետերը, շահագործվող ուղիները, փոխադրվող փոխադրաբեռների տեսակները, ապահովվող կարողությունները, գանձվող սակագներն ու դրանց պայմանները և օդային գծերի հատկորոշման չափանիշները, ներառյալ՝ այնպիսի չափանիշները, ինչպիսիք են համարը, պատկանելությունը և վերահսկողությունը:

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ

1. Շրջանակներ և սահմանումներ

ա) Սույն Հավելվածը տարածվում է ֆինանսական ծառայությունների մատուցման վրա ազդող միջոցներին: Սույն Հավելվածում հիշատակվող ֆինանսական ծառայության մատուցումը նշանակում է ծառայության մատուցում ըստ Համաձայնագրի I Հոդվածի 2-րդ կետով սահմանման:

բ) Համաձայնագրի I Հոդվածի 3«բ» ենթակետի նպատակներով «ծառայություններ, որոնք մատուցվում են կառավարական իրավասություններն իրականացնելիս» նշանակում են հետևյալը.

i) գործողություններ, որոնք կատարում են կենտրոնական դրամատունը կամ իրավասու դրամավարկային մարմինը կամ էլ ցանկացած այլ պետական կազմակերպություն՝ դրամավարկային կամ արտարժույթի փոխարժեքի քաղաքականության իրագործման համար.

ii) գործողություններ, որոնք կազմում են հասարակական ապահովության կամ պետական կենսաթոշակային ծրագրերի օրենքով սահմանված համակարգի մաս, և՛

iii) այլ գործողություններ, որոնք պետական կազմակերպությունը կատարում է կառավարության հաշվին կամ երաշխիքով կամ դրա ֆինանսական միջոցների օգտագործմամբ:

գ) Համաձայնագրի I Հոդվածի 3«բ» ենթակետի նպատակներով, եթե որևէ Անդամ իր ֆինանսական ծառայություններ մատուցողներին թույլատրում է սույն կետի «բ»-«ii» կամ «բ»-«iii» ենթակետերում նշված գործողություններից որևէ մեկը կատարել՝ մրցակցելով պետական կազմա-

կերպության կամ ֆինանսական ծառայություն մատուցողի հետ, ապա «ծառայություններն» ընդգրկում են այդ գործողությունները:

- դ) Համաձայնագրի I Հոդվածի 3«գ» ենթակետը չի տարածվում սույն Հավելվածով ընդգրկված ծառայությունների վրա:

## 2. Ներքին կանոնակարգում

- ա) Անկախ Համաձայնագրի ցանկացած այլ դրույթից, որևէ Անդամի չի արգելվում միջոցներ նախաձեռնել շրջահայաց կարգավորման դրդապատճառներով, ներառյալ՝ ներդրողներին, ավանդատուներին, ապահովագրատերերի կամ այն ֆինանսական ծառայություն մատուցողի վստահված անձանց պաշտպանելու համար, կամ ֆինանսական համակարգի ամբողջականությունն ու կայունությունը ապահովելու համար: Եթե այդ միջոցները չեն համապատասխանում Համաձայնագրի դրույթներին, ապա դրանք չեն օգտագործվում որպես Անդամի՝ Համաձայնագրով սահմանված պարտավորություններից կամ պարտականություններից խուսափելու միջոց:
- բ) Սույն Համաձայնագրում ոչինչ չի մեկնաբանվում այնպես, թե որևէ Անդամից պահանջում է անհատ հաճախորդների գործերին և հաշիվներին վերաբերող տեղեկություններ, կամ էլ պետական կազմակերպությունների տրամադրության տակ եղած որևէ գաղտնի կամ մասնավոր տեղեկություն բացահայտել:

## 3. Ճանաչում

- ա) Անդամը կարող է որևէ այլ երկրի շրջահայաց կարգավորման միջոցները ճանաչել, երբ որոշում է, թե ինչպես պետք է կիրառվեն Անդամի՝ ֆինանսական ծառայություններին վերաբերող միջոցները: Այդպիսի ճանաչումը, որին կարելի է հասնել ներդաշնակեցման կամ որևէ այլ եղանակով, կարող է հիմնված լինել ինդրո առարկա երկրի հետ համաձայնագրի կամ համաձայնության վրա, կամ շնորհվել ինքնուրույնաբար:
- բ) Անդամը, որը «ա» ենթակետում նշված այդպիսի համաձայնագրի կամ համաձայնության (թե ապագա թե գոյություն ունեցող) կողմ է, շահագրգիռ այլ Անդամներին պատշաճ հնարավորություն է տալիս բանակցելու այդ համաձայնագրերին կամ համաձայնություններին անդամակցելու համար, կամ բանակցելու իր հետ համեմատելի համաձայնագրեր կամ համաձայնություններ կնքելու շուրջ՝ այնպիսի հանգամանքներում, երբ առկա կլինեն համաձայնագրի կամ համաձայնության կողմերի միջև տեղեկությունների փոխանակմանը վերաբերող համարժեք կանոնակարգում, վերահսկողություն, այդ կանոնակարգման իրականացում և անհրաժեշտության դեպքում՝ ընթացակարգեր: Եթե որևէ Անդամ ինքնուրույն է ճանաչում շնորհում, ապա նա ցանկացած այլ Անդամի պատշաճ հնարավորություն է ընձեռում՝ ապացուցելու, որ այդ հանգամանքներն առկա են:
- գ) Եթե որևէ Անդամ ծրագրում է որևէ այլ երկրի շրջահայաց կարգավորման միջոցներին ճանաչում շնորհել, ապա VII Հոդվածի 4«բ» կետը չի կիրառվում:

## 4. Վեճերի կարգավորում

Շրջահայաց կարգավորման հարցերին և ֆինանսական այլ խնդիրներին վերաբերող վեճերի քննախմբերը պետք է վեճի առարկա հանդիսացող առանձին ֆինանսական ծառայությանն առնչվող անհրաժեշտ փորձագիտություն ունենան:

## 5. Սահմանումներ

Սույն Հավելվածի նպատակներով՝

- ա) Ֆինանսական ծառայությունը ֆինանսական բնույթի ցանկացած ծառայություն է, որն առաջարկում է որևէ Անդամի՝ ֆինանսական ծառայություն մատուցողը: Ֆինանսական ծառայություններն ընդգրկում են բոլոր ապահովագրական և ապահովագրմանն առնչվող ծառայությունները, ինչպես նաև բոլոր դրամատնային և այլ ֆինանսական ծառայություններ (բացառությամբ ապահովագրությունը): Ֆինանսական ծառայություններն ընդգրկում են հետևյալ գործունեությունները.

*Ապահովագրական և ապահովագրման առնչվող ծառայություններ*

- i) Ուղղակի ապահովագրում (ներառյալ համապահովագրումը)
  - Ա) կյանքի,
  - Բ) ոչ կյանքի.
- ii) Վերաապահագրում և իրավունքների հետադարձ փոխանցում.
- iii) Ապահովագրական միջնորդություն, ինչպես վաճառամիջնորդությունն ու գործակալական գործունեությունը.
- iv) Ապահովագրմանը հարակից ծառայություններ, ինչպիսիք են խորհրդատվական, ապահովավիճակագրական, վտանգավորության գնահատման և հայցերի կարգավորման ծառայությունները:

*Դրամատեսային և այլ ֆինանսական ծառայություններ (բացի ապահովագրությունը)*

- v) Հասարակությունից ավանդների և հետ վճարման ենթակա այլ միջոցների ընդունում.
- vi) Բոլոր տեսակի փոխատվությունները, ներառյալ՝ սպառողական վարկը, գրավադրման փոխատվության վարկը, առևտրային գործարքների գործոնումն ու ֆինանսավորում.
- vii) Ֆինանսական վարձակալում.
- viii) Վճարումների և դրամային փոխանցումների բոլոր ծառայությունները, ներառյալ՝ վարկաբարտերը, վճարաբարտերը և հաշվեբարտերը, ճանապարհորդների և դրամատան վճարագրերը.
- ix) Երաշխիքներ և պարտավորություններ.
- x) Ներքոհիշյալի առթուվաճառք՝ սեփական միջոցներով կամ հաճախորդների հաշվին, անկախ այն բանից դա կատարվում է սակատանը, վաճառասեղանի շուկայում, թե այլ եղանակով.
  - Ա) փողի շուկայի գործիքների (ներառյալ՝ վճարագրերը, մուրհակները, ավանդների հավաստագրերը);
  - Բ) արտարժույթի.
  - Գ) ածանցյալ արտադրանքների, ներառյալ, բայց ոչ միայն տարկետներն ու ընտրանքները.
  - Դ) արտարժույթի փոխարժեքի և շահադրույթի գործիքների, ներառյալ՝ այնպիսի արտադրանքները, իչպիսիք են փոխանակումները, ապառնի փոխարժեքի վերաբերյալ համաձայնագրերը.
  - Ե) փոխանցելի արժեթղթերի.
  - Զ) այլ շրջանառելի գործիքների և ֆինանսական ունեցվածքի, ներառյալ՝ ձուլակրտորները.
- xi) Մասնակցություն բոլոր տեսակի արժեթղթերի թողարկմանը, ներառյալ՝ որպես գործակալ երաշխավորումը և տեղավորումը (թե պետականորեն, և թե մասնավոր կերպով) և այդպիսի թողարկումներին առնչվող ծառայությունների մատուցում.
- xii) Փողի վաճառամիջնորդություն.
- xiii) Ունեցվածքի կառավարում ինչպես կանխիկ կամ արժեթղթերի փաթեթի կառավարում, միացյալ ներդրումների կառավարման բոլոր տեսակներ, կենսաթոշակային հիմնադրամների կառավարում, պահպանման, պահոցային ու խնամառության ծառայություններ.
- xiv) Մարման և հաշվանցման ծառայություններ ֆինանսական ունեցվածքի համար, ներառյալ՝ արժեթղթերի, ածանցյալ և այլ շրջանառելի գործիքների.
- xv) Ֆինանսական տեղեկատվության և ֆինանսական տվյալների մշակման ու դրանց առնչվող համակարգչային ծրագրերի տրամադրում և փոխանցում ֆինանսական այլ ծառայություններ մատուցողների կողմից.

xvi) խորհրդատվական, միջնորդային և այլ հարակից ֆինանսական ծառայություններ «v»-«xv» ենթակետերում թվարկած բոլոր գործողությունների վերաբերյալ, ներառյալ՝ վարկի տեղեկանք և դրա վերլուծություն, ներդրումների և արժեթղթերի փաթեթի հետազոտում և խորհրդատվություն, խորհրդատվություն կլանումների և ընկերությունների վերակազմակերպման ու ռազմավարության վերաբերյալ:

- բ) Ֆինանսական ծառայություններ մատուցող նշանակում է Անդամի ֆիզիկական կամ իրավաբանական որևէ անձ, որը ցանկանում է մատուցել կամ մատուցում է ֆինանսական ծառայություններ, սակայն «ֆինանսական ծառայություն մատուցող» հասկացությունը պետական կազմակերպություն չի ներառում:
- գ) «Պետական կազմակերպություն» նշանակում է.
  - i) Անդամի կառավարություն, կենտրոնական դրամատուն կամ դրամավարկային մարմին, կամ էլ Անդամին պատկանող կամ դրա կողմից վերահսկվող որևէ կազմակերպություն, որը հիմնականում ներգրավված է կառավարական գործառնությունների կատարման կամ կառավարական նպատակներով գործունեության մեջ՝ բացի այնպիսի կազմակերպությունը, որը հիմնականում ներգրավված է առևտրային պայմաններով ֆինանսական ծառայությունների մատուցման մեջ, կամ՝
  - ii) մասնավոր կազմակերպություն, որը կատարում է այնպիսի գործառնություններ, ինչպիսիք սովորաբար կատարում են կենտրոնական դրամատունը կամ դրամավարկային մարմինն այդ գործառնություններն իրագործելիս:

### **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՅԱԿԵԼՎԱԾ**

1. Անկախ Համաձայնագրի II Հոդվածից և II Հոդվածից ազատումների մասին Հավելվածի 1-ին և 2-րդ կետերից, Անդամը կարող է ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից չորս ամիս հետո սկսվող 60 օրվա ընթացքում այդ Հավելվածի մեջ թվարկել ֆինանսական ծառայությունների վերաբերող այն միջոցները, որոնք չեն համապատասխանում Համաձայնագրի II Հոդվածի 1-ին կետին:
2. Անկախ Համաձայնագրի XXI Հոդվածից, Անդամը կարող է ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից չորս ամիս հետո սկսվող 60 օրվա ընթացքում բարելավել, փոփոխել կամ հանել իր ժամանակացանկում գրանցված՝ ֆինանսական ծառայություններին վերաբերող բոլոր հատուկ պարտավորությունները կամ դրանց մի մասը:
3. Ծառայությունների առևտրի խորհուրդն անհրաժեշտ ընթացակարգեր է սահմանում 1-ին և 2-րդ կետերի կիրառման համար:

### **ԾՈՎԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՈՒՐՋ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՅԱԿԵԼՎԱԾ**

1. II Հոդվածն ու II Հոդվածից ազատումների մասին Հավելվածը, ներառյալ՝ Հավելվածում ազգերի առավել բարենպաստության մոտեցմանը չհամապատասխանող ցանկացած միջոց թվարկելու պահանջը, որն Անդամը կպահպանի, միջազգային առաքումների, հարակից ծառայությունների և նավահանգստային հարմարությունների մատչելիության և օգտագործման համար ուժի մեջ են մտնում միայն՝
  - ա) իրականացման օրը, որ պետք է որոշվի Ծովային փոխադրման ծառայությունների շուրջ բանակցությունների մասին Նախարարական որոշման 4-րդ կետի համաձայն, կամ՝
  - բ) բանակցությունները չհաջողվելու դեպքում՝ այդ Որոշմամբ նախատեսված Ծովային փոխադրման ծառայությունների հարցերով բանակցային խմբի եզրափակիչ զեկույցի օրը:
2. 1-ին կետը չի տարածվում Անդամի ժամանակացանկում գրանցված՝ ծովային փոխադրման ծառայությունների վերաբերյալ որևէ հատուկ պարտավորության:
3. 1-ին կետում նշված բանակցությունների ավարտից սկսած և մինչև իրականացման օրը Անդամը կարող է բարելավել և փոփոխել կամ հանել այդ ոլորտում իր բոլոր հատուկ պարտավորությունները կամ դրանց մի մասը՝ առանց փոխհատուցում առաջարկելու՝ անկախ XXI Հոդվածի դրույթներից:

# ՅԵՌԱՅԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՅԱՎԵԼՎԱԾ

## 1. Նպատակներ

Ընդունելով հեռահաղորդակցությունների ծառայությունների ոլորտի առանձնահատկությունները և, մասնավորապես, դրա երկակի դերը որպես տնտեսական գործունեության առանձին ոլորտ և որպես տնտեսական այլ գործունեությունների հիմքում ընկած փոխադրամիջոց՝ Անդամները համաձայնության են եկել հետևյալ Յավելվածի շուրջ՝ նպատակ ունենալով զարգացնել սույն Յամաձայնագրի՝ հանրային հեռահաղորդակցությունների փոխադրման ցանցերի և ծառայությունների մատչելիության և օգտագործման վրա ազդեցություն ունեցող միջոցների վերաբերյալ դրույթները: Յամապատասխանաբար, սույն Յավելվածը Յամաձայնագրի համար նախատեսում է ծանոթագրություններ և լրացուցիչ դրույթներ:

## 2. Շրջանակներ

- ա) Սույն Յավելվածը տարածվում է Անդամի բոլոր այն միջոցների վրա, որոնք ազդում են հանրային հեռահաղորդակցությունների փոխադրման ցանցերի և ծառայությունների մատչելիության և օգտագործման վրա<sup>14</sup>:
- բ) Սույն Յավելվածը չի տարածվում այն միջոցների վրա, որոնք ազդում են ռադիո կամ հեռուստատեսային ծրագրերի մալուխային կամ հեռարձակման միջոցով բաշխման վրա:
- գ) Սույն Յավելվածում ոչինչ չի մեկնաբանվում այնպես, թե՛
  - i) որևէ Անդամից պահանջում է որևէ այլ Անդամի՝ ծառայություն մատուցողին թույլատրել ստեղծել, կառուցել, ձեռք բերել, վարձակալել, շահագործել կամ մատուցել հեռահաղորդակցությունների ցանցեր կամ ծառայություններ, որոնք այլ են, քան իր Ժամանակացանկում նախատեսվածները, կամ՝
  - ii) որևէ Անդամից պահանջում է (կամ որևէ Անդամից պահանջում է իր իրավասության տակ գտնվող ծառայություն մատուցողներին պարտավորեցնել) ստեղծել, կառուցել, ձեռք բերել, վարձակալել, շահագործել կամ մատուցել հեռահաղորդակցությունների փոխադրման այնպիսի ցանցեր կամ այնպիսի ծառայություններ, որոնք ընդհանրական հիմունքով հասարակությանը չեն առաջարկվում:

## 3. Սահմանումներ

Սույն Յավելվածի նպատակներով՝

- ա) «հեռահաղորդակցություններ» նշանակում է ազդանշանների հաղորդում և ընդունում էլեկտրամագնիսական ցանկացած միջոցներով:
- բ) «Հանրային հեռահաղորդակցությունների փոխադրման ծառայություն» նշանակում է հեռահաղորդակցությունների փոխադրման ցանկացած ծառայություն, որն Անդամը պարզորոշ կերպով կամ գործնականորեն պահանջում է ընդհանրական հիմունքով առաջարկել հանրությանը: Այդ ծառայությունները կարող են այլոց թվում ներառել հեռագրակապը, հեռախոսակապը, տելեքսային կապը և տվյալների փոխանցումը, որը սովորաբար ընդգրկում է հաճախորդի մատուցած տեղեկության փոխանցումն իրական ժամանակում՝ երկու կամ ավելի կետերի միջև՝ մի ծայրից մինչև մյուսն առանց փոփոխելու հաճախորդի տեղեկության ձևը կամ բովանդակությունը:
- գ) «Հանրային հեռահաղորդակցությունների փոխադրման ցանց» նշանակում է հանրային հեռահաղորդակցությունների ենթակառուցվածք, որը ցանցի սահմանված վերջնակետերի միջև հեռահաղորդակցությունների հնարավորություն է տալիս:
- դ) «Ներկազմակերպային հաղորդակցություններ» նշանակում է հեռահաղորդակցություններ, որոնց միջոցով ընկերությունը հաղորդակցվում է ընկերության ներսում կամ իր դուստր ձեռնարկությունների, մասնաձյուղերի և, հաշվի առնելով Անդամի ներքին օրենքներն ու կանոնակարգերը, ընկերակիցների հետ կամ միջև: Սույն նպատակներով «դուստր ձեռնարկությունները»,

<sup>14</sup> Յասկացվում է, որ սույն կետը նշանակում է, որ յուրաքանչյուր Անդամ ապահովում է, որ սույն Յավելվածի պարտավորությունները տարածվեն հանրային հեռահաղորդակցությունների փոխադրման ցանցեր ու ծառայություններ մատուցողների վրա՝ բոլոր անհրաժեշտ միջոցներով:

«մասնաճյուղերը» և կիրառելիության դեպքում՝ «ընկերակիցները» սահմանվում են յուրաքանչյուր Անդամի կողմից: Սույն Հավելվածում «ներկազմակերպական հաղորդակցությունները» բացառում են առևտրային և ոչ առևտրային այն ծառայությունները, որոնք մատուցվում են այն ընկերություններին, որոնք փոխկապակցված դուստր ընկերություններ, մասնաճյուղեր կամ ընկերակիցներ չեն, կամ այն ծառայությունները, որոնք առաջարկվում են հաճախորդներին կամ հնարավոր հաճախորդներին:

- ե) Սույն Հավելվածի որևէ կետին կամ ենթակետին արված ցանկացած հղում ներառում է դրա բոլոր ստորաբաժանումները:

#### 4. Հրապարակայնություն

Համաձայնագրի III Հոդվածը կիրառելիս յուրաքանչյուր Անդամ ապահովում է, որ հանրային հեռահաղորդակցությունների փոխադրման ցանցերի և ծառայությունների մատչելիության և օգտագործման վրա ազդող պայմանների վերաբերյալ համապատասխան տեղեկությունները հրապարակայնորեն մատչելի լինեն, ներառյալ՝ սակագները և ծառայության այլ պայմանները, այդ ցանցերի և ծառայությունների հետ տեխնիկական փոխներգործության յուրահատկությունները, այդ մատչելիության և օգտագործման վրա ազդող համօրինակների (ստանդարտների) պատրաստման և ընդունման համար պատասխանատու մարմինների վերաբերյալ տեղեկությունները, վերջնասարքի կամ այլ սարքավորումների կցահարմարանքներին վերաբերող պայմանները և ծանուցման, գրանցման և լիցենզավորման պահանջները, եթե այդպիսիք գոյություն ունեն:

- 5. Հանրային հեռահաղորդակցությունների փոխադրման ցանցերի և ծառայությունների մատչելիություն և օգտագործում

- ա) Յուրաքանչյուր Անդամ ապահովում է, որ իր ժամանակացանկում ընդգրկված ծառայություն մատուցելու համար ցանկացած այլ Անդամի՝ ցանկացած ծառայություն մատուցողի թույլատրված մուտք գործել և օգտագործել հանրային հեռահաղորդակցությունների փոխադրման ցանցերն ու ծառայությունները՝ խելամիտ ու ոչ խտրական պայմաններով: Այս պարտավորությունը կիրարկվում է, մասնավորապես, «բ»-«գ» կետերի միջոցով<sup>15</sup>:

- բ) Յուրաքանչյուր Անդամ ապահովում է, որ ցանկացած այլ Անդամի՝ ծառայություն մատուցողները մուտք ունենան և օգտագործեն այդ Անդամի սահմաններից ներս կամ սահմանի վրայով առաջարկվող հանրային հեռահաղորդակցությունների փոխադրման ցանցերն ու ծառայությունները, ներառյալ՝ մասնավոր հիմունքով վարձակալված շրջագծերը, և այս նպատակով, հաշվի առնելով «ե» և «գ» կետերը, երաշխավորում է, որ այդ մատուցողներին թույլատրվի՝

- i) գնել կամ վարձակալել ու կցել վերջնասարք կամ այլ սարքավորումներ, որոնք փոխներգործում են ցանցի հետ և անհրաժեշտ են մատուցողի՝ ծառայությունները մատուցելու համար.
- ii) փոխադարձ կապ հաստատել մասնավոր հիմունքով վարձակալված կամ մասնավոր սեփականությամբ շրջագծերի և հանրային հեռահաղորդակցությունների փոխադրման ցանցերի ու ծառայությունների կամ մեկ այլ ծառայություն մատուցողի կողմից մասնավոր հիմունքով վարձակալված կամ դրան պատկանող շրջագծերի միջև, և՝
- iii) ցանկացած ծառայության մատուցման ժամանակ օգտագործել ծառայություն մատուցողների ընտրած գործառնական ընթացակարգերը, բացի նրանից, որ անհրաժեշտ է հանրության համար ընդհանրական հիմունքով հեռահաղորդակցությունների փոխադրման ցանցերի ու ծառայությունների մատչելիությունն ապահովելու համար:

- գ) Յուրաքանչյուր Անդամ ապահովում է, որ ցանկացած այլ Անդամի՝ ծառայություն մատուցողները կարողանան հանրային հեռահաղորդակցությունների փոխադրման ցանցերն ու ծառայություններն օգտագործել սահմաններից ներս ու դրա վրայով տեղեկությունների տեղաշարժի համար, ներառյալ՝ այդ ծառայություն մատուցողների ներկազմակերպական հաղորդակցությունների համար և ցանկացած Անդամի տարածքում տեղեկատվական շտեմարաններում պարունակվող

<sup>15</sup> Հասկացվում է, որ «ոչ խտրական» հասկացությունը վերաբերում է Համաձայնագրով սահմանված՝ ազգերի առավել բարենպաստության և ազգային մոտեցումներին, ինչպես նաև արտացոլում է հասկացության գործածությունն առանձին ոլորտի առկայությամբ, որը նշանակում է «ոչ պակաս բարենպաստ պայմաններ, քան այն պայմանները, որոնք նման հանգամանքներում տրամադրվում են հանրային հեռահաղորդակցությունների փոխադրման նման ցանցերի և ծառայությունների ցանկացած այլ օգտագործողի»:

կամ այլ կերպ մեքենայով ընթանելի ձևով կուտակված տեղեկությունների մուտքի համար: Անդամի ցանկացած նոր կամ փոփոխված միջոց, որը զգալիորեն ազդում է այդ օգտագործման վրա, ծանուցվում է և խորհրդակցության առարկա է՝ համաձայն Համաձայնագրի համապատասխան դրույթների:

- դ) Անկախ նախորդ կետից, Անդամը կարող է այնպիսի միջոցներ ձեռնարկել, ինչպիսիք անհրաժեշտ են հաղորդակցությունների անվտանգությունն ու գաղտնիությունը ապահովելու համար՝ հաշվի առնելով այն պահանջը, որ այդ միջոցները չեն կիրարկվում այնպիսի եղանակով, որը կարող է ծառայությունների առևտրի համար կամայական կամ չարդարացված խտրականության կամ քողարկված սահմանափակման միջոց կազմել:
- ե) Յուրաքանչյուր Անդամ ապահովում է, որ հանրային հեռահաղորդակցությունների փոխադրման ցանցերի և ծառայությունների մատչելիության և օգտագործման վրա ոչ մի պայման չդրվի՝ բացի նրանցից, որոնք անհրաժեշտ են՝
  - i) պաշտպանելու հանրային հեռահաղորդակցությունների փոխադրման ցանցեր ու ծառայություններ մատուցողների՝ հանրային ծառայության մատուցման հետ կապված պարտականությունները, մասնավորապես դրանց ցանցերն ու ծառայությունները հանրությանն ընդհանրական հիմունքով մատչելի դարձնելու դրանց կարողությունը.
  - ii) պաշտպանելու հանրային հեռահաղորդակցությունների փոխադրման ցանցերի և ծառայությունների տեխնիկական ամբողջականությունը, կամ՝
  - iii) ապահովելու, որ ցանկացած այլ Անդամի՝ ծառայություն մատուցողները ծառայություններ չմատուցեն, եթե դա չի թույլատրվում Անդամի Ժամանակացանկում նշված պարտավորությունների համաձայն:
- զ) Պայմանով, որ դրանք բավարարում են «ե» կետում շարադրված չափանիշներին, դեպի հանրային հեռահաղորդակցությունների փոխադրման ցանցեր ու ծառայություններ մուտքի և դրանց օգտագործման համար պայմանները կարող են ներառել.
  - i) սահմանափակումներ՝ այդ ծառայությունների վերավաճառքի կամ համատեղ օգտագործման համար.
  - ii) այդ ցանցերի և ծառայությունների հետ փոխադարձ կապ հաստատելու համար հատկորոշված փոխներգործող սարքեր օգտագործելու պահանջ, ներառյալ՝ փոխներգործության ընթացակարգերը.
  - iii) անհրաժեշտության դեպքում, պահանջներ՝ այդպիսի ծառայությունների փոխգործունակության և 7«ա» կետում շարադրված նպատակների իրագործումը խրախուսելու համար;
  - iv) ցանցի հետ փոխներգործող վերջնասարքի կամ այլ սարքավորումների տեսակի հաստատում, և տեխնիկական պահանջներ՝ այդ սարքավորումներն այդ ցանցերին կցելու վերաբերյալ.
  - v) սահմանափակումներ՝ մասնավոր հիմունքով վարձակալված կամ մասնավոր սեփականությանը շրջագծերի և այդ ցանցերի կամ ծառայությունների կամ ծառայության մեկ այլ մատուցողի կողմից վարձակալված կամ դրան պատկանող շրջագծերի միջև փոխադարձ կապ հաստատելու վրա, կամ՝
  - vi) ծանուցում, գրանցում ու լիցենզավորում:
- է) Անկախ սույն բաժնի նախորդ կետերից, զարգացող Անդամ երկիրը, իր զարգացման մակարդակին համապատասխան, կարող է հանրային հեռահաղորդակցությունների փոխադրման ցանցերի և ծառայությունների մուտքի և օգտագործման վրա խելամիտ պայմաններ դնել, որոնք անհրաժեշտ են իր հեռահաղորդակցությունների ներքին ենթակառուցվածքի և ծառայության կարողությունների հզորացման և հեռահաղորդակցությունների ծառայությունների միջազգային առևտրում իր մասնակցության ընդլայնման համար: Այդ պայմանները հատկանշվում են Անդամի Ժամանակացանկում:

6. Տեխնիկական համագործակցություն

- ա) Անդամներն ընդունում են, որ հեռահաղորդակցությունների արդյունավետ, բարձրակարգ ենթակառուցվածքի առկայությունը երկրներում, հատկապես զարգացող երկրներում, էական է դրանց ծառայությունների առևտրի ընդլայնման համար: Այդ նպատակով Անդամները խթանում և խրախուսում են զարգացած ու զարգացող երկրների և դրանց հեռահաղորդակցությունների փոխադրման ցանցեր ու ծառայություններ մատուցողների և այլ կազմակերպությունների մասնակցությունը՝ առավելագույն հնարավորությունների չափով, միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների, ներառյալ՝ Միջազգային հեռահաղորդակցությունների միության, Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի և Վերակառուցման և զարգացման միջազգային դրամատան զարգացման ծրագրերին:
- բ) Անդամները խրախուսում են զարգացող երկրների միջև հեռահաղորդակցությունների հարցերով համագործակցությունը՝ միջազգային, տարածաշրջանային և ենթատարածաշրջանային մակարդակներով, և աջակցում են դրան:
- գ) Անդամները, համագործակցելով համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ, հնարավորության դեպքում զարգացող երկրների համար մատչելի են դարձնում հեռահաղորդակցությունների ծառայությունների և հեռահաղորդակցությունների ու տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումների վերաբերյալ տեղեկությունները՝ նպատակ ունենալով աջակցել դրանց ներքին հեռահաղորդակցությունների ծառայությունների ոլորտի ամրապլնմանը:
- դ) Անդամները հատուկ ուշադրություն են դարձնում առավել թույլ զարգացած երկրների համար այն հնարավորություններին, որոնք հեռահաղորդակցությունների ծառայությունների օտարերկրյա մատուցողներին խրախուսում են աջակցել տեխնոլոգիաների փոխանցմանը, ուսումնավարժական և այլ գործունեություններին, որոնք օժանդակում են դրանց հեռահաղորդակցությունների ենթակառուցվածքի զարգացմանն ու հեռահաղորդակցությունների ծառայությունների դրանց առևտրի ընդլայնմանը:

7. Հարաբերություն միջազգային այլ կազմակերպությունների և համաձայնագրերի հետ

- ա) Անդամներն ընդունում են հեռահաղորդակցությունների ցանցերի և ծառայությունների համաշխարհային համատեղելիության և փոխգործունակության համար միջազգային համօրինակների կարևորությունը և հանձն են առնում խթանել այդ համօրինակները՝ համապատասխան միջազգային մարմինների, ներառյալ՝ Միջազգային հեռահաղորդակցությունների միության և Համօրինակացման (Ստանդարտացման) միջազգային կազմակերպության աշխատանքի միջոցով:
- բ) Անդամներն ընդունում են միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների և համաձայնագրերի, մասնավորապես, Միջազգային հեռահաղորդակցությունների միության դերը ներքին ու համաշխարհային հեռահաղորդակցությունների ծառայությունների արդյունավետ աշխատանքի ապահովման հարցում: Համապատասխան դեպքերում, Անդամներն անհրաժեշտ պայմանավորվածություններ ձեռք են բերում այդ կազմակերպությունների հետ սույն Հավելվածի իրականացումից բխող խնդիրների շուրջ խորհրդակցությունների անցկացման համար:

**ՀԻՄՆԱԿԱՆ ՀԵՌԱՅԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՋ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ**

- 1. II Հոդվածն ու II Հոդվածից ազատումների մասին Հավելվածը, ներառյալ՝ Հավելվածում ազգերի առավել բարենպաստության մոտեցմանը չհամապատասխանող ցանկացած միջոց թվարկելու պահանջը, որն Անդամը կպահպանի, հիմնական հեռահաղորդակցությունների համար ուժի մեջ են մտնում միայն՝
  - ա) իրականացման օրը, որ պետք է որոշվի Հիմնական հեռահաղորդակցությունների շուրջ բանակցությունների մասին Նախարարական որոշման 5-րդ կետի համաձայն, կամ՝
  - բ) բանակցությունները չհաջողվելու դեպքում, այդ Որոշմամբ նախատեսված՝ Հիմնական հեռահաղորդակցությունների հարցերով բանակցային խմբի եզրափակիչ զեկույցի օրը:
- 2. 1-ին կետը չի տարածվում Անդամի Ժամանակացանկում գրանցված՝ հիմնական հեռահաղորդակցությունների վերաբերյալ որևէ հատուկ պարտավորության վրա:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՏՈՒԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՑԱՆԿ**



**GLOBAL SPC**

BUSINESS & LEGAL CONSULTING

Գլոբալ Էս-Փի-Սի, Մոսկովյան 24, #1, Երևան, ԶԶ 0002,  
հեռ. (374 10) 52 08 51, Էլ-փոստ. [info@globalspc.am](mailto:info@globalspc.am), Էլ կայք. [www.globalspc.am](http://www.globalspc.am)

